


Ришти

090580 83



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՒՒՆ



- 1.- * * * Կարօ Սասունի
- 2.- Մ. ՄԱՐՈՒԹԵԱՆ Կարօ Սասունի
— մահուան 5րդ տարեկիցի առթիւ —
- 8.- ՀԱՄԱՍՏԵՂ 'Նամակ' Կարօ Սասունիին
- 9.- ԵՒ. ՊՅԱՆՆԵԱՆ Մարգը, մարգը...
- 10.- Լ. ՓԻՐԱՆՏԵԼԼՕ Վեց անճամարութիւններ,
արոմբ հեղինակ մը կը փնտռեն
— հայացուց՝ Բ. Փափագեան —
- 22.- ԱՐՄԱՆՏ Իմ նոր քարդի
- 23.- Ա. ՍԱՆՆԵԱՆ Բնատուրք
- 29.- * * * Վահագն Դարբեան
- 30.- Վ. ԳԱԻԹԵԱՆ Լոյս առաւօտի
- 34.- Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարզեւեան
- 50.- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Բանաստեղծութիւններ
- 51.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Հայրենի գեղամկարիչ
Գ. հանջեանի հետ
- 61.- Շ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ Ձանքաւորի գրականութեան
' ալլաշխարհը
- 71.- ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ Նամակներ

Բազմ

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՐՈՒՆՍԻ

ԻՐ. ՅԱՐՔ. ԲԻՒՅ ԳՆՈՑՈՒ 1982 ԳԼԽԲԱՆՈ



Ուղիղ երեք ասարի անկողնոյ ծառայելէ ետք, 1977 Օգոստոսին Կարո Սասունի բաժնուկեցաւ մեզ մէ, կեանքին խանկելով յիշողութեամբ ու զորեկրով շնորհ էր միւս անձը:

Քննադատի առաջին թիւէն մինչեւ անոր տասներկուերորդ ասրուան վերջին թիւը, ան տարաւ վարել իմ քաղցրի պայտօնը, համարելով զայն՝ «Ֆազիլներ», իր սրտին ամենէն աւելի մօտ մեծարկիւնքին մէկը, անոր գոյրտեման համար ասածան ամէնօրեայ «Հոգածութեան սարնիւր» սերտ կապիւր հաստատելով մօտիկ թէ հետաւոր բոլոր աշխատակիցներուն հետ:

Կ. Սասունի բառին լայն ստուածով ներկայութիւն էր մեր մէջ, զրականօրէն ոչ սխալան իրաւաստականի, բայց անպակաս սգեւորութեամբ, մենին ու պզտիկին մէջ բուրբ տրամադրութիւններ անկողնոյ շէջ մեծանշանութեամբ:

Ոնք եւս մէկն էր այն աշխատ սերունդին ներկայացուցիչներէն, որոնք յայտնաբերեցին մէկէ աւելի բնութանկութիւններ եւ զօրեցին ըստ մեր մտղովորդի հրամայական պահանջներուն, յիշափոխական, կուսակցական, զաղափարական, հրապարակազրական թէ զրական մարզերուն մէջ, զրեթէ հաւասար ուժով:

Արեւմտեան թէ Արեւելեան Հայաստանի մէջ, ինչպէս նաեւ Սփիւռքի տարածքին՝ յիշեալ մարզերին ներս թաւալուց մեծ իրողարժութիւններուն

ուղղակիորէն ժանտակից տիպարները եզան անոնք եւ, այդ իսկ հանգամանքով՝ իրենց էջերը եղան անմիջական շնորհ, ու համարուած ու շահազրդութեամբ փնտաուեցան ընթերցող բոլոր խաւերէն:

Վերջերս, դերասան ու զրոյ Մանուէլ Մարութեան գրեւ առաւ Կ. Սասունի կապուած յուշագրական իր մէկ հեռաբարբական գրութիւնը, զոր կը ներկայացնենք յաջորդ էջերուն, թարմացնելու համար վաստակաւոր մեր ընկերոջ յիշատակը:

LIBRARY OF THE
 ԳՐԱՊԵՏԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐՈՆ
 ՀԱՅՏԱՆ
 2002-2003
 digitized by 0593-84p
 A.R.A.R.®

Մ. Մ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

<p>Կ Ա Ր Օ</p> <p>Ս Ա Ս ՈՒ Ն Ի</p>	<p>(ՄԱՀՈՒԱՆ ԵՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻԻ)</p>
	<p>(ՓԱՎՈՒԱԾ ՎԱՐԱԳՈՅՐԻ ԱՌՋԵԻ) (ՉՏՊԱԳՐՈՒԱԾ Բ. ՀԱՏՈՐԻՑ)</p>

Իր անունը լսել էի, բայց ո՛չ տեսել եւ ոչ էլ ծանօթ էի :

Ձուոյին լաւ ծանօթ էի, երբ նրան հանդիպում էի, եւ մի խնդրի շուրջ գիտամամբ վիճում էի, Ձուոն միշտ ջղայնացած տեսւմ էր .

— Զիտ, մեր Կարոն էդիկ լաւ գիտէ : Հալա սապր արա, ինոր հարցնեմ :

Ձուոն յանախ տխրում էր եւ յիշում էր իր ազատ լեռները . . .

— Հո՛ւ . . . էնտի՛ ապուռ (ամօթ) կար, խայտիթիւն կար, քրիստոնէութիւն կար, կնիկները էսպէս պալտրը-չալազ (կիսամերկ) ման շէին դալիս, հէլ կը տեսնէի՛ք, որ մարդ ու կին իրար թեւ մտած ման դային : Մեզ մօտ մարդը յեռէջից (առաջից) կը զէլէր ու կնիկը լէ՛ իրեք արշին (երեք մեթր) ետեւից կողար : Կինը սղամարդու հետ սեղան շէր նստեր : Իստեղ առաջ կինը պիտի նստի յետոյ տըղամարդը : Աշխարհը դարսուել է :

Մի անգամ Ձուոյին տարել էին մի հարսանիքի, Ըստ երեսոյթին, հարսանիք անողները, «եւրօպականացած» մարդիկ են լինում : Սկսել է պարը : Եւ Ձուոն ա-

ռաջին անգամ է տեսնում, որ մարդ ու կին իրար գրկած պարում են : Մի ջիւ նստից յետոյ՝ փախել է դուրսը :

— Մօ, քաբույի ճիճեր, էդ ի՞նչ պար է, պար ըսածդ՝ քոչարին է, Մշոյ խըռը, ո՛ւր է մեր կոնտը (շուրջ-պար), ամէն մարդ մի կնիկ խտած, մէջքը պիտ սեղմած, էրեսը էրեսի տուած կը խաղան : Առաջ կարծեցի, թէ իրենց կնիկներն են, յետոյ հասկացայ, որ Կարօ կը պարի Յովոյի կնկան հետ, Յովոն կը պարի Միոյի կնկան հետ . . . ապուռ չունեն : Թողի ու փախայ : Ձէ, ասի, էրթամ մեր թոփալ Կարոն գտնեմ, էս ամէնը պատեմ, վերջընունք մեր ժողովուրդը, էրթանք մի պիտպան (անմարդաբնակ) տեղ, մի գիւղ, մի քաղաք շինենք : Լծկան եւ գութան ունենանք, Կարոն լէ կը կարգենք մեզ իշխանաւոր, պատուով-նամուսով կ'ապրինք, մինչեւ արեւ բացուի ու զնանք մեր աւեր վաթանը :

Ձուոյի հետ շատ եմ եղել եւ Մատուշիի հետ ինձ ծանօթացնողն էլ եղել է Ձուոն :

— Կարօ, էս լէ մեր ջահիլ լաւ ընկեր

Մանուէլ, դերձաստանի անունն էլ Մարութեան: Աէ, անպայման իտոնք (ասոնք) Տարօնից եկած կը լինեն. . . Մարաթուկի կողմերից, էդ է, որ արիւնս քաշում է: Մեր Հայկոյի ընկերն է (Հայկ Ասատըրեան), համա Հայկոն սատանայից եօթ օր առաջ է ծնուել՝ Մանուէլը Գրիստոսի կընունքից եօթ օր առաջ է ծնուել ու Գրիստոսի կընունքին է կնքուել:

Մանօթացանք:

Սասունին մի քաղցր ժպիտ ունէր իր դէմքին եւ դիտէր մարդկանց դրաւել:

— Սիրելի Մարութեան, քանի որ Ձոն քեզ հաւանել է, նշանակում է, որ լաւ: Չորոն ամէն մարդու, մա՛նաւանդ եւ՝ տասարդներին շատ չի սիրում եւ նընց փիլիճ է անուանում:

— Մի ժամանակ, Հայկին եւ ինձ՝ «փիլիճ» էր անուանում:

— Խօկուտ (հօգիտ) մեղք մի արա, մի անգամ եմ ասել եւ յետոյ փոշմանել եմ:

— Շատ ուրախ եմ, — ասաց Սասունին, — յաճախ Հանդիպիր ինձ:

Այս խօսակցութիւնը տեղի էր ունենում Շիրակում (այժմու Ղենիական), երբ կողքի աղահանքը դրաւելու ժամանակ, հին Հայդուկ Հախոն սպանուել էր՝ բերել էին թաղելու:

Արտաքինով, Սասունին ղեկեցիկ արդամարդ էր, բարձրահասակ, նիւարակազմ, հաճելի խօսելու մեւ ունէր, միայն երբ ուզում էր քաշիլ, ասանց փայտի չէր կարող, մի օտքը կուռում վերաւորուել էր եւ լաւ չէր բուժուել: Հակառակորդներ եւ նրան չտիրողներ նրան անուանում էին «Թոփալ կարօ»: Բայց իրեն սիրողներն ու յարգողները, որոնց թիւը շատ էր, նրա կաշուութիւնը չէին տեսնում:

Սասունին լաւ հոնտոր էր, իսկ վերջին տարիներին՝ նա տաղանդաւոր գրողի համբաւ չահեց եւ իր գրուածքները իրապէս արժէքաւոր եւ մնայուն գործեր են ու պիտի ապրեն:

Յանախ պատահում էինք եւ միշտ էլ ընկերական ջերմ գերաբերմունք էր ցոյց տալիս:

Դէպքերը իրար հրելով եկան ու ան-

ցան եւ մի օր էլ տեսնք, մենք դառնում ենք Արարի միւտ ափում: Շատ եմ գրել այդ մասին, կրկնել չեմ ուզում:

ՏԱՐԱԳԻՐՆԵՐ ԷՐՆՔ...

Տարազիբ բառը բաղկացած է եօթ տուներէր, բայց իր մէջ պարունակում է եօթից աւելի տառապանքներ՝

- Տարազիբ՝ Անհայրենիք:
- Տարազիբ՝ Անապատան
- Տարազիբ՝ Թափառական:
- Տարազիբ՝ Շրջմուխի:
- Տարազիբ՝ Անապագայ:
- Տարազիբ՝ Անտոյդ վիճակ:
- Տարազիբ՝ Իրաւազուրի:

Դեռ կարելի է շատ բառեր դառնել, բայց այսքան էլ բաւական է. Բայց դըլխաւորը մտացանք... ԳԱՂԹԱԿԱՆ, որ շատ յաճախ, խփում էին մեր ճակատին, ինչպէս հարսանիքում նուազածուներ ճակատին են կպցնում արծաթ կամ թուղթ դրամներ եւ ասում՝ շաքաշ:

Բայց մենք պահեցինք «Տարազիբ» բառը, որ աւելի պատուաւոր էինք կարծում, ճիշդ այնպէս, երբ մի օր մէկը Թեհրանում հարցնում է նախ Բաղին.

— Նուա Բաղի, լսել ենք աղջիկդ նըշանել ես մի շոֆերի հետ:

— Ասողի բերանը չորանայ, — զայբացած պատասխանում է նախ Բաղի, — իմ փեսան շոֆեր չէ, այլ՝ դրայվէր, հասկացա՞ր, դրայվէր, — կարծելով շոֆերի եւ դրայվէրի միջեւ շատ մեծ տարբերութիւն կայ:

Դրա համար էլ մենք զայրանում էինք, երբ ասում էին «Գաղթական», բայց լսում եւ ժպտում էինք, երբ ասում էին «Տարազիբ»:

Մեր ականաւոր ընկերներից մէկը այնքան սիրեց այդ բառը, որ իր յօդաւածներէր տակ ստորագրում էր «Տարազիբ»: Բայց իրականութեան մէջ, մենք անտէր-անտիրական մարդիկ էինք: Բայց այդ բոլորով հանդերձ, այն օրերին մեր հաւատքը աւելի ուժեղ էր, քան հիմա:

Թաւրիզում յաճախ պատահում էի կարօ Սասունու: Նա պահած էր իր հոգեկան կորուզը եւ յուսահատներէր շարժեց հետու էր:

Թաւրիզում ներկայացումներ էինք տալիս: Նա միշտ ներկայ էր լինում: Վերջաւորութեան դալիս էր կուլիսները եւ ինձ ասում էր.

— Ապրե՛՛ն: Մշակիր ձիւքդ, ապա-
գայ ունես. դիտեմ, որ մի տեղ պիտի
հասնես:

Մի օր ընկերներէցս մէկը ասաց.
— Վաղը չէ՛ միւս օրը, ժամը Երեւ,
եկ այսինչ տեղը: Հինգ աւանդներս հը-
րաւիրուած ենք:

— Ո՞վ է հրաւիրել:

— Կուսակցական մարմիններէց մէ-

... Գնացինք: Մօտաւորապէս եօթը հո-
նատած էին մի քննակում: Միտախո-
տի ծուխը ամպ էր կապել եւ դժուար էր
նստողներին զանազանել: Մի բոպէ յի-
ոյ նշմարեցի, որ նստողներէ մէջն էր
նաեւ Սասունին:

— Քե՞զ էլ են կանչել, — ասաց Սա-
սունին:

— Կանչել են, բայց թէ ինչո՞ւ հա-
մար՝ չգիտեմ:

— Եղիշ, մի՞թէ Սանուէլի անունը
այդ ցանկում կար:

— Վ.ն էր առաջարկել:

— Մի բոպէ չէ՞ք մտածել, որ նա
չի կարող դնալ:

— Ինչո՞ւ:

— Պատճառներ ունեմ, որ հիմա չեմ
կարող ասել:

— Նախ յայտնե՛ք նպատակը, գուցէ
ինքը ցանկանայ:

— Ցանկանայ թէ ոչ, ես դէմ եմ նրա
թեկնածութեան:

— Պատճա՞ռը:

— Հիմա չեմ կարող ասել, Եթէ ես
առաջուց իմանայի, չէի թողնի նրա թեկ-
նածութիւնը դնէիք:

Իմ գրութիւնը անտանելի էր: Ինչո՞ւ
համար էին ինձ կանչել: Կարո՞ն ինչո՞ւ
դէմ էր...: Ձկարողացայ այս պաղտնի-
քը լուծել:

— Եթէ ձեր մէջ դէմ եղողներ կան,
թէ եւ ես չգիտեմ, թէ ի՞նչ պարտականու-
թեան համար է, ես կը հետանամ:

Նստողներէց մէկը ասաց.

— Նախ լսենք Կարոյին, թէ ինչո՞ւ
է դէմ:

— Այս հրուիրուած ընկերներէ ներ-
կայութեան չեմ ասում, երբ մենք առան-
ձին կը մնանք՝ ես ձեզ կը բացատրեմ:

— Ներեցէ՛ք, ընկերներ, ուրեմն ես
գնում եմ:

Վերաւորուած էի Սասունիէց:

— Լսի՛ր, Մանուէլ, ես քեզ յետոյ
կը բացատրեմ, — ասաց Սասունին:

— Պէտք չունեմ բացատրութեան:
Ծտեսութիւն:

Իուրս կայ սենեակից:

Աստիճանների մօտ, անապարանքով
ինձ հասաւ Սասունին եւ ասաց.

— Մի բոպէ ոպասիր: Վաղը ժամը
տասին, եկ ինձ մօտ, քեզ կը ոպասեմ:
Տունս գիտես, Ձուշանաս: Իսկ հիմա ա-
ռանց շղայնութեան դնա՛, երբ պատճառը
իմանաս, պիտի տեսնես, որ իրաւացի եմ:
Հասկացա՞ր:

— Այո:

— Ուրեմն վաղ ժամը 10ին:

— Շատ լաւ:

Յաջորդ առաւօտ ժամը 10ին դնացի
Սասունու մօտ: Սասունին՝ փիփղ բեր-
նին, ժպիտը դէմքին՝ մօտեցաւ ինձ եւ
ասաց.

— Գիտեմ, որ ինձանից նեղացել ես,
գուցէ իրաւունք ունես, որովհետեւ պատ-
ճառը քեզ յայտնի չէ: Մերոնք ուզում են
մի քանի երիտասարդներ զրկել Երկիր եւ
այնտեղ մնացած մեր ընկերները հաւա-
քել, կուսակցութիւնը ոտքի հանել, ի
հարկէ՛ ընդլատակեայ եւ մեզ հետ կա-
պել: Նախ ասեմ, որ ես հակառակ եմ
այդ ծրագրին: Աւելորդ աշխատանք եւ
նոր զոհեր: Փորձերը ցոյց են տուել:
Մենք պնացողներին կհանքի հետ ենք խա-
ղում: Վտանգում ենք նաեւ այնտեղի մեր
ընկերներին, որոնք դեռ ազատ են մնա-
ցել: Սակայն իմ տեսակէտը մերժուեցաւ:
Իսկ քո վերաբերմամբ, ես ուղղակի դէմ
եմ, դիտե՛ս ինչու: Քեզ շատերն են նա-
նաչում, որպէս բեմի վրայ յաճախ երե-
ւոյնող երիտասարդ զերբասան: Երկրորդ՝
դու շատ մեծ շնորհք ունես, տաղանդա-
ւոր երիտասարդ ես: Ես չեմ ուզում, որ

մի լաւ ապագայ խոստացող մարդ զնայ եւ անհետ կորի: Ես կարծում եմ, որ զուեթէ մեկնես արտասահման եւ հետեւես ջր արուեստին, շատ աւելի մեծ ծառայութիւն պիտի մատուցես ջր ժողովրդին, քան իբրեւ սուրհանդակ կամ պրոպագանդիստ մտնես Երկիր, ձերբակալուես, զընդակահարուես կամ զըրկեն Սիբիր, ստանամանիքներում տանջալից մահով կեանքը վերջացնես: Հիմա, ի՞նչ ես մտածում: Լա՞ւ եմ արել, թէ ոչ:

— Ծնորհակալ եմ, ընկեր Սասունի, շատ ճիշդ էք մտածել, ես այդ գործին այդքան օգտակար չպիտի կարողանայի լինել: Իսկ թէ ապագային՝ որքան կարող եմ օգտակար լինել իմ ժողովուրդին, այդ ապագան ցոյց պիտի տայ, որովհետեւ այստեղ մնալով՝ ես ոչինչ պիտի կարողանամ լինել:

— Մտածում ենք, մի քանի ուսանողներէր զրկել մի որեւէ երկիր ուսանելու: Այդ ուղղութեամբ աշխատանքներ տարւում են եւ եթէ յաջողեցինք, հաւատա՛, որ այդ ցանկում առաջին հերթին ջր անունը զըրում կը լինի:

— Ծնորհակալ եմ:

— Դէ, Հիմա ազատ ես, բայց իմ եւ ջր հանդիպման եւ խօսակցութեան մասին ոչ ոքի ոչինչ չտես:

Եղաւ, որ մի խումբ ուսանողներս, որոնք քիչ-շատ դերասանական շնորհք ունէինք, մի խումբ կազմելով՝ մեկնեցինք դէպի Եւրոպա, մեր ուսումը շարունակելու, եւ նահատազրօրէն այնպէս պատահեց, որ ընդունուեցինք Պրագայի համալսարանը եւ այս քաջաբար քերամք անցայ Վիեննա եւ ընդունուեցի Արքայական Դրամատիկ Ստուդիան եւ, աւարտելով՝ անցայ Ռուսմանիա եւ վերջապէս Լոյսի քաղաք՝ Փարիզ:

Այդքան ժամանակ Սասունիին չէի տեսել եւ վերջապէս Փարիզում հանդիպեցինք: Ետտ ջերմ եղաւ մեր հանդիպումը: Ինձ զրկելով ասաց.

— Մանուէլ ջան, Հիմա տեսա՞ք, որ ես իրաւունք սնեի, որ դէմ եղայ Երկիր ջր վերադարձին: Եթէ թոյլ տայի, որ մեկնէիր, Հիմա գերեզման էլ չպիտի ու-

նենայիր, իսկ Հիմա ուսումը աւարտած, համբաւ եւ փորձառութիւն ձեռք բերած՝ դերասան ետ դարձել: Ես դեռ Երեւանում, էրբ մասնակցում էիր Զարիֆեանի եւ ուրիշների ներկայացումներին, հասկացայ, որ սասունաճային այդ հուրից թեղ էլ մեծ բաժին է ընկել:

— Ծնորհակալ եմ, ընկեր Սասունի, իրապէս ես ձեզ շատ պարտական եմ:

1932ին, «Մարտկոցական» անունով մի շարժում ոտեղծուեց, որին ղեկավարար մի քանի արժէքաւոր ընկերներ ղուհ զնացին:

Սասունին կիւլ էր Մարսէլ եւ միասին հանդիպումներ էինք ունենում՝ այդ ըմբոստ արարերի հետ: Ես թատերական մի կեղծ ատորմանակ ունէի: Բրաւանիկ էր նմանում եւ վեց հատ իրար ետեւից կրակում էր, տուէլ էի նորոգելու եւ ծոտ էր գտնւում: Պիտի գնայինք ծայրայեղ ըմբոսաների հետ խօսելու: Սասունիի հետ զնացինք այդ ժողովին: Մարդիկ շատ վատ ընդունեցին մեզ, Եթէ չեմ սրխալուում, այդ դէպքը պատահեց Սէն-Լուի արուարձանում: Ժողովը սկսուեց փոթորկուել: Ամէն ձեւի խայտառակ արտայայտութիւններ, հայհոյանք, սպառնալիք: Դրանցից մի սինլոր ուզեց ձեռք բարձրացնել Սասունիի վրայ եւ հարուածիլ: Ես ջոշուեցի մի անկիւն, կեղծ տորքմանակ հանցի եւ դերասանական ահեղ ձայնով զոռացի:

— Դուռը բացէք եւ մէկ-մէկ կորուսեցէք, ապա թէ ոչ՝ զնդակները պիտի շարժեմ ձեր նահատաներին:

Մի բոպէ տիրեց խոր լռութիւն: Բոլորը քարացած էին: Սասունին մի փպիտ դէմքին, մէկ ինձ էր նայում, մէկ՝ քարացած ժողովականներին:

Մի հատ կրակեցի առատադին: Մէկը դուռը բաց արաւ եւ հեռացաւ: Գայլ տեսած ուխտարների նման, իրար

հրելով դուրս ելան: Մնացինք ես ու Սասունին:

— Այդ բ՞նչ արիր, Մանուէլ, — ասաց Սասունին:

— Դերասանութիւն:

— Ինչպէ՞ս թէ դերասանութիւն:

— Այս ատրճանակը բեմական է, մարդ չի սպաննի:

Կարոն սկսեց լիաթոք ծիծաղել:

— Տես՞՞ր, որ իրաւունք ունէի քեզ Երկիր շղրկելու, ապա թէ ոչ՝ որանք կարող էին ինձ նեղացնել: Դերասանութիւնդ այստեղ էլ պէտք եկաւ: — Դուրս ելանք: Մութ էր ու խաւար: Երկու հաս էլ կրակեցի աջ ու ձախ: Մարդ չէր մնացել: Բոլորը ծղկուել էին իրենց տները եւ մենք ապահով հասանք իմ ընկալարանը:

— Սա մի անջնջելի յիշատակ է, բայց ոչ ոքի շատես:

Անցան տարիներ:

1938ին, Գահերէումն էի, Ընդհ. Ժողովին «Մրգաստան»ի կողմից: Գրել եմ այդ մասին, չեմ ուզում կրկնել: Ձնալած, որ Սասունին Բ.Ի անդամ էր՝ չէր եկել ժողովին: Լիբանանում ինչ որ խընդիւրներ կային եւ Կարոյին էլ մեղադրում էին: Մէկը եկած էր Լիբանանից, որ չընդունուեց ժողովին: Պիտի վերադառնար: Թուրքներ ինձ կանչեց եւ ասաց:

— Այդ պարտը, որ եկել է Լիբանանից, զո լաւ ետնօթն է: Նրան շտապ կերպով ետ կը դրկես Լիբանան, թող տեսնի եւ Կարոյին ասի — ողով կը լինի, ծովով կը լինի, թէ ցամաքով՝ թող անմիջապէս հասնի ժողովին, ապա թէ ոչ՝ իր բացակայութիւնը պատճառ պիտի դառնայ, որ դիրքը խախտուի: Գիտե՞մ դու էլ ինձ նըման սիրում ես Կարոյին: Այս բոլորը ջճ ժամում պիտի կարգադրուի:

Երկու օր յետոյ Սասունին Գահերէ հարաւ եւ ինչորքը ուրիշ կերպարանք ըստացաւ: Թուրքներ խելօք մարդ էր, դիտէր, թէ բ՞նչ էր անում:

Սասունին երբ ինձ տեսաւ՝ ասաց:

— Սա եղաւ երկրորդը, որ դու ինձ անել դրութիւնից ազատեցիր:

— Տեսա՞ր, Հայաստան չգնալուս արդիւնքները:

Յետոյ միասին անցանք Յունաստան եւ ապա Բուլղարիա: Ես անցայ Ռուսոնիա: Մտքեց պատերազմը, մեծ դժուարութեամբ վերադարձանք Պարսկաստան:

1946ին, Կարոյին կրկին հանդիպեցի Լիբանանում: Ձէր փոխուել: Մեկնեցի Հարաւային Ամերիկա: Տասնհինգ տարի յետոյ վերադարձայ Իրան: Մէկ շաբաթ յետոյ Սասունին եկաւ Թեհրան: Ձերմութեամբ հանդիպում ունեցանք: Նա ինձ ոչինչ չասաց: Երկու օր յետոյ յայտարարուեց, որ ես հեռացում էի Գաշնակցութիւնից: Սան Պաւլոյում խընդիւրներ էինք ունեցել եւ իմ բացակայութեան եւ առանց զննութեան՝ հեռացրել էին եւ Բ.Ն էլ, վարչական եղանակով հաստատել:

Երբ այս յայտարարութիւնը կարդացի, անմիջապէս դնացի Սասունիի մօտ: Տեսայ, որ այնտեղ են Եզրէէ Պահլաւունին եւ Սամուէլ Մեորոպեանը, որոնք եկել էին Սասունին բողոքելու, իմ մասին եղած կարգադրութեան համար: Ես առանց բարեւի ասացի:

— Ընկեր Կարօ, երանի թէ 1921ին, ինձ Երկիր դրկէիք, ես նախընտրում եմ այնտեղ՝ Սիբիրի ստոնածանիքում մեռել, քան այսօրուայ անարդար պատիժը կրել, եւ այդ հրահանգն էլ դու ես բերել: Յիշողութեանդ մէջ հին օրերից ոչինչ չի՞ մնացել:

— Ես լուր չեմ ունեցել:

— Բիւրոն զննե՞լ է այդ խնդիրը:

— Այ:

— Աւրիմն սա արդարութիւնն էք համարում:

— Սիրելի Մանուէլ, ես խօսք եմ տալիս, այդ անարդարութիւնը ուղղել: Այս ընկերներն էլ այդ մասին եկել են բողոքելու: Եւ յիշուի, վեց ամիս յետոյ բեկանուեց այդ որոշումը:

Իմ Յիսնամեայ յորիւնանը նշուեց 1969ին՝ Թեհրանում: Մի շաբաթ աւագ ընկերներից եւ բարեկամներից, նոյնիսկ Խորհրդային Հայաստանից ջերմ մաղթանքներով նամակներ ստացայ: Դրանց

մէջն էր նահապարտի նամակը, որ գնում եմ այս գրութեան մէջ:

Յարգելի բարեկամներ,

Ձեր նախնականութիւնը, վաստակաւոր դերասան Մանուէլ Մարութեանի յարելանը տօնելու՝ մեծ ուրախութիւն պատճառեց ինձի:

Անձնապէս վկայ եմ եղած այն երիտասարդական խանդավառութեան, 1919ին Հայաստանի մայրաքաղաք Երևանի մէջ, երբ ուսանող Մանուէլ Մարութեանը քատերական բնւթ կը ներուէր: Այդ քառականգնեմ ետք, մօտ յիսուն տարիներու ընթացքին, նաեւ Ափիւսքի գտնագան կեդրոններուն մէջ, առիթը սեմեցած եմ ներկայ գտնուելու տաղանդաւոր դերասանի բողոքական ներկայացումներուն եւ կրցած եմ հաստատել մտաւորակցութիւն եւ արուեստագէտի տաղանդը, միշտ վերելքով եւ նուանումներով:

Մանուէլ Մարութեանը իր գարգացումով եւ ներքին մղումներով ինքնայատուակ տիպարներ կերտեց ընդհին վրայ, եւ հարստացուց մեր քատերական մշակոյթը: Ան արժանի է յարգանքի եւ գրանահատանքի:

Սրտանց կը շնորհատորեմ Մանուէլ Մարութեանը, որ մեր մշակոյթին ծա-

ռայեց այնքան նախնականութեամբ եւ նախնազով:

Պատմութիւնը յատուկ տեղ մը պիտի արձանագրէ յարելեանի ծառայութիւնը մեր մշակոյթին, եւ անունը հայրենի անմահներու շարքին պիտի անցընէ:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

Մայիս 7, 1969

Այլեւս շտեմայ կարոյին: Անողոք հեւանդութիւնը գեանն սասպանց «Սարերու աղան»ի հեղինակին:

Ինքն էլ մի Ասլան էր:

Բայց անխճեալ մահը «Ասլանների Ասլանն է»:

Իր կեանքը, իր ժողովրդին նուիրած ու նրա տոռապանքներով աղբարած գրագէտ-Ֆեդային մեռաւ, բայց մեր սրտերում մի անջնջելի յիշատակ թողեց իր կատարած գործի եւ զոհարելութեան համար:

Սասունին միշտ ուրող գաղափարական կուսակցականներէն է եւ նոր սերունդը պիտի ծանօթանայ նրա գործին ու կեանքին:

Իսկ իր գրականութիւնը շատուող մի յուշարձան է:

ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐՈՒԹԵԱՆ

Օգոստոս 7, 1950

Սիրելի Կարօ,

Իսկապէս անչնայով կը գրեմ այս նամակս։ Մինչեւ հիմա պէտք էր հրատարակուած ըլլար արդէն իմ խոստացածս գրախօսականը իսկապէս լաւ կազմուած «Փրական դաճարներ»ուդ մասին։ Ըսեմ, որ գրածիս գլխուն փորձանք եկաւ, բան մը, որ ինձի բնաւ պատահած չէր։ Գրուած գրախօսականը, չգիտեմ ինչպէս, կորսուեցաւ։ Ատեն մը փնտրտուեալ անցուցի՝ մի գուցէ գտնեմ տեղէ մը։ Հիմա միայն հասկցայ, որ կորսուած ձեռագիր մը (որ կարծես շատ թանկագին բան մը ըլլար) դժուար է վերակազմել կամ նորէն գրել։ Միշտ ալ տրամադրութիւններու հետ գործ ունեցած եմ. այս օրերուն արդէն կը վերագտնեմ իմ տրամադրութիւնը գլուխ հանելու համար գրախօսականը, որ ինձի հաճոյք պիտի պատճառէ։ Ատենն է, որ քիչ մըն ալ ուշադրութիւն դարձուի մեր աշխարհաբարի պատմութեան վրայ՝ երեսն քերելու համար այն եին օրերու «ռամիկ»ը, որ մինչեւ վերջն ալ պահեց տեղը ու մինչեւ մեր օրերուն հասցաւ։

Մեծ հաճոյքով կը հետեւիմ աշխատանքներուդ։ Քաւ աշխատանքներուդ թափէն ու տրամադրութեան կը հետեւցնեմ, որ Պէշուրքը, ձեմարանը, իսկապէս դարձած է հայկական տաք մթնոլորտ։ Կ'ենթադրեմ այդ տաճարները աւելի շատ քաւ մէջն է ու ես բաժին կը համեմ միջավայրին։ Կը հաւատամ, որ այժմ Պէշուրքի, Սուրիայ գաղութը մտած է իր հեռուքիքի շրջանին մէջ։

Զգիտես ինչքան չոր դարձաւ այստեղ։ Հայաստան երթալու յոյս ալ հետզհետէ կը հատնի, մեր հաւատքը միայն կարեւոր դրամագլուխն է։ Նրբ այդ դրամագլուխն ալ հատնի՝ քաջպիտի բան չի մնար ու կը մեղադրեմ զիս, որ նախկինն նման գրական աշխատանք չեմ ընէր։ Ծքէ շարունակուի այսպէս՝ շատ բան պիտի կորսնցնեմ։ Երբեմն նոյնիսկ բարեկամի մը նամակ գրել կը դժուարանամ։ Կը յուսամ լաւ ես, Կարօ։ Իրենց վերադարձին կարն ժամանակով, տեսայ Ալեքը, Քարենանն ու Արփակուտը։ Ամէնքը լաւ բաներ խօսեցան եւ լաւ տրամադրութիւններով վերադարձնեմ։ Հարցուցի նաեւ քաւ մասին։

Ի՞նչ, նորէն պատերազմի վտանգ։ Այդ բռնատերքը վերջապէս ե՞րբ պիտի դադրին մարդկութեան գլխուն նախուէն խաղալ. եւ երագել երապարակին վրայ իսկայ արձան մը, որուն վրայ թրուչումներ պիտի ծրտեն։ Արմէնը կը տեսնեմ երբեմն, ամոր այստեղ մնալը դեռ որոշ չեղաւ։ Շատ բարեկներ Լօլային եւ ընկերներուն։

Սիրով
ՀԱՄԱՍՍԵՆ

Դ Ո Ւ Ն

Մ Ա Ր Դ Ը, Մ Ա Ր Դ Ը...

Տեսակս կ'ըսէ.— «Տէրն եմ աշխարհի, եղէզ եմ խորհող,
Տէրն եմ մտածման, ե'ս միայն կ'անիմ,
Ես միայն կրնամ փոխանցել զկատուած.
Տեսակս կ'ըսէ.— «Տէրն եմ աշխարհի...

Բայց մտածումը կզպանք է գուցէ, բուն մանաշունը մեր առջեւ գոցող,
Արահետ գուցէ՝ սխալ տեղ տանող.
Միտքը չբաւեց, չբաւէ պիտի.
Հաւատքի ծառին իջաւ գերդ կացին:

Փռչի իսկ չ'արծեք մեկնիլ երթիտով, հասնիլ աստղերուն,
Երբ հիւանդ կայ հոս ու հիւանդանոց,
Երբ կռքսուած են ցաւերու մէջ սուր,
Դէզ մը դեղի մէջ երբոր կը հալին:

Կը խորհիմ հիմա.—
Մենք ինկանք նամբայ, երբ առողջ չէինք.
Տկար ռաբերով սկսանք փախիլ,
Ու տկար ձեռքով, ու տկար կուրծքով.
Խելով գինովցանք, շատացանք թելով:

Կը շարունակենք փախիլ դեռ հիւանդ,
Փռքիկ բաժին մը տալով բուժական սուրբ ասպարէզին.
Ջարհուրքի է, մենք ա՛րք կը ձգտինք,
Երբ ամէն ինչով, տկար ենք, հիւանդ:

Երկի՛նքը, — յետո՛յ. աստղե՛րը, — յետո՛յ.
Բայց ի՛նչ խնդիրներ կան մեր մտքին տակ,
Ի՛նչ տկարութիւն, ի՛նչ բշխամութիւն, ի՛նչ գաղտնի բայներ,
Մեր գիտութիւնը հռն պէտք է գամել, յետոյ աստղերուն.
Հոն Աստուած մեզի կրնայ սպասել:

Թող ջիւեր բուժուին, ո՛ր, ջիւե՛ր, ջիւե՛ր,
Հացը դիւբանայ, զուրը դիւբանայ, օգը դիւբանայ.
Նիւթականի դէմ մարդ չտառայի.
Տէրը աշխարհին, նախ քան ուրիշ բան,
Ցաւեր կը չնչէ. տեսակս մինչդեռ կ'ընէ ուրիշ բան:

Ունի ի հարկէ, բժիշկ, բուժարան, բիրաւոր դեղեր,
Կը փնտռէ անշուշտ բուն դեղը կեանքին,
Եզածը սակայն քիչ է տակաւին,
Հարիւրապատկել աներածեշտ է միզմ այդ սրբազան:

ԵՂՈՒԱՐԴ ԳՅԱՅՆԱՆ

(Անտիպ)

Լ. ՓԻՐԱՆՏԵԼԼՕ.

Վ Ե Ց

ԱՆՁՆԱՌՐՈՒԹԻՒՆՆԵՐ,

Ո Ր Ո Ն Ք

ՀԵՂԻՆԱԿ ՄԸ

ԿԸ ՓՆՏՈՒՆ



Հայացուց՝

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

Ներկայացուող կատակերգութեան դերակատարները

ՀԱՅՐԸ

ՄԱՆՁԸ

ՄԱՅՐԸ

ԱՂՋՆԱԿԸ

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ

(Վերջին երկուքը չեն խօսիր)

ՏՂԱՆ

ՏԻԿԻՆ ՓԱՉԷ

Խումբին դերակատարները

ԲԵՄԱԴԻԻՉԸ	ԱՅԼ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ ԵՒ
ՊՉԱՍԱԽԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՎԻՆ	ԴԵՐԱՍԱՆՈՒՎԻՆԵՐ
ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ	ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ
ԵՐԿՐՈՐԴ ԴԵՐԱՍԱՆՈՒՎԻՆ	ՅՈՒՇԱՐԱՐԸ
ԱՌԱՋՆՈՐԴԸ	ՄԵՔԵՆԱՎԱՐԸ
ՊԱՐՋԱՄԻՏԸ	ԴՈՆԱՊԱՆԸ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴԸ	ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ՓՈՍՈՂՆԵՐԸ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ր Ա Ր

Թատերասարուհի մտնելու ատեն՝ հանդիսատեսները վարագույրը բաց պիտի դնեն եւ բեմը այնպէս՝ ինչպէս որ է օրուան ընթացքին, երբ յարգարուած չէ ներկայացման մը համար: Ոչ տեքստները կան, ոչ կողմնակի վարագույրները: Բեմը լրիւ պարապ է եւ մութի մէջ: Առաջին վայրկեանէն իսկ պէտք է այն տպաւորութիւնը առաջանայ, թէ կը գտնուինք շատ արատուած ներկայացման մը դիմաց:

Յուշարարին խցիկին կախարիչը իր անգը չէ, աջ կողմն է: Խցիկին ձախ կողմը, բեմի առաջամասին վրայ կան սեղան մը եւ կռնակը ժողովուրդին դարձած բազկաթոռ մը, որ բեմադրիչին բազկաթոռն է: Կան նաեւ երկու այլ սեղաններ, մէկը՝ քիչ մը մեծկակ, միւսը՝ աւելի փոքր, շրջապատուած քանի մը զրուած աթոռներով, այնպէս՝ ինչպէս պիտի ըլլային փորձի համար օգտագործուող պարապ բեմի մը վրայ:

Քուլիսներէն ներս կը մտնեն խումբի մը դերակատարները, տղամարդիկ, կիներ, առանձին-առանձին, կամ զուգ-զուգ, ըստ կամս. ութ կամ ինը հողի պիտի ըլլան. այն թիւը, որ անհրաժեշտ է փրանտելլոյի թատերակ մը խաղալու համար: Փորձերու յատուկ զրատախտակին վրայ կ'երեւի պատաստութեան մէջ եզոզ թատերակին անունը՝ «Խրափանչիւրիս իր դիքը»:

Դերակատարներէն ոմանք կ'ուղղուին դէպի իրենց յատկացուած սենեակները: Ուրիշներ, որոնց կարգին յուշարարը, որ թեւին տակ պրաշիւր մը ունի, կը մնան բեմին վրայ, սպասելով բեմադրիչի ժամանումին: Մնացեալները նստած են, բաժնուած փոքր խմբակներու, իրարու հետ քանի մը քառ կը փոխանակեն, սիկարէթ կը վառեն, թերթ մը կամ իրենց մասը կը թըղ-թատեն:

Կը մտնէ բեմադրիչը եւ կ'ուղղուի դէպի իր սեղանը: Քարտուղարուհին կ'երկարէ թղթատարով եկած նամակներու ու թերթերու ծրարը, — թերթեր, ծրարով զրկուած ձեռագիր մը եւ նամակի պահարան մը, զոր բեմադրիչը կը բանայ ու արագ նայուածք մը կը նետէ բովանդակութեան վրայ: Մինչ այդ, յուշարարը իջած է իր խուցը, վառած է իր աջին գտնուող փոքր լամպը եւ թատերակի պրոչիւրը բանալով՝ զրած է դիմացը:

ԲԵՄԱԴԻԻՉԸ (ճամակը ճետելով սեղանիմ վրայ) — Սարսափելի մութ է, կարելի չէ տեսնել: (Չորս կողմը կը ճայի եւ մեքենավարներու պատասխանատուիմ թաղիկով խոփը) Վառէ վերի լոյսերէն մէկը:

Մեթեննակար (տոբի ելիելով) — Շատ լաւ, պարոն տնօրէն, տնտիջապէս : (Պահ մը ետք, երբ փարօք կը սկսի, վերէն լաշտեր կը վառին) :

Բեմադրութիւն — Քիչ մը շարժեցէք, եթէ կարելի է. օն, սկսինք : (Յաշտարարին) «Իւրաքանչիւրին իր դերը» թատերակին երկրորդ արարուածը : (Կը նստի իր բազկաթոռին : Դիտարաններէն անոնք՝ որոնք անմիջականօրէն մասնակից չեն տեսարանի փարօքին, կը քաշուին երկու կողմերը, ընմը ձգելով փարօքի վրայ եղադներուն) :

Յոտնակար (կարդալով) — Լէոն Կալայի բնակարանը, աշխատասենեակ-ճաշարան մը, քիչ մը արտաոց :

Բեմադրութիւն (բեմի ձեկավարին) — Կարմիր Հիւրասրահը կը գործածէք :

Բեմադրութիւն (քուղթի մը վրայ նոթագրելով) — Կարմիր Հիւրասրահը... շատ լաւ :

Յոտնակար (շարունակելով իր ընթերցումը) — Գրեւու յատկացումը սեզան մը. աշխատանքի սեզան մը՝ դիրքերով եւ թուղթերով ծածկուած : Գիրքերու համար դարակներ, ծանրաբեռնուած դիրքերով : Ապակեղարաններ, լիցուս ամանեղէնով եւ պերճանքի յատուկ բերեղեայ իրերով : Պորթին վրայ դուռ մը, որ Լէոնի ննջասենեակը կը տանի : Ձախին գուռ մը, որ խոհանոցին վրայ կը բացուի : Ալին՝ նախասենեակ տանող դուռը :

Բեմադրութիւն (տեղէն կ'ելլէ եւ ցոյց կու տայ) — Պա՞րզ է բոլորին համար. հոս նախասենեակն է, հոն՝ խոհանոցը : (Դառնալով Սակրատի դերը ստանձնած դերասանին) Դուռ ուրեմն հոսկէ կը մտնես ու կ'ելլես : (Բեմադրարարին դառնալով) Պորթին, մուտքին դիմաց, վարագոյրներ կը տեղաւորես : (Կը նստի) :

Բեմադրութիւն (կ'արձանագրէ) — Եղաւ :

Յոտնակար — Տեսարան առաջին, — Լէոն Կալա. Կիտո Վենանցի, Ֆրիլի՝ Սոքրաթ անուանեալը : (Բեմադրիչին) Բեմային տեղեկութիւնները կարդա՞մ, թէ ոչ :

Բեմադրութիւն — Բնականաբար այո. հարիւր անգամ ըսած եմ, թէ պէտք է կարդացուին :

Յոտնակար — Վարագոյրը բացուելուն՝ Լէոն Կալա, ճերմակ դոդոց մը կապած, խոհարարի ճերմակ գլխակ մը գլխուն, հաւկիթ մը զարնելու վրայ է, շոքոյի հետ խոտնելով զայն, մասնաւոր դրալով մը՝ Ֆրիլի եւս հագուած է խոհարարի պէս եւ նոյն բանը կ'ընէ : Կիտո Վենանցի նստած, մտիկ կ'ընէ :

ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ — Ներողութիւն, մե՞թէ անհրաժեշտ է, որ անպայման զնեմ սա խոհարարի գլխակը :

Բեմադրութիւն — Բնականաբար. քանի որ այդպէս գրուած է : (Յոյց կու տայ պրոշիւրը) :

ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ — Սակայն բացարձակապէս ծիծաղելի է : **Բեմադրութիւն** (կատարած ցատկելով տեղէն) — Միծաղելի, ծիծաղելի : Ի՞նչ կրնամ ընել, եթէ այլեւս շնորհով փիեսներ չեն դար մեզի Պրանտայէն, եւ հարկադրուած ենք Փրանտելոյի թատերակները ներկայացընել, որոնց ոչ մէկ բառը կը հասկցուի. եւ որոնք հեղինակը կարծես գրած է իմ, ձեր եւ հանդիսատեսներու քիթին խնդալու համար : (Դերասանները կը խնդան : Բեմադրիչը կը մտնեայ կարծուր առաջին դերակատարին) : Այո, պարոն, խոհարարի սա գլխակը դուրեւ պիտի անցընես. այո, պարոն, սա հակիթները պիտի զարնես : Սա հաւ-

կէթները ձեռքդ բռնած՝ թերեւս կը կարծես, թէ ընթացիկ փէես մը խաղալու վրա՛յ ես: Կը սխալես: Դուն կը ներկայացնես ջուր զարկած Հակէթներու կեդուր: (Ներասանները կը վերսկսին խնդալու եւ հեգնական մեկնաբանութիւններ կատարել): Լուսթիւն: Կը խնդրեմ, որ մտիկ ընէ՛ք, երբ ես ճիգ կը թափեմ բան մը բացատրելու: (Կարեւոր առաջին դերակատարին) Տրամաբանութիւնը պարագայ Հակէթի կեդու, մըն է, եթէ բնազդները զայն լեցնելու չզան: Դուն տրամաբանութիւնը կը ներկայացնես, կինդ՝ բնազդները, «Եւրաբանչիւրին իր դերը» թատերակին մէջ: Քու գերդ՝ մեզ քու սեփական խրատիկակիդ կամ իսամաճիկիդ տեղը անցընելը պիտի ըլլայ... Հասկցա՞ր:

ԿԱՐԵՒՆՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱԿԱՍՏԱՐԸ (Թերերը խաղածուած).— Հաստատեցէք, որ ոչ:

ԲԵՄԱԴԻՐԻՉԸ.— Չհասկցա՞ր... Ես ալ չեմ հասկցած... Շարունակենք, շարունակենք: Աղւոր հարուած մը պիտի ըլլայ: (Առանձնակի, դերասանին ուղղելով խօսքը) Կը խնդրեմ, որ երեք քառորդ դարձած խօսիք: Այս տիպիկին տարօրինակութեան հետ, եթէ հասարակութիւնը ձեզ չկարենայ լսել, ամէն ինչ կատարեալ կ'ըլլայ: (Մտիկելով) Օ՛ն, ամէնքը պատրաստ են շարունակենք, շարունակենք:

ՅՈՒՇԱՐԱՐԸ.— Ներողամէտ կ'ըլլաք, կրնա՞մ արդեօք կափարիչը գոցել. որովհետեւ օդի սորստիկի հոսանք մը կայ:

ԲԵՄԱԴԻՐԻՉԸ.— Շատ լաւ, գոցէ՛:

(Այդ միջոցին, քատրոնի դռնապանը կը մտնէ ճուլիսներու դռանէն: Ուտի ծայրերուն վրայ կոխելով՝ դանդաղօրէն կը յառաջանայ, շրջանցելով բեմին վրայ գտնուող դերասանները եւ մտնելով բեմագրիչի աթոռին՝ կը հասնէ պաշտօնական գլխարկը: Այդ ընթացքին, վեց անձնաւորութիւնները եւս ներս կը մտնեն եւ կանգ կ'առնեն խորքի դրան մօտ: Երբ դռնապանը իրենց մասին կը յայտնէ լեմադրիչին, իրենք, բեմի խորքին վրայ, կողմ կողմի շարուած են եւ տարօրինակ լոյս մը, որ իրենց երեսուսին հետ վառած է, կը թռի իրենցմէ ճառագայթելով բեմ գալ, կարծես թեքու մշուշ մը կը շրջապատէ գիրենք: Այս լոյսի ցայքը պիտի աննետի այն պահուած, երբ վեց անձնաւորութիւնները առաջ պիտի գան՝ յարաբերութեան մէջ մտնելու համար դերասաններուն հետ: Անձնաւորութիւնները պիտի պահպանեն երազային որոշ անդրաշունչիւն, անշոշափելիութիւն, առանց որ իրենց մարմնական ձեւի իրականութիւնը կամ արտայայտութեանց իրականութիւնը բան մը կըրանցնէ այդ իրականութենէն:

Հայրը, յիսուն տարու է, ցանցաւ մօզերով, առանց ճաղատ ըլլալու, ունի փոքր պիտիք, որովհետեւ հաստ են եւ կը ծածկեն թաքն շրթունքներ, որոնց վրայ երբեմն անորոշ, դատարկ ծայր մը կը գծագրուի: Համեմատաբար գիրակ կը համարուի, լայն ճակատով, գունատ դէմքով, կապոյտ եւ երկար աչքերով, որովհետեւ արագաշարժ են եւ քափանցող հայուածք մը կը բերեն: Հագած է բաց գոյնի տաքատ, մաշ գոյնի բանիս: Կ'արտայայտուի երբեմն մեղրածոր, երբեմն կարծր, չոր ու պայթիւններով:

Մայրը կը թռի ճգնաւոր ըլլալ յոգնածութեան եւ ստօքանքի տեսարաններէն: Դէմքը ծածկուած է այրի կնոջ մեծ ու սուր շարքով մը. հագած է սեւ համեստ հագուստ մը: Երբ երեսի բողբոջ վերցնէ, ոչ թէ տառապագին դէմք մը երեւան կու գայ, այլ՝ մեղրամաքի մոմառ թաքն մը: Աչքերը միշտ վար կայտուած կը մնան:

հորթ աղջիկը, տասնութ տարու, «յոխարտացող ու ցական բռնող», գրեթէ անպատկառ: Շատ զեղծցիկ է: Սուգի զգեստով է, սակայն պառչտացող վայելչութեամբ հագուստ մըն է հագածը: Անհամբերութիւն ցոյց կու տայ փոքր տղուն հանդէպ, որ 14 տարու է, սուգի զգեստներով, երկչոտ արտայայտութիւն մը ունի, ընկճուած, գրեթէ կարսուած: Մեծ գարգաւքանք կը յայտնաբերէ, ընդհակառակն, փոքր բռն Վերաբերմամբ, որ չորս տարու է, ճերմակ հագուստ մը վրան, սեւ գտնով:

Մեծ տղան քսաներկու տարու է, բարձրահասակ, ընդդիմացող կեցածք մը ունի, արեւմտահայկան բան մը՝ հորը հանդէպ. եւ գայրացած անտարբերութիւն մը՝ տօրը հանդէպ: Այնպէս կը վարուի, որ կարծես ինք այնտեղ է՝ հակառակ իր կամքին):

ԴՌՆԱԳԱՆԸ (զվտարկը ձեռքին) — *Ներողամիտ եղէք, պարոն տնօրէն: Բեմադրութիւնը (տեղէն ցատկերով եւ անգագափափ շնչումով) — Ի՞նչ կայ նորէն:*

ԴՌՆԱԳԱՆԸ. — *Այս պարոններն ու տիկիներն կը փափաքին ձեզի հետ խօսիլ:*

ԲԵՄԱԴՐԻԶԸ (կատարած). — *Սակայն մենք փորձի վրայ ենք: Շատ լաւ գիտես, թէ փորձերու ընթացքին չեմ ուզեր, որ զիս խանդարեն: (Դառնալով դէպի խորքը) Ի՞նչ կը փափաքիք, պարոններ:*

ՀԱՅՐԸ (յառաջանալով. մինչ միւս անձնատրուութիւններն ալ, քիչ մը վարանոտ ու շուարումով, կը հետեւին իրեն). — *Մենք... պարոն. մենք հեղինակ մը կը փնտռենք:*

ԲԵՄԱԴՐԻԶԸ (կէտ մը գարմացած, կէտ մը գայրացկաւ). — *Հեղինակ. ի՞նչ հեղինակ:*

ՀԱՅՐԸ. — *Ոհէ՛ հեղինակ, պարոն:*

ԲԵՄԱԴՐԻԶԸ. — *Մեր մէջ, հոս, ոչ մէկ հեղինակ կայ... նոր թատերակ մը չէ, որ կը փորձենք:*

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (արագութեամբ եւ գուարթօրէն). — *Աւելի լաւ, աւելի լաւ, պարոն. մենք կը դառնանք ձեր նոր թատերակը:*

ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ (իրենք իրենց միջեւ, խնդալով). — *Ինչ՞ը կ'ըսէ:*

ՀԱՅՐԸ (աղջկան). — *Բացայայտ է... Բայց եթէ հեղինակ մը չկայ... (Բեմադրիչին) Բացի այն պարագայէն, պարոն տնօրէն, եթէ դուք համաձայնէք հեղինակ դառնալ:*

ԲԵՄԱԴՐԻԶԸ. — *Կը կատակէ՞ք:*

ՀԱՅՐԸ. — *Բացարձակապէս ոչ, պարոն. մենք ձեզի արած մը կը բերենք:*

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — *Այո՛ եւ մենք կրնանք ձեր բախար ըլլալ, ձեզի յաջողութիւն բերել:*

ԲԵՄԱԴՐԻԶԸ. — *Այո՞... Լաւ ուրեմն. մինչ այդ, կ'ուզէ՞ք ինծի հաճելի ըլլալ...: Հեռացէք ասկէ, խենթերու հետ կորսնցնելիք ժամանակ շուրջիս:*

ՀԱՅՐԸ (վերաւարուած, սակայն մեղրածոր). — *Օ՛հ, պարոն: Սակայն դուք ինծի լաւ լաւ դիտէք, թէ կեանքը լի է անհեթեթութիւններով, որոնք անսովորաբար կրնան իրականանձան չթուելի: Եւ դիտէ՞ք ինչու, պարոն տնօրէն, որովհետեւ այդ անհեթեթութիւնները ճշմարիտ են:*

ԲԵՄԱԴՐԻԶԸ. — *Ի՞նչ կ'ըսէք:*

ՀԱՅՐԸ. — *Կ'ըսեմ, պարոն, թէ խենթութիւնը, իրականի պատրանքը տալու*

միտումով, իբրականամանութիւնը վնասուին է: Եւ այդ պարագային, թոյլ տուէք, որ դիտել տամ ձեզի, թէ ձեր արհեստին դոյութեան միակ միտք բանին ատկեա է:

(Դերասաններ բողբի արտայայտութիւններ կ'ունենան)

ԲԵՄԱԴՐԻՉԸ (տախի կ'իլլէ եւ վերէն վար կը չափէ դիմացիճը) — Այո՛... : այդպէ՞ս է. ձեզի կը թուի, թէ մեր արհեստը խնթերո՞ւ արհեստ է: **ՀԱՅՐԸ** — Այսինքն, Աստուած իմ... : ձլմարիտի երեւոյթը տալ բանի մը, որ ճշմարիտը չէ, պարոն. այն ալ առանց որ ատոր անհրաժեշտութիւնը զգացուի, պարզապէս խաղի համար... : Ի վերջոյ, ըտէք խնդրեմ, ձեր արհեստը բեմին վրայ երեւակայական անձնաւորութիւններ ապրեցնելը չէ՞... : Այո՛, թէ ոչ: Ես... :

ԲԵՄԱԴՐԻՉԸ (ըմդիատելով եւ դերասաններու անոզ զգայնութեան ինք եւս զրգռուած) — Իսկ ես, պարոն, ձեզի կը խնդրեմ, որ յիշէք, թէ դերասանի արհեստը ամէնէն ազնուականներէն է: Այո՛ր, եթէ հեղինակները յիմար թատերակներ միայն կը հրամայեն ձեզի եւ կ'ուղեն, որ բեմադրենք, եթէ անոնք խամաճիկներ միայն կը կառուցեն իրենց թատերակներուն մէջ, փոխանակ խորապէս մարդկային անձնաւորութիւններ կերտելու, մենք ինչո՞վ յանցաւոր ենք. եւ մեր հպարտութիւնն է այս բեմին վրայ անձա՛զ գործեր կենդանացուցած, ըլլալու իբրողութիւնը:

(Դերասանները գոհ են, եւ կը ծափահարեն նայմիկ)

ՀԱՅՐԸ (քափով ու ցերմութեամբ ընդմիջելով) — Անշո՛ւշտ, անշո՛ւշտ. թատերականապէս ճիշդ կ'ըսէք, դուք բեմին վրայ կը կենդանացնէք ապրող էակներ, շա՛տ աւելի ապրող, քան քաղաքապետարաններու տետրակներուն մէջ արձանագրուած անունները: Թերեւս նուա՛զ ճշմարիտ, սակայն աւելի իրական անձնաւորութիւններ... բոլորովին համաձայն եմ ձեզի հետ:

(Ջարմացած՝ դերասանները իրարու կը նային)

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Բայց չէ՞, որ դուք կ'ըսէիք, թէ... **ՀԱՅՐԸ** — Ներեցէք... Ես ձեզի կը պատասխանէի: Դուք կ'ըսէիք, թէ ժամանակ շունիք կորսնցնելու խնթերու հետ, սակայն ոչ ոք աւելի լաւ պիտի չգիտնար, թէ բնութիւնը մարդկային երեւակայութիւնը կ'օգտագործէ, որպէսզի աւելի բարձր մակարդակի վրայ շարունակէ իր ստեղծագործական աշխատանքը:

ԲԵՄԱԴՐԻՉԸ — Ճիշդ է, սակայն ի՞նչ ըսել կ'ուզէք, ո՛ւր կ'ուզէք հասնիլ: **ՀԱՅՐԸ** — Ոչինչ, ոչ մէկ տեղ: Կ'ուզեմ միայն փաստել ձեզի, թէ կարելի է կենսաբնական հազար երեւոյթով, հազար ձեւով: Կարելի է ծառ ծնիլ, կամ՝ քար, կուժ, թիթեռնիկ... կամ՝ կին: Կարելի է նաեւ թատերական անձնաւորութիւն ծնիլ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (զարմանքով ձեւացնելով եւ հեզմութեամբ լի) — Ու դուք, ինչպէս նաեւ ձեր յարգելի ընկերակիցները, թատերական անձնաւորութիւն ծնած էք:

ՀԱՅՐԸ — ձիւղ այդպէս, պարոն տնօրէն: Եւ բոլորս ալ կատարելուպէս կենսութի, ինչպէս կը տեսնէք:

(Բեմադրիչն ու դերասանները խնդրուով կը պոռթկան,
կարծես համով կատակ մը լսած ըլլային):

ՀԱՅՐԸ (վիրաւորուած) — *Խորապէս կը ցաւիմ, որ այդպէս կը ծիծաղէք...: Կը կրկնեմ. մենք մեր մէջ արամ մը կը կրենք: Եւ դուք այդ իրողութեան կրնաք անդրադառնալ, սուգի շարժներով սա կնոջ երեսը թէն իսկ դատելով:*

ԲԵՄԱԴՐԻՉԸ (համբարուփիւնը հատած, ինքնիրաւէ դուրս ելած) — *Ա՛լ կը բաւէ: Հեռացէ՛ք թեմէն: (Բեմայարդարին դառնալով) Կը խնդրեմ, որ բեմը պարպել տաք:*

ԲԵՄԱՅԱՐԿԱՐԸ (հնազանդեցէք դուրս ելլել: (Կը մտնեց
ու կը գրեթէ գէպի դուրս կը հրէ):

ՀԱՅՐԸ (դիմադրելով) — *Ո՛չ, ո՛չ. մտիկ բռէք, մեզ մտիկ ըրէք, մենք...*

ԲԵՄԱԴՐԻՉԸ (պոռալով) — *Իսկ մենք, մենք ալ հոս դործ ունինք:*

ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՅԱՍՏՐԸ — *Ներքի չէ նման կատակներով գալ ու խանգարել:*

ՀԱՅՐԸ (վնասկամ ձեռով յառաջանալով) — *Ձեր թերահաւատութիւնը կը դարձացնէ զիս...: Մի՞թէ դուք, դերասաններդ, վարժուած չէք մեր մէջ ապրեցնելու, իրարու զէմ ցցուելով, հեղինակի մը կողմէ ստեղծուած անձնաւորութիւններ, իսկ մեր դիմաց, կը վաբանիք, որովհետեւ յուշարարի պրոչիւրին մէջ չենք գտնուիր...*

ԽՈՐՔ ԱՂՁԻԿԸ (կը յառաջանայ դէպի քիմադրիչը եւ խնդրով, գրգռիչ ձեւերով) — *Հաւատացէ՛ք, պարոն տնօրէն, թէ դուք զէմ յանդիման կը գտնուիք արտաքոյ կարգի հետաքրքրական վեց անձնաւորութեանց. թէեւ անոնք զիչ մը կորսնցուցած են իրենց ճամբան:*

ՀԱՅՐԸ (հետացնելով աղջիկը) — *Այո՛, կորսուածներ, եթէ կ'ուզէք: (Բեմադրիչին) Եւ ահա թէ ինչպէս. հեղինակը, որ մեզի կեանք տուաւ, չուզեց կամ չկրցաւ առարկայականօրէն աւարտել մեզ եւ՛ աշխարհ բերել, արուեստի աշխարհին բերել... Եւ... ոճիր մը եղաւ ասիկա: Երբ բախտը ունիք անձնաւորութիւն ծնելու, թատերական հերոս մը, թատերական ապրող անձնաւորութիւն մը, կրնաք խնդալ մահուան վրայ: Անմահ էք այլեւս: Մարդը, հեղինակը, որ ստեղծագործութեան գործիքն է, պիտի մտնի, սակայն իր ստեղծած անձնաւորութիւնը երբեք պիտի չմեռնի: Եւ նշեցէ՛ք, խնդրեմ, որ յաւիտեանս ապրելու համար, ան պէտք չունի բացառիկ շնորհներ ունենալու կամ հրաշքներ գործելու: Ի՞նչ էր Սանչո Փանչոն: Ի՞նչ էր տոն Ապոլոնտին: Եւ սակայն յաւիտեանս պիտի ապրին, որովհետեւ իրիւ կենսունակ հունտեր անոնք կրցած են գտնել ա՛յն արդանդը, որ զիրենք պիտի կազմատրէր, աշխարհ բերէր ու սնուցանէր, որ իրենց ոտուած է յաւիտեանական կեանքը:*

ԲԵՄԱԴՐԻՉԸ — *Այս բոլորը շատ աղուր են. սակայն ո՛ւր կ'ուզէք յանդիլ:*

ՀԱՅՐԸ — *Մենք ապրել կ'ուզենք, պարոն տնօրէն:*

ԲԵՄԱԴՐԻՉԸ (հեզմակամ) — *Յաւիտեանս:*

ՀԱՅՐԸ.— Ոչ պարոն. սակայն պահ մը դէկթ, ձեր միջոցով, ձեր մարմնաւորումով:

ԴԵՐԱՍԱՆ ՄԸ.— Ի՞նչ կը խօսի:

ՊՁՆԱՍԻՐ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ.— Մեր մէջ ապրիլ կ'ուզեն եղեր:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋԻՆ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ (ցոյց տալով գեղեցիկ աղջիկը).— Սիրով կ'ընդունիմ, եթէ իրեն հետ ապրելու մասին է հարցը:

ՀԱՅՐԸ.— Հասկցէ՛ք, խնդրեմ: Թատերակը պէտք է կառուցել: (Բնմադրիչի) Եթէ դուք համաձայնելու ըլլաք եւ դերասաններն ալ ընդունելու ըլլան, կրնանք անմիջապէս ոտքի հանել զայն, միասեղ խորհրդակցելով:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (զգայնացած).— Ինչէ՞ մասին խորհրդակցիլ կ'ուզէք: Հոս խորհրդարան չէ: Հոս մենք ներկայացումներ կու տանք, արամներ կամ կատակերգութիւններ:

ՀԱՅՐԸ.— Անչուտ: Եւ ասոր համար է, որ ձեզի կը դիմենք...

ԲԵՄԱԴՐԻՉԸ.— Ո՛ւր է ձեռագիրը:

ՀԱՅՐԸ.— Ձեռագիրը մեր մէջն է, պարոն տնօրէն: (Դերասանները կը խրատան): Տրամը մեր մէջն է, մէնք ենք տրամը, եւ անհամբեր ենք զայն խաղալու այնպէս՝ ինչպէս մեր կիրքերը կը մղեն մեզ իրականացնելու: ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (արեւմտահայերէնով եւ ներք ալ լրբեմի վայելչութեամբ մը).— Ա՛խ, իմ կիրքերս...: Եթէ դիտնայի՛ք...: Իմ հրայրքս, իրեն հանդէպ: (Ցոյց կու տայ իւրը, զայն համարաբար շարժուելու մը կ'ընէ եւ բարձրաձայն կը խնդայ):

ՀԱՅՐԸ (զայրացած).— Դուն անդը կեցիր առայժմ, եթէ կարելի է: Եւ դադարէ՛ խնդալէ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ա՛հ. խնդալու իրաւունք չունիմ ուրեմն... Լաւ ուրեմն, պարոններ, հակառակ անոր, որ հազիւ թէ երկու ամիս է, որ ես որք եմ, տեսէք, թէ ինչպէս երգել եւ պարել դիտեմ:

(Կը սկսի երգիլ պարեզանակ մը՝ Ֆոֆսթրոք կամ դանդաղ Ուան-սթեփ մը)

«Ձիմացիները ճարպիկ ժողովուրդ են.
Շանկհայէն միջեւ Փեֆին,
Ամէն կողմ կախած են գրութիւն,
Զու-Ձիմ-Ձուիմ ուշադրութիւն»:

(Միաժամանակ պարի խումբ մը կայլեր կ'առնէ բեմին վրայ):

ԴԵՐԱՍԱՆՆԵՐՆ ՈՒ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ (ծափահարելով).— Հիանալի է, պրաւօ՞, հոյակապ է:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (զայրոյթով).— Լուսթիւն. քապառէի մէջ ենք կարծես: (Հօրը ուզելով խօսքը. քիչ մը կողմնակի եւ տեսակ մը յազուած, ընկերւած) Ըսէք, խնդրեմ... ջիշ մը խեղճ է արդեօք:

ՀԱՅՐԸ.— Խեղճ. ոչ... Աւելի դէշ, քան խեղճ:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (ընդհատելով հօրը խօսքերը եւ բնմադրիչին ուզելով իր խօսքը).— Աւելի՛ դէշ, աւելի՛ դէշ: Այո՛, պարոն տնօրէն, աւելի՛ դէշ: Զիս մտիկ ըրէք, կ'աղաչեմ, որ մեր տրամը իսկոյն խաղալ տաք մեզի...: Ու պիտի տեսնէք, թէ տուեալ պահու մը, ես... Ինչէ՛ր կ'ընեմ: (Աղջկակիմ, որ մօրը բով կանգնած է, ձեռքէն բռնելով՝ կը բերէ բեմ):

մադրիչիմ քով) — Երբ այս պնդիկ հողեակը... Ի՞նչ անուշիկ ձագուկ է, չէ՞: (Թեւերուն մէջ կ'առնէ ու կը համբուրէ): Հողեակս, հողեակըս... (Ազգեակը գետին կ'իջեցնէ ու կարծես ակամայ եւ յուզուած՝ կը յարէ) *Պիտի տեսէ՞ք, երբ Աստուած այս անուշիկ հողեակը խլէ մօրը ձեռքէն... եւ երբ այս ապուշը (առաջ կը հրէ սպիկը, կոպտորէն քոշիլով քնուծ) իր տիմարութեան պատճառով ամենամեծ, յիմարու թիւնը գործէ (կոպտորէն կը երէ սպիկը, դէպի մայրը)...* *Պիտի տեսնէ՞ք, թէ այն ատեն ես ինչպէ՞ս թո՛ղիք պիտի առնեմ: Այո, պարոն, թո՛ղիք, թո՛ղիք: Ա՛խ, ինչպէ՞ս կ'ուզեմ հասնիլ այդ տեսարանին ու խաղալ զայն...: Որովհետեւ մեր միջեւ տեղի ունեցածէն ետք... (Այլ էի շարժուեալ մը հայրը ցոյց կու տայ): Այո, ամենամտերի՛մ կարգով, այլեւ չեմ կրնար իրենց մէջ մնալ, ականատես ըլլալ մօրս մարտիրոսութեան. մարտիրոսութիւն՝ որուն պատճառը սա փայտի կտորն է: (Յոյց կու տայ սպանն): Դիտեցէ՛ք զինք, անտարբեր, պապ-պաղ կեցած, որովհետեւ ինք օրինաւոր զուակն է... արհամարհանքով լեցուն՝ ինծի հանդէպ, եւ սըւոր համար: (Յոյց կու տայ սպիկը): Եւ այս հողեակին համար (ազգեակը), որովհետեւ մենք անհարազատներ ենք, փինիք հնք: Կը հասկնա՞ք... փինիք: (Կը մօտեմայ մօրը ու կը համբուրէ զայն): ... Եւ այս խեղճ մայրը, որ մեր շորսին ալ մայրն է... չ'ուզեք զինք իրրեւ իր մայրը ընդունիլ, վերէն կը նայի մօրն ալ, կարծես միայն մնացեալ երեք փինիքուն մայրը ըլլար ան, եւ ի՛ր ալ մայրը չըլլար... Վատողի...:*

(Այս ամբողջ հատուածը պիտի խաղցուի արագութեամբ, ծայրայեղօրէն գրգռուած վիճակով մը: «Փին» բառը լրիւ, պայթուցիկ ձայնով արտասանելի ետէ, վերջին՝ «վատողի» բառը մարտած ձայնով մը պիտի արտասանուի, կարծես բառը ք՛՛՛նկու պէս):

ՄԱՅՐԸ (Անեուն անձկութեամբ մը բեմադրիչին ուղղելով խօսքը) — *Յանուն սա երկու պղտիկներուն, կ'աղաչեմ ձեզի, պարոն: (Յամկարծ տկարանալով): Աստուած իմ...:*
ՀԱՅՐԸ (դերասաններուն օգնութեամբ քեւերուն տակէն բռնելով, որ չիյնայ) — *Յանուն զթութեան՝ աթոռ մը, այս խեղճ մայրիկն համար...:*
ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ (կը շտապեն օգնութեան հասնիլ) — *Ուրեմն իրակա՞ն էր, իրա՞ւ կը մարէր:*
ՔԵՄԱԴՐԻՉԸ — *Աթոռ մը տուէ՛ք:*

(Դերասաններէն մէկը աթոռ մը կը բերէ. միւսները, տեսակ մը գուրգուրանքով՝ կը շրջապատեն նստած այրին, որ կ'աշխատի արգելի հանդիսանալ հօրը, որպէսզի քոշը չվերցնէ):

ՀԱՅՐԸ — *Նայեցէ՛ք, պարոն, նայեցէ՛ք...*
ՄԱՅՐԸ — *Ոչ, ոչ, կը բաւէ՛. կ'աղաչեմ...*
ՀԱՅՐԸ — *Բա՛ց դէ՛մքը, ցոյց տուր...*

(Կը վերցնէ քոշը)

ՄԱՅՐԸ (առփի ելլելով եւ ձեռքերով, յուսահատութեամբ, դէմքը ծածկե-

digitised by A.R.A.R.®

լով) — Կ'աղաչեմ, պարոն, արդիւնցէք աղջկանս, որ իր ծրագիրը գործարարութեան չդնէ... ահաւոր բան մը պիտի ըլլայ ինծի համար...
ԲԵՄԱԴԻՐԻՉԸ (բռնաբռնելով ապշած). — Ա՛յ բան չեմ հասկնար... (Հօրը) Տի-
կինը ձեր կի՞նն է :

ՀԱՅՐԸ. — Այո, պարոն տնօրէն, իմ կինս :

ԲԵՄԱԴԻՐԻՉԸ. — Այդ պարագային՝ ինչո՞ւ չալլիք է՞ կ'ըսէք, երբ դուք ողջ էք :

(Ինքնազննարկ, տեսակ մը քեթեցած, կը սկսի խօսել) :

ՀԱՅՐԸ (վիրաւորուած. դռն բարկութեամբ). — Կ'արդիւնք ձեզի խնդալը...
Ի սէր Աստուծոյ, գո՛ւթ ունեցէք, ու այդպէս մի՛ խնդաք... Այդ իսկ է
այս խեղճ կնոջ ողբերգութիւնը, պարոն տնօրէն... : Ուրիշ մարդու
զացած է... Ուրիշ մարդ մը, որ հիմա հոս պէտք է ըլլար :

ՄԱՅՐԸ (ճիչով մը). — Ո՛չ, ոչ... ոչ :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Բարեբախտութիւն իրեն՝ երկու ամիս առաջ մեռած է.
արգէն ըսի ձեզի : Անոր սուգն է, որ կը կրենք, ինչպէս կը տեսնէք :

ՀԱՅՐԸ. — Եթէ ան հոս չէ, մեռած ըլլալը չէ պատճառը : Ան հոս չէ... : Նա-
յեցէ՛ք սա կնոջ, պարոն, կը խնդրեմ, եւ իսկոյն պիտի հասկնաք ին-
չու... : Այս կնոջ ողբերգութիւնը երկու մարդ սիրած ըլլալը չէ : Ան
ի վիճակի չէ բուռն հրայրքներ ապրելու : Ծատ-շատ, քիչ մը երախ-
տապիտական զղացում պէտք է ունեցած ըլլայ, ոչ իմ նկատմամբ, այլ՝
միւսին : Միտուհի մը չէ ինք, այլ՝ մայր մը : Ու իր ողբերգութիւնը՝
չառ ուժեղ ողբերգութիւն մը, պարոն, չորս զաւակ ունեցած ըլլալն է
այն երկու մարդերէն, որոնք իրը եղած են :

ՄԱՅՐԸ. — Ի՞րը եղած են... : Կը համարձակիտ ըսել, թէ այդ երկու մար-
դիկը իմ եղած են, կարծես ես է, որ առած եմ զիրենք... : Ի՞նչն է,
որ զիս առաւ միւսին, բունի՛. պարտադրեց ինծի՛՝ միւսին հետ մեկնել :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ (ընդվզումով). — Ճիշդ չէ...

ՄԱՅՐԸ (ապշուրեամբ). — Ինչպէ՞ս թէ ճիշդ չէ :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Ճիշդ չէ, ճիշդ չէ :

ՄԱՅՐԸ. — Դուն ի՞նչ կրնաս դիտնալ այդ մասին :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Ճիշդ չէ : (Բեմադրիչին) : Մի՛ հաւատաք : Գիտե՞ք, թէ
ինչու այդպէս կ'ըսէ : (Ցոյց տալով սղան) : Իր պատճառով : Ինքզինք
կ'ուտէ, ինքզինք կը շարժարէ այս զաւակն պատճառով, իր առջիններէն :
Եւ կ'ուզէ զայն համոզել, որ եթէ ինք չբռնէ իր զաւակը, երբ ան եր-
կու տարու էր, պատճառը սա մարդն է (ցոյց տալով հայրը), որ պար-
տադրած է իրեն :

ՄԱՅՐԸ (ուժգնութեամբ). — Պարտադրեց ինծի, Աստուած վկայ պարտա-
դրեց : (Բեմադրիչին) : Հարցուցէք իրեն (ամուսինը ցոյց տալով), ե-
թէ սաւա կը խօսիմ : Հարցուցէք, խոստովանիլ տուէք իրեն : Աղջիկս
չի կրնար դիտնալ այդ մասին...

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Որքան ստեղծ, որ հայրս կ'ապրէր, դիտեմ, որ երջանիկ
էիք հետը, կառարկապէս երջանիկ : Եթէ կրնաս՝ ուրացի՛ր :

ՄԱՅՐԸ. — Չեմ ուրանար...

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Համակ սէր էր քեզի հանդէպ... : Ծարձակ դուրգուրտ
վերարերումով : (Տգեկին ուղղելով խօսքը, կատաղութեամբ) : Պօսէ՛,
դո՛ւն խօսէ, ըսէ, թէ ճիշդ է ըսածս. խօսէ՛, ապուշ :

ՄԱՅՐԸ. — Հանդիսա ձգէ երեխան : Ինչո՞ւ կ'ուզես զիս իբրեւ արեւախա ներ-

կայացնել, աղջիկու Ես երբեք չուզեցի հօրդ յիշատակը անարդել, նը-
ւաղազոյն չափով իսկ: Ըսի միայն, թէ ո՛չ իմ հաճախս համար էր,
ոչ ալ իմ յանցանքով լքած էի տունս ու գաւազս:

ՀԱՅՐԸ.— Բացարձակապէս ճիշդ է, պարոն տնօրէն: Ե՛ս այդպէս փոխա-
քեցայ:

ԱՌԱՋԻՆ ՄԵՄ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ (միւս դերասաններուն) — Ահա, իրապէս տա-
րօրինակ տեսարան մը:

ՄԵՄ ԴԵՐԱԿԱՏԱՐԻ ՀԻՆ. — Ներկայացում մըն է, որ կու տան մեզի:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ. — Անպատ մըն ալ այսպէս թող ըլլայ:

ԲԵՄԱԴՐԻՉԸ (տր սկսած է իրապէս հետաքրքրուիլ) — Յետո՞յ. կարելի՞ է
չարունակութիւնն ալ իմանալ:

ՏՂԱՆ (ընկալի ին մտեմալով, պաղարիւն, հանդարտ ու հեղմանքով) —
Պիտի տեսնէք, որ հիմա ձեզի պիտի խօսի փորձութեան սատա-
նայէն:

ՀԱՅՐԸ. — Հարիւր անգամ ըսած եմ ձեզի, թէ դուն շնորհալու թուի մըն ես:
(Բերանդրիշին): Ձիս կը ծաղրէ, այդ նախադասութեան պատճառով,
զոր ինքզինքս արդարացնելու համար դատած էի:

ՏՂԱՆ (արհամարհանքով) — Այո, նախադասութիւններ... .

ՀԱՅՐԸ. — Նախադասութիւններ: Կարծես թէ չբացատրուող իրողութեան
մը, մեզ կրծող շարիքի մը դիմաց, ամէնուս համար ալ մխիթարանք
մը չէ դունկի բառեր, խօսքեր, որոնք բան մըն ալ չեն նշանակեր, սա-
կայն մեզ կը հանգստացնեն:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Եւ որոնք կը հանգստացնեն մո՛նաւանդ խղճի խայթերը:

ՀԱՅՐԸ. — Ես իմ խղճի խայթերս չեմ հանգստացուցած քանի մը պարզ խօս-
քերով:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Նաեւ քիչիկ մը դրամով... Այո, այո, դրամով: Այն հա-
րիւր Փրանքով, պարոններ, որ ինծի պիտի նուիրէք՝ իրբեւ վճա-
րում... .

(Դերասաններուն զգուսնքի շարժումը)

ՏՂԱՆ (ին խորք քրոջ ուղղելով խօսքը, արհամարհանքով) — Այս մէկը վա-
տուութիւն էր:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Վատութի՛ւն էր: Հարիւր Փրանքը կապույտ պահարանի մը
մէջ էր, մահոկենիէ միտտանի սեղանին վրայ, տիկին Փաչէի խա-
նութիւն ետեւի սենեակը: Լսած ըլլալու էք, պարոններ: Մէկը այն «տի-
կիններէն», որոնք, հազուադու փերաբեւ ծախելու պատրուակին
տակ՝ լաւ, բայց սղջատ ընտանիքներու երիտասարդ աղջիկները իրենց
ծուղակը կը ձգեն... .

ՏՂԱՆ. — Ուրեմն ի՛նչ. այդ հարիւր Փրանքը, որ ձեզի պիտի վճարէր, եւ որ
բարեբախտաբար — կ'ուզեմ որ նչէք այս պարագան — պէտք չունե-
ցաւ վճարելու ձեզի, հիմա իրաւունք կու տայ ձեզի շարժարեւու մեզ
բոլորս... .

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Մնաց որ, շահած պիտի ըլլայի զանոնք, դիտե՛՛ս:

(Բարձրաձայն կը խնդայ)

ՄԱՅՐԸ (ընդլզուով) — Չե՞ս ամչնար:

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ. — Ամչնամ, ինչո՞ւ. ասիկա իմ վրիժառութիւնս է: Ա՛խ,
պարոն, անհամբերութեան կը սարսում. այդ տեսարանը ապրելու

անհամբերութիւնը : Ա՛խ, այդ սենեակը... Հո՛ն՝ վերարկուներու ապակեփեղկն էր, հո՛ն՝ տիւան մը, հայելի մը, փորաւան մը ու պատուհանին առջեւն ալ մահուկներէ միտումնի սեղանը, հարիւր Ֆրանց պարունակող կապոյտ պահարանը վրան... Կը տեսնեմ այդ պահարանը, կրնամ առնել զայն : Ա՛հ, պարոններ, պէտք չէ նայիք... : Ես դրեթէ մերկ եմ... ես հիմա այլեւս չեմ կարժրիր, որովհետեւ հիմա ինքն է, որ կը կարժրի : (Հայրը ցոյց տալով) Բայց ահա, կ'ըսեմ ձեզի, որ այն օրը գունատ էր, շափազանց գունատ : (Բեմադրիչին) Կըրնաք հաւատալ ըսածիս, պարոն տնօրէն :

ԲԵՄԱՆՐԻԹԸ.— Հիմա ռակայն, ես այլեւս բան մը հասկցած չունիմ որ :
ՀԱՅՐԸ.— Պարզ է, թէ այդպէս պիտի ըլլայ. ամէն կողմէ՛ ուժակոծուեցաք : Պահանջեցէք, որ զիչ մը կարգ մտցնեն պատմածնուն մէջ, եւ թոյլ տրուէք, որ ես խօսիմ, ու նկատի մի ունենաք այն ամօթանքը, որով կ'ուզէ զիս ծածկել, առանց բացատրութիւն մը տալու առիթը շնորհելու ինծի :
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Ոչ. ոչ. տրուելիք կամ պատմելիք ոչ մէկ բան կայ հոս. բացարձակապէս ոչ մէկ բան :

ՀԱՅՐԸ.— Ես պատմել չեմ ուզեր. կ'ուզեմ բացատրել միայն :
ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Այո. բացատրեա՛ ուղած ձեւովը :

ՀԱՅՐԸ.— Այո, ամբողջ շարիքը ատկէ կու գայ. բառերուն մէջ է : Մեզմէ իւրաքանչիւրը իր մէջ աշխարհ մը ունի, եւ իւրաքանչիւրին համար այդ աշխարհը տարբեր է : Ինչպէ՛ս կրնանք իրար հասկնալ, պարոն տնօրէն, եթէ իմ արտասանած բառերը իմաստ ու արժէք ունին իմ մէջ գտնուող տիեզերքին հետ յարաբերարար, մինչ զիս մտիկ ընողը այդ բառերուն կու տայ իմաստ մը եւ արժէք մը՝ ի՛ր ներքին տիեզերքին հետ յարաբերարար : Կը կարծենք իրար հասկնալ. երբեք չենք կրնար իրար հասկնալ : (Ես յայտնալով մայրը) : Իմ գուժս, այս կնոջ հանդէպ ունեցած իմ ամբողջ գուժս, իր կողմէ մեկնարանուած է իրբեւ. ամենակատաղի անդթութիւնը :

ՄԱՅՐԸ.— Այո, քանի որ զիս վստահիր :
ՀԱՅՐԸ.— Կը լսէ՞ք. կ'ըսէ Վստահիր : Կարծած է, թէ ես կը վստամ գրեք :
ՄԱՅՐԸ.— Դուն խօսիլ դիտես, ես չե՛մ դիտեր... : Բայց կ'ուզեմ, որ հաւատաք ինծի, պարոն, թէ ինծի հետ ամուսնանալէ ետք... : Եւ ինչո՞ւ ամուսնացաւ ինծի հետ. ես խեղճ ու համեստ աղջիկ մըն էի :

ՀԱՅՐԸ.— Եւ ճիշդ այդ համեստութեանդ համար էր, որ հետզ ամուսնացայ. զու համեստութիւնդ էր, որ կը սիրէի զու մէջդ, կարծելով... : (Մօրը միտումնալի շարժումներուն դիմաց, հայրը ձեռքերը կը բանայ, անգորութեամ արտայայտութեամբ մը, կնոջմէն հասկցուելու անկարելիութեամ դիմաց. ու կը դառնայ բեմադրիչին) : Ո՛չ : Կը տեսնէ՞ք. ո՛չ կ'ըսէ : Իր խլութիւնը, իր ուղեղային խլութիւնը ահաւոր է : Սիրտ ունի, այո՛, սիրտ ունի՝ իր զաւակներուն համար : Սակայն ինք խուլ է, պարոն. յուսահատակտնօրէն խուլ է իր ուղեղը. խո՛ւլ :

ԽՈՐԹ ԱՂՋԻԿԸ.— Բայց ըսել տուէք իրեն նաեւ, թէ ի՞նչ բանի ծառայած է իր մեծ խելքը :

ՀԱՅՐԸ.— Օ՛հ. եթէ մարդ կարենար նախատեսել, թէ ինչքան լարիք կրնայ ծնիլ իր բարի ցանկութեանընէն...

ԼՈՒԻՃԻ ՓԻՐԱՆՏԵԼԸ

(Շար. 1)

Ի Մ Ն Ո Ր Բ Ա Ր Դ Ի

Խշշում է սրտիս ուռին —
Տխուր է հրգս, գիտեմ, —
Տես, բեհուած հագուդ տուռի՞մ՝
Կարօտից լալիս է մեզմ՝

Հոգին իմ՝ փետած որպէս
Արնագոյն բերթեր վարդի՞
Փռե՛լ եմ ահա, սես, ես,
Ուրիզ տակ, իմ նոր բարդի:

Թելերը հայրենարոյր
Խորախոր քա արմատի,
Խրուել եմ խոր, սիրաբոյր
Սրտի մէջ, տե՛ս, Արմատի,

Եւ դու սմուում ես նրա
Ու նա՛ քա աւշով սրտի,
Խշշացո՞ւ աւ հրգս վկայ,
Սրկի՛ր իմ, իմ նոր բարդի:

Կեանքի այս քարտու ճամբան,
Ա՛յո, սես, ո՞վ պիտո՞ հարթի,
Եթէ ոչ՝ մեր ամիսափան
Սէրն այս, իմ նոր բարդի:

Հին կազնի, իմ նոր բարդի,
Թող ձգուի ու փողփողայ
Հասակդ՝ արդար Դատի
Իբրեւ մի արթուն վկայ

Ու դրօշ յազթամակի՛
Շուքի տակ Արարտի:

Թեհրան, 1981

ԱՐՄԱՆՏ

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

Բ Ն Ա Տ Ո Ւ Ր Ք

Ինձ կանչել էին հարկերի հաւաքման քաղաքային հիմնարկութիւնը: Այդ մի անուշիկ բան է: Ամերիկացիները սարսափով են լսում այդ հիմնարկութեան անունն ամէնուրեք: Հարցն այսպէս է դրուած: Եթէ այս երկրում դու ամէնից ծանրը յանցանքը դործես, զեզ թերեւս ներեն, բայց եթէ, ասենք, տասը դոլար, եթէ նոյնիսկ ոչ չո մեղքով, պակաս հարկ ես վճարել, զեզ երբեք չեն ների: Այս երկրի կառավարութիւնը կամ դադանի քաղաքացիութիւնը կամ էլ սեւէ իշխանութիւն եթէ ցանկանում է մէկի օձիքից բռնել, թէկուզ նա երկրի երբեմնի նախագահը եղած լինի, նրա հարկերի թըղթերն են ստուգում: Նման դէպքերում եթէ ամբաստանեալին ստիպում են, որ նա վճարի իրենց պահանջած յաւելեալ հարկը եւ կորչի-դնայ, ապա այդ անձը կարող է իրեն երջանիկ զգալ, որ լաւ պըրծաւ: Բայց պատահում է նաեւ, որ նրա մասին գրեն թերթերում եւ սպանենն բարոյապէս (եթէ նա ճանաչուած անձ է), երբեմն էլ բանտարկեն:



Թէեւ ես վախենալու պատճառներ չունէի, բայց ես էլ անձկութիւն զգացի:

Նախ մի ամբողջ օր ես պիտի զրկուէի աշխատանքից, յետոյ էլ ատելով ատում եմ կառավարական հիմնարկներ ներկայանալու պարտադրութիւնը: Այդ տարիներին ես աշխատում էի գործարաններում որպէս սեւադործ բանուոր եւ տարեկան հազար ութ հարիւր դոլարից ասել չէի վատտակում: Այսօրուայ շաբաթիչով այդ դումարը բաւարար չի համարում նոյնիսկ ինձ նման միայնակ մի անձի գոյապահպանութեան համար: Ահ, մտածում էի ես, երբ հանրակառքի վճարը ինսայու համար քայլում էի հարկահաւաքման հիմնարկութիւնը, կարող է, որ ինձնից յիսուն դոլար ուզեն կամ հարիւր, հողք չէ, կամաց-կամաց կը վճարեմ եւ հողքս կ'ազատեմ:

Հարկահաւաքման հիմնարկութեան տեղեկատուական սեղանն ինձ ուղարկեց երրորդ յարկի վրայ դառնուող մի սենեակ: Այդտեղ մի պաշտօնեայ արդէն ինձ էք սպասում:

— Եիչդ ժամանակին եկաք, — ասաց նա՝ մեքենալարժ մի ժպիտ խաղաղբելով շրթունքներին եւ անմիջապէս անյայտացրեց:

— Ես սիրում եմ ճշգրտագուցութիւն, — ասացի:

Նա իմ ասածի վրայ ոչ մի ուշադրութիւն չդարձրեց, այլ սեղանի վրայից մի

դարձուած Հարցաթերթեր վերցնելով ինձ մեկնեց՝ ասելով:

— Մեր ստուգումները պարզեցին, որ ձեր Հարկատուութեան պատմութիւնը կրասա է մեզ ձօտ: Վերջէք այս թղթերը եւ մէկ-մէկ լցրէք՝ պատասխանելով բոլոր Հարցերին:

Նա չորս կողմ նայեց ու ինձ առաջնորդեց ընդարձակ եւ գորգապատ սենեակի վերին անկիւններից մէկում դրուած մի սեղանի մօտ:

— Մի շտապէք, — ասաց նա, — եթէ այսօր չվերլացնէք, վաղը կը շարունակէք: Սկսեցէք այս տարուանից եւ յետոյս զնայէք մինչև Հազար ինն Հարիւր վեց թիւը:

— Այդ թուին եւ դեռ ծնուած չէի, — ասացի:

— Իսկ Հազար ինն Հարիւր տասը — մէկ թուին:

— Նորից ծնուած չէի:

— Հազար ինն Հարիւր տասըվեց թուին:

— Թոթոյախօս մի մանուկ էի:

— Ես տենում եմ, որ դուք չէք ցանկանում Համադործակցել մեզ Հետ, — դժգոհեց նա:

— Ես մեղաւոր չեմ, որ իմ տարիքն այդ է:

— Կարող էք թուղթ ներկայացնել:

— Ի՞նչ թուղթ...

— Որ դուք Հազար ինն Հարիւր վեց եւ տասըմէկ թուերին գեռ ծնուած չէք եղել:

Ես ծիծաղեցի:

— Ինչո՞ւ էք ծիծաղում:

— Զեր ասած տնճեթեթութեան վերայ: Ոչ ոք իր ծնուած չլինելու Համար թուղթ չի կարող ներկայացնել:

— Ինչու չէ, ձեր ծնողները կարող են մի այդպիսի վկայաթուղթ գրել:

Ես ուզում էի գործածել ամերիկեան «Get out of here» գարձուածքը, բայց յիշելով, որ սենեակը նրան է պատկանում՝ լռեցի: Ես չէի կարող նրան իր իսկ սենեակից դուրս անել: Սակայն ծիծաղեցի սարկաստիկ:

Նա նայեց վրաս եւ ասաց չորս, պաղ ու Հրամայական.

— Ինչ որ է: Պատասխանեցէք բոլոր

Հարցերին:

— Զորջ, արի, — ներս մտաւ մի այլ պաշտօնեայ՝ ամէն մի ձեռքում մի գաւաթ սուրճ:

Զորջը զնայց դէպի իր սեղանը եւ այնտեղ նրանք սկսեցին կուռ-կուռ սուրճ խմել, մանրավէպեր պատմել եւ ծիծաղել:

Դուռը թափով բացուեց եւ ներս մըտաւ մի բարձրահասակ ու վայելչակազմ կին: Այդ յետոյ եւ իմացայ, որ նա քառասունն անց է, բայց առաջին ակնարկով ինձ թուաց, որ քառասուն էր: Նրա դէմքը, թէեւ մաշուած ու դառնութեամբ ազդուած՝ դեռ գրաւիչ էր: Զարմանալին այն էր, որ այդ կնոջ մաշուած դէմքը ամենեւին չէր Համապատասխանում նրա դեռ երիտասարդական թուացող մարմնական բարեմասնութիւններին եւ ճկունութեանը: Մուգ կապոյտ կերպասից կարուած եւ նրա վրայ լաւ նստած բաճկոնը սեղմում էր նրա մէջքը, վեր Հանելով պիրկ կրծքերը: Նա վզին կապել էր ձիւնափայլ սպիտակ մի թաշկինակ, որի ճոթերը իջել էին կրծքի վրայ: Նա ամբողջովին մաքրութիւն եւ կանացիութիւն էր բուրում: Նրա շաղանակադոյն, անհանդիստ մազերը, դէմքը, ձեռքերը, Հագուստը: Բայց թուում էր, որ նա մեղանշածի ճշուածութիւն էր զգում:

— Ինչո՞ւ էք ինձ կանչել, — դեռ դըրան մօտից Հարցրեց կինը իր սեղանի առջեւ նստած Զորջին:

— Ի՞նչ է ձեր անունը, — իր հերթին Հարցրեց Զորջը:

Կինը տուաւ իր անունը:

— Օ՛, այդ դուք էք, — տեղից ելաւ Զորջը, — Համեցէք, Համեցէք նստեցէք:

— Ինչո՞ւ իմ անունը ձեզ զարմանք պատճառեց, — Հարցրեց կինը, եբր նրստեց Զորջի գրասեղանի ծայրին դրուած աթոռի վրայ:

Զորջը շփոթուեց, բայց իրեն դտաւ.

— Օ՛, ես միշտ այդպէս եմ:

— Բայց դուք Հասացիք, թէ ինչո՞ւ էք կանչել ինձ, — նորից Հարցրեց կինը, ոտքը ոտքի վրայ դնելով:

Այժմ ես տեսնում էի միայն նրա կիսադէմքը, նկարէն սրունքը եւ շքեղ կոնքի մէկ մասը :

— Մէկ վայրկեան, — ասաց Ջորջը, ելաւ տեղից, դնաց դէպի մի պահարան եւ այնտեղից մի թղթածրար բերեց :

— Ի՞նչ է այդ, — հարցրեց կինը՝ թղթածրարին նայելով զարմացած :

— Մէկ վայրկեան, — նորից ասաց Ջորջը : Նստեց եւ բացեց թղթածրարը, — ո՛ւր էք սպրում :

— Դուք գիտէք այդ : Եթէ չգիտե՞ս, — ասաց Ջորջը, — ասաց Ջորջը, — ասաց Ջորջը :

— Ես ստուգում եմ : Քանի՞ տարեկան էք :

— Մի կնոջ տարիք չէն հարցնի :

— Մեր խօսակցութիւնը պաշտօնական է, — ձայնը խտացրեց Ջորջը :

— Էլ ի՞նչ հարցում ունէք :

— Ինչո՞վ էք զբաղւում այժմ :

— Այժմ հանգստանում եմ . . .

— Դուք շատ երիտասարդ էք երեւում հանգստանալու համար :

— Ենթադրեմք : Բայց ես տասը տարեք է ինչ հանգստանում եմ . . .

— Ի՞նչ էք ստուգում : Մեր երկրում կանայք վաթսուներկու տարեկանին են հանդըտեան կոչւում :

— Կինը թեւերը բացեց :

— Ինձ հետ այդպէս պատահեց : Ես երեւի վաղուց եմ յոգնել . . .

— Այո, պատահում է այդպէս : Կենսաթոշակ ստանում էք :

— Ոչ :

— Ինչո՞ւ, — իբր թէ զարմացաւ Ջորջը :

— Իմ զբաղմունքի տեսակն այդ էր : Ես չէի կարող արձանագրուել կենսաթոշակի համար :

— Ի՞նչ էր ձեր զբաղմունքը . . .

— Անհրաժեշտ է, որ դուք իմանաք : Ջորջը շատ անմեղ տեսք ընդունեց :

— Ժպտաց այնպէս, որ իբր թէ իր հարցուփորձը զուտ կամուսր բնոյթ է կրում :

— Մեզ գիճակազրական տուեաններ են պէտք : Կառավարութիւնը ցանկանում է գիտնալ, թէ այս երկրի քաղաքացիները ինչով են զբաղուել, եւ այժմ ինչ են տեսնում :

— Օ՛, այդպէ՞ս, — հաւատաց կինը :

— Միայն ու միայն : Հիմա ասացէք, թէ ինչո՞վ էք զբաղուած եղել . . .

— Անցէք այդ հարցի վրայէն, — խեղճացաւ կինը :

— Անկարելի է :

— Զպիտի տես, — գլուխը բացասաբար շարժեց կինը :

— Եթէ դուք չստէք, ես կ'ասեմ, — ժպտաց Ջորջը :

Այդպէս են ժպտում ուժեղները, երբ թոյլերը փորձում են պաշտպանուել նրանց ճիւղաններին :

— Ո՛չ, ո՛չ : Այս անծանօթ անձի ներկայութեամբ մի ասէք, թէ ես ինչով ըզբաղուած եմ եղել, — գլխով Ջորջի պաշտօնակցին ցոյց տուեց կինը : Նա ինձ չէր տեսնում :

— Այս անծանօթն իմ պաշտօնակիցն է եւ նա գիտէ ձեր մասին : Նա գիտէ, որ դուք երկար տարիներ բ . . . էք զբաղուել եւ ձեր վաստակից պետական հարկեր չէք վճարել :

Կինը գլուխն իջեցրեց կրծքին եւ երկար ժամանակ լուռ մնաց :

— Իմ զբաղմունքն անօրինական էր, — ասաց նա խղուած ձայնով :

— Այդ միեւնոյնն է : Եկամուտը եկամուտ է, որից պետութիւնն իր բաժինն է ստանում :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

— Ես չգիտիի, որ կառավարութիւնը մի բ . . . ից էլ է հարկ հաւաքում, — թրտուաց, թէ ինքն իրեն ասաց կինը :

Ես նայեցի Ջորջի կողմը: Նա նորից ժպտաց: Ժպտաց այնպէս՝ ինչպէս որ ժպտում են հզօրները, երբ իրենց ժանիքները խրում են իրենց զօհի ծոծրակում եւ դգում համը նրա արեան: Ջոհը դալարուում է: Պաշտպանական թոյլ ու անդօր շարժումներ անում: Սակայն հզօրի հողը չէ: Ի՞նչ նշանակութիւն ունի նրա համար, երբ քիչ յետոյ նա ուտելու է զօհի թոքերը, լեարդը, երիկամուկները եւ յետոյ այլ փափուկ մասերը:

— Այդուհանդերձ, դուք խուսափել էք հարկերից, — սառ ու չոր ասաց նա: — Ի՞նչ էք ուզում ասել, — հարցրեց կինը:

— Վճարել այդ յետնեալ հարկերը: — Ես ոչինչ չունեմ:

— Այդ մասին յետոյ: Հիմա դուք ասէք, թէ քանի՞ տարի բ... համբ էք ըզրադուել:

— Այդ բառը մի գործածէք: — Ինչո՞ւ: Ձե՞ որ այդ ձեր արհեստն է, — ժպտաց Ջորջը:

— Դուք լիտի մէկն էք, — բարկացաւ կինը:

— Այդ հանգամանքը չի իջեցնում ձեր վճարելիք հարկերի գումարը: Հիմա ասէք, թէ քանի՞ տարի էք ձեր արհեստով զբաղուել:

Կինը բացեց ձեռքի պայուսակը, այնտեղից մի ծխադուխակ հանեց, վառեց եւ, մի մեծ կում ծուխ ներս քաշելով՝ այն փչեց Ջորջի երեսին: Վերջինը ձեռքի ամփով այս ու այն կողմ քշեց ծուխը ժպտելով: Կինը երկար ժամանակ չպատասխանեց: Վերջում ծախ ձեռքը վերեւից ներքեւ քերեց վճարականապէս:

— Չպիտի ասեմ:

— Եթէ մեզ շատէք, դատաւորին պիտի ասէք եւ այն էլ հասարակութեան ներկայութեամբ: Յետոյ թերթերը կը գրեն ձեր մասին:

— Մի՞ թէ դատարանները զբաղում են հարկերի հարցով, — մանկական պարզամտութեամբ հարցրեց կինը:

— Oh, yes. And how!, — խանդավառուեց Ջորջը:

Թուաց, թէ կինը կ'ուարուեց: Խեղճացաւ: Նրա ձայնը խզուեց, երբ ասաց.

— Տաս տարի...:

— Այդքան քի՞չ:

— Ես երեսուն տարեկան էի երբ ըսկըսեցի:

— Ինչո՞ւ այդքան ուշ: Այդ գործով զբաղուողները աւելի վաղ տարիքից են սկսում:

— Ես մի քանի տարուայ ամուսնացած էի, երբ սկսեցի: Յանկացայ վրէժ լուծել ամուսնիցս...:

— Այդ մեզ չի հետաքրքրում: Ուրեմն տաս տարի՞:

— Այո: Մտաւորապէս:

— Ինչքան էիք վատտակում տարեկան:

Կինը մտածեց.

— Թերեւս տարեկան երկուսից-երեք հազար դոլար:

Ջորջը յետ ընկաւ աթոռի յննակին եւ ձեռքերը բացեց.

— Come on!, Տարեկան երեք հազարից աւելի են վառտակում այսպէս կոչւող «գիշերային թիթեռնիկները», որոնք, իրենց մէջը փողոցային շապտերների սիւներին տուած՝ պատահական յաճախորդի են սպասում:

Կինն ուզեց խայթել Ջորջին.

— Դուք ինչպէ՞ս գիտէք «գիշերային այդ թիթեռնիկները» մասին...:

Ջորջի հողը չէր.

— Մենք ամէն ինչ գիտենք:

— Դուք գրանցի՞ց էլ էք հարկ հաւարում:

— Բոլորից, ով եկամուտ է ստանում:

— Դուք գիտէ՞ք, թէ ինչ է նշանակում մի բ... լինել... Մարմինը ծախել մի ուրիշի, որի երեսին շատ անգամ կ'ափսոսէիր թքեցի: Մի հարբածի անասական ցանկութիւններին ծախուել: Դուք կ'անէի՞ք այդ...:

— Ես տղամարդ եմ:

— Ո՛հ, հիմա տղամարդ «գիշերային թիթեռնիկներ» կան եւս... Խորհուրդ կը տայի անցնէիք այդ արհեստին...:

Ջորջը նորից ժպտաց.

— Մեր հաշիւներով դուք տարեկան վաստակում էիք հարիւր հազար դոլար: Կինը, միանգամայն անտարբեր, զը-

լուսիւր շարժեց բացասաբար .

— Ես ճրքեք այդքան դրամ չեմ վաստակել ասարեկան :

— Ինչո՞ւ ոչ : Դուք գեղեցիկ էք եղել, ինչպէս որ գեղեցիկ էք եւ Հիմա : Դուք sex symbol էք եղել Նիւ Եորքում : Նշանաւոր վարձակ : Park Avenueի վրայ դուք չքեղ բնակարան էք ունեցել : Սպասուհի էք պահել, անձնական ուժէնց թանկանոց ինքնաշարժ : Դուք թաղաւորներ էք ընդունել, իշխաններ, տեքստայի քարիւղարդիւնարներողներ, որոնք դրամը ջրի պէս են ծախսում, արդիւնաբերողներ, վաճառականներ, սենսատրներ, օտարերկրեայ դեսպաններ... Մի գիշերուայ համար ձեր վարձը, ձեր գները շատ ամուր են եղել, այն է՝ Հինգ Հարիւր դոլարից ոչ պակաս : Ճի՞շտ է :

Կինը լուռ մնաց :

Ջորջը նրան նայեց սիրալիր : Թուզի՞վ վերջրից եւ մատիտ ու սկսեց Հաշուել եւ ջնջել : Ջնջել եւ Հաշուել : Ի վերջոյ, նա գլուխը բարձրացրեց :

— Մեր Հաշիւներով այդ տաս տարւայ ընթացքում վաստակել էք մէկ միլիոն դոլար : Բայց որովհետեւ մենք ճշգրիտ աուսաններ չունենք ձեր ձեռքի տակ, ես այդ դումարն իջնցնում եմ վեց Հարիւր հազարի : Եւ որովհետեւ դուք ոչ ոք չունէք ձեր հոգատարութեան տակ, դուք կատարութեանը հենց Հիմա, հենց այս բոպէիս պիտի վճարէք երկու Հարիւր հազար դոլար : Սակայն ես, ձեր businessի հետ կապուած ծախսերը նկատի առնելով՝ այդ դումարը նորից կիսում եմ եւ այն դարձնում Հարիւր հազար դոլար : Հարիւր հազար դոլար եւ ոչ մի սենթ պակաս : Հիմա ինձ ասէք, ե՞րբ էք ցանկանում վճարել այդ դումարը : Հենց Հիմա իմ սեղանի վրայ դուք կարող էք մի լեք գրել : Թերեւս անից ուղարկել :

— Ես Հարիւր հազար դոլար չունեմ, — հազիւ լսելի ձայնով ասաց կինը :

— Ահ, come on! : Երբ դուք մէկ միլիոն դոլար էք վաստակել, ապա անպայման մի Հարիւր հազար դոլար պահել էք անձրհետ օրուայ համար :

— Ես դրամ չունեմ :

— Ուրե՞մը :

— Ես դրամ չունեմ, — կրկնեց կինը :

— Հոտատապէ՞ս :

— Հոտատապէ՞ս :

— Դուք բանա կը դնաք : Գիտէ՞ք այդ :

Կինը թեւերը բացեց անճարակ եւ կլա տեղից : Թուաց, որ բանտի սպասնալիքը չհասու նրա դիտակցութեանը .

— Կարո՞ղ եմ դնալ :

— Այո : Ես հենց Հիմա դատական հարց կը յարուցանեմ ձեր նկատմամբ :

Կինը կլա տեղից եւ դնաց գէպի դուռը : Այնտեղ կանգնեց եւ շրջուեց վեհ մի շարժումով : Բարձրահասակ էր նա, եւ նրա մարմնում տարբարեւ էին կնոջական բոլոր գեղեցկութիւնները :

— Ասում էք բա՞նա կը դնամ, — Հարցընց Ջորջին :

— Անպայման :

— Քանի՞ տարի...

Ջորջը ձեռքերը բացեց .

— Հոտատապ չեմ կարող ասել : Բայց անձուզը տաս տարի :

— Ուրեմն, մէկական տարի իմ տասը տարիներէ վարձակութեան համար :

— Ոչ : Հարիւր հազար դոլարի հարկերից խուսափելու համար :

— Ինչո՞ւ բանտ դնալ, երբ ես կարող եմ վճարել...

— Ես գիտէի, — ուրախացաւ Ջորջը, — ե՞րբ կ'ուղարկէք շէքը :

— Ո՛չ : Ո՛չ դրամով, որ ես չունեմ : Այլ՝ բնատուրքով...

— Բնատուրքով :

— Այո... իմ մարմնով...

— Ո՛չ : Միայն լեքով :

— Տեաէք, ես գեռ գեղեցիկ եմ եւ շատ ցանկալի, — նա ձեռքի ափերը քսեց իր Հմայիչ երաստանքին, ապա երկու ձեռքով բռնեց իր ձեւաւոր եւ պիրկ ըստինքները, — ասում են, թէ իմ արունքներն ամէնից գեղեցիկն են ամբողջ Նիւ Եորքում : Ես գեռ կարող եմ հաճոյացնել ամէնից դժուարահամ մի տղամարդ-ցուլի : Առանց վճարի, ի Հաշիւ իմ յետնեայ Հարկերի եւ կարող եմ պատկել ձեր երկուսի, ձեր մեծերի, կատարութեան անդամների, այս երկրի նախագահի եւ ուժ հետ, որ ցանկանք, — նա արձակեց իր բանկոնի կոճակները եւ ուզեց այն Հանել վրայից, — ձեր երկուսից սվ ցած-

կանում է առաջինը լինել... Համեցէք եւ վայելեցէք... Դուք ինձ կարող էք դորձածել իմ մարմնի բոլոր հմայքների օգտագործումով... Ինչպիսի՞ վայելք մի աղամարդի համար... Ինչպիսի՞ վայելք... O boy!

Ջորջը, որ նրան լսում էր անայլայլ, սեղանի վրայից մի շեք վերցրեց եւ շարժեց օդում.

— Ձեք, տիկին, չեք, կամ էլ բանտ: Թուաց, թէ կինը նրան չլսեց: Նա փորձեց սակարկել.

— Իմ մարմնական բոլոր հմայքների իւրաքանչիւր գործածութիւնն արժէ հապար գուար: Բայց եւ ձեզ հինգ հարիւր դոլար կը հաշուեմ: Եկէք բոլորդ: Երկրի նախագահը, կառավարութեան անդամը, խորհրդարանի անդամները: Ինձ մօտ բերէք օտար բարձրաստիճան հիւրերին, որոնց դուք հիւրասիրում էք այս երկրի զեղեցկուհիներով... Ես կ'ընդունեմ բոլորին, ովքեր ձեր տուած քարտը կ'ունենան իրենց ձեռքերին: Ես պատրաստ եմ վճարելու իմ պարտքը իմ մարմնով...

— Ձեզով միայն, տիկին, չեքով, կամ էլ բանտ, — կնոջ ասածների նկատմամբ անտարբեր, չոր, սառն ու անողոք, ասաց Ջորջը:

Թուաց, թէ այս անգամ բանտ բառի իմաստն իր ամբողջ ահաւոր մանրամասնութիւններով հասաւ կնոջ գիտակցութեանը եւ մխրճուեց այնտեղ: Նրա ցըցուն ուտերում: Կնկուեց: Այտերից թուաւ դեռ այնտեղ մնացած թարմութիւնը: Անմիջապէս ծերացաւ:

— Ուրեմն բա՛նտ, — նուազած ձայնով հարցրեց նա:

— Այո: Բանտ, — առանց դէմքը նրա կողմը դարձնելու եւ շարունակելով խօսել իր պաշտօնակցի հետ, հաստատեց Ջորջը: Ջորջի կեցուածքը մէկին բանտ ուղիղելու որոշում չէր կարծես, այլ պնդելու, որ մէկը կատարի իր վրայ դրուած փոքրիկ ու անմեղ մի պարտականութիւն:

Կինը չըլուեց դէպի դուռը, բացեց այն, ուզեց դուրս գալ, բայց կանգնեց չեմքում, դարձաւ դէպի Ջորջը եւ ասաց զողող ձայնով ու բարկութեամբ.

— Դուք մի հրէ՛չ էք:

Որպէս ցտեսութեան նշան, Ջորջը ձեռքն անփութօրէն տարաւ քունքին եւ ասաց շատ հանդիստ.

— Իսկ դուք մեզ պարտք էք հարիւր հազար դոլար...

ՍՈՒՐԻՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Վ Ա Հ Ա Գ Ն
Դ Ա Ի Թ Ե Ա Ն



Հայրենի ստղանդաւոր բանաստեղծ Վահագն Դաւթեանի ծննդեան 80ամեակին առիթով, Հայաստանի գրական ժամուշի էջերուն կրեւոյտ յորեկտար բանաստեղծին վաստակին նուիրուած Հետաքրքրական գրութիւններ, որոնց շարքին մեր ուշադրութիւնը գրաւեց մա՛ն նաւանը յորեկանական հանդիսութեան ընթացքին Դաւթեանի աշտատանան խոսքը, որուն ամբողջութիւնը լոյս տեսաւ «Գարուն» ամսագրի ընթացիկ տարուան Մտրտի համարին մէջ. «Մեր գայուքեան խորհուրդների նուաստ պարտապանն ենք խորագրին տակ:

Բանաստեղծարունը լեզուով մը իր գրական ինքնակենսագրականը պատկերող Դաւթեանի յիշեալ էլոյթը, տեսական հարցերու բախող իր հարմարեցիկ հաստատմանունը զուգահեռ, կրկնակի որժէջ կը ներկայացնէ մա՛նուանդ այն հանգամանքով, որ բանաստեղծը երկխոս-ծութեամբ կանգ կ'առնէ Հայոց պատմութեան լողախիչ ակունքներուն առջև: Հայ Ոգիին եւ Հայ Լեզուին մեծախորհուրդը զաղտնիքներուն հռուստս պարտապանքը, իր էլոյթի եղբայրակից հասուածին մէջ կը կատարէ յոյժ թելադրական հետեւեալ խորհրդածութիւնը:

«Եւ մեր գայուքեան, մեր յարանուքեան խորհուրդը ինձ պտտկերում է չորս ամբակուտ սիւների վրայ հանգչող ցմրէքի տեսքով:
«Միւնրից տաքիմը մեր մեծամանչ լեզուն է, որ վարերի խորքից դէպի մեզ է գայիս Մեծորոզ Մայտոցի սրբացած կերպարանով:
«Միւսը՝ մեր պատմութեան ու հայրենասիրութեան ոգին է, որ հարեմացու կերպարանով է երեւում ինձ, քանի որ նա էր այդ ոգու յայտնարերոզն ու հաստատողը: Նա էր ասեմանողը հայրենասիրական այն որակի, որը մեզ ուղեկցում է մինչեւ օրս:
«Միւնրից յարաբոլը ստուպանգով ինքն իրեն գտնելու, ինքն իրենից բարբառանալու, ոգու եւ խզնի ամենաբարձր ոլորտներին առնչուելու այն յատկութիւնն է, որն իր հանձնարանով նուաճուց ու մեզ պարզեւեց նորակայ մեծ հզօմարը: Ազարտուող, արմատուող, աչք-լսանքուող ժողովուրդները չեն կարող նրկար կեանք ունենալ:
«Մեր ժողովրդի գորաւոր սիւնրից միւսը, իմ խորին համոզմամբ, աւագ, լուստես, կենսահաստատ փիլիսոփայութիւնն է, որի կրողներից մեծագոյնը Յովհաննէս Թաւանանն է, լուսեղէն բանաստեղծի ու քաղաքացին»:

Այս պայծառ հաստատումին հաջ, բանաստեղծը կ'ընդգծէ, որ Հայ ժողովուրդի գորաւոր գոյութեան շարս սիւնրուն պայտամուկն ու պակասեւումը շօղի ու զքի նման պէտք են մեզ այսօր, եթէ ուզում ենք ապրել իրրու հա՛յ, իբրեւ հայոց նրկիքս:

Վաւազն Դաւթեանի ՅՕամհակին տաճիւ, Սփիւքաւոյութեան հետ Մշակութային կառի կոմիտէի խորհուրդով Քրազիմնի զրկուած Գէորգ Արաշեանի գեղեցիկ յօդուածը հրատարակելէ հաջ (Դեկտեմբեր 1882), ստորեւ ձեռք ընթերցողներուն կը ներկայացնենք վերը ընդդուած կենսատու ակունքներուն համե ու լրջաը թրթուացնող լոքս բանաստեղծութիւններ, որոնք լուսաւոյնս կը զբաւսրին Դաւթեանի ստեղծագործական նոր փուլին յատկանիւնները՝ բարախուն ու վարակիչ:

Լ Ո Յ Ս Ա Ռ Ա Վ Ո Ս Ի



Լձ'յս առաւօտի,
Դու, որ մման ես երկրպագութեան
Եւ ծնկաչափ ես աշխարհի առաջ, ծաղկի ու խոտի,
Մունկի եկ նորից եւ արա նորից դռնով մաքրութեան
Արարողութիւնն այս առաւօտի:

Տես արտ է այնտեղ, արտի եզերքին կանգնած է մի այր
Եւ ասիքի մէջ հասկ է տրորում,
Յետոյ մատներով, որ հաճնաճ են ու խորշակաւար,
Տորենի սիրտն է քննչօրէն շոյում:

Նա ոտից գլուխ բուրում է որպէս ակօս ու ցորեն,
Ու թէ աշխարհում սրբեր կան իրօք, ինքն է արդարեւ,
Նրա դէմ չոճիր երկիւզածօրէն,
Համբարիր նրա մատնեքը քարէ:

Մացառների մէջ խաչքար է ընկած՝ ազմիւ մի բիւրեղ,
Ո՞ւմ տաճութեամբ է փոխուել հրաշքի... Ոչ անուն, ոչ գիր...
Եթէ ուզում ես հրաշք համբուրել,
Չոճիր նրա դէմ ու երկրպագիր:

Նայիր սենեակում խարտեաշ մի կին է հենց նոր արթնացել,
Ու դեռ թափանցիկ շղարշ է հագին,
Ասեմ քեզ թափուն, որ նա գիշերս է միայն կին դարձել,
Չոճիր նրա դէմ, ձեռքը համբուրիր ու երկրպագիր:

Եւ նուոր նայիր, արշայոյսներդ առել է վրան
Ու տնքում է լուռ, որ կեղեւի մէջ արեւ հաւաքի,
Խոնարհուիր նրան եւ օգնիր նրան,
Որ քաղցրութիւնից սրտիկը հաքի:

Լո՛յս առաւօտի,
 Ծաղիկների մէջ բզոց կայ բարի,
 Ծունկի եկ խոնարհ այդ բզոցի դէմ, այդ տաք փեքակի...
 Հացն է արթնանում,
 Նրա բուրմունքը խիղճն է աշխարհի,
 Ամենից առաջ նրա դէմ չոքիր ու երկրպագիր...



Լո՛յս առաւօտի,
 Դու, որ նման ես հսկայ արտոյտի,
 Հաւատացեալդ եմ
 Ու կոյր բուերի երգութեալ թշնամին...
 Այդ նրանից է, որ շատ եմ խմել մութը մութի,
 Որ շատ է գարկել ինձ բայտի քամին:

Ինձ յղացել եմ սեւ տրամութեան տակ սեւ առաստաղի,
 Տուել եղեռնի սեւով մակարդուած մի ծանր արիւն,
 Ու ես երեւի ապրէի պիտի գայլի պէս վայրի,
 Երակներես մէջ միայն մազ՝ ու թռչն:

Բայց իմ արեան մէջ, երեւի անգամ ինձանից թափուն,
 Ապրել է մաքուր լոյսը հաւատի ու այգաբացի,
 Դարերից ձգուող արեւի մի սուրբ երկրպագութիւն,
 Երկրպագութիւն՝ զինու եւ հացի:

Երկրպագութիւն՝ ծաղկած դեղձեղնուց թափող ճնճանքի,
 Երկրպագութիւն՝ տաք ակօսներից ելնող գոլորշու,
 Աղբիւրի տեսքով քարափից կախուած կապուտակ գանգի,
 Կապուտակ ծաղկի, որ ցոյցուում է ժայռի շէկ խորշում:

Ու թէեւ յաճախ գիշերով զարթնում մարմնին իմ արեան,
 Մերթ ունում երկար ու մերթ որբի պէս նա լաց է լինում,
 Բայց, հե՛ղ հայրենի,
 Խաչ ու յարութիւն իմ բազմադարեան,
 Լուսերգութեա՛նդ եմ ես ապաւինում:

Թող արտոյտներիդ թեւերին գողան լոյսերը վերին,
 Ոգուդ հերկերին թող պատարագի կապոյտը անհուն,
 Բուրի կռիւնով եղինջ է բուսնում աներակներին,
 Արտոյտի երգով արտն է հարսնանում...

Լո՛յս առաւօտի,
 Դու, որ մման ես անմոխիր այրման
 եւ մման այնպէս ողջակիզութեան այն սուրբ խորհրդին,
 Ինձ էլ դարձրու քեզ պէս անմարմին ու անանձնական,
 Այրում դարձրու հայոց աշխարհի ճաճեմած շուրթին:

Արարատ յեռն է կանգնել կապոյտում կրծքին վիհ ու վերք,
 Այդ վերքի վրայ ինձ կախիր որպէս անկէզ մորենի,
 Թող նա բոցկլտայ գիշեր ու ցերեկ
 եւ աշխարհներին թող տեսանելի ու յայտնի լինի:

Քարերը այստեղ նահատակների շիրիմներ են սուրբ,
 եւ մշուշները հոգեհանգստի խունկով են մխում,
 Այդ քարերն ի վեր ինձ պարզիր իբրեւ հրեղէն մի սիւն,
 Որ այնպէս թուայ, թէ նրանց սրտից դեռ լոյս է բխում:

Փլումած որմերին գրեր կամ խամրող, բառեր կամ հանգած,
 Խօսքեր կամ մամռած, որ սուրբ են իբրեւ երգում ու պատգամ,
 Այդ բառերի մէջ ինձ շող դարձրու, դարձրու շանթ ու կայծ,
 Որ ցալամ իրենց լոյսով նախնական:

Լերան թեք լանջին տաճար է ւտեր. ընկած որմն ու սիւն,
 եւ մկրտութեան արագանի մէջ եղինջ է բուսել,
 Ինձ լոյսի մաքուր անձրեւ դարձրու այդ արագանում,
 Ու մէջս նորից աստղեր մկրտուեն ու ռգի, ու սեր...

Ծիրանի ծառը ծաղկել, վառում է նորից քաղցրօրէն,
 Բայց տագնապում է հողմերի շնչից,
 Ինձ ցօղ դարձրու, թող առէջքներին աննկատ ծորեմ
 Ու վառուեմ այնտեղ սգեղէն ու ջինջ:

Լո՛յս առաւօտի,
 Ինձ ոտից գլուխ դարձրու այրում,
 Երգում դարձրու, կրակ դարձրու ողջակիզութեան,
 Թող այնպէս թուայ, թէ զինուոր եմ ես դեռ Աւարայրում
 Ու չունեմ հանգիստ, ու չունեմ դադար, ու չունեմ վախճան...



Լո՛յս առաւօտի,
 Դու՛ վերին պարզեւ, վերին դու շնորհ,
 Դու՛ երկուորեակը կանացի մաքուր ու տաք շիկնանքի,
 Վազուց, ախ, վազուց չէի հանդիպել ես շիկնոզ կնոջ,
 Ու պակասել էր հրաշքը կեանքի:

Ու պակասել էր արշալոյսների թիւը աշխարհում,
 Ու պակասել էր շշուկն աստղերի ու աստուածների...
 Եւ սիրոյ համար մի չար աղէտ էր սիրտս գուշակում,
 Գուշակում մահը առեղծուածների:

Բայց թոյլ տուր հիմա, որ քեզ շնչամ գազոնիք մի վերին,
 Գազոնիք, որ անգամ վախեցնում եմ ես ինքս ինձ քացել,
 Կայ երեսանում փխրուն, բարալիկ, լուսաչեայ մի կին,
 Որ դեռ քեզ նման լուս շիկնել գիտէ ու գիտէ թախծել:

Նա՛ գարմանայի,
 Նա՛ լոյս ու մութի անմեկին շաղախ, —
 Ու վրաս մի մեծ թախիծ է իջել,
 Ու մոլորուել եմ, ու կարկամել եմ ես նորից ահա
 Նրա շիկնանքի ու իմ հին արեան ծարաւի միջեւ:

Եւ այս ամէնը տառապելի է ու շա՛տ է ցաւոտ,
 Մանուկ եմ ասես ու բորիկ ստֆս առել է քարի,
 Բայց այդ ցաւի մէջ ինչ-որ մի բան կայ մաքուր ու շազոտ,
 Որ նորոգում է հրաշքն աշխարհի:

Լո՛յս առաւօտի,
 Ի՞նչ անեմ, ասա, ոչինչ չգիտեմ,
 Լո՛յս առաւօտի, իմ սուրբ գաղտնարան ու աղօթարան,
 Այսպէս մոլորուած, այսպէս շփոթուած կանգնել եմ քո դէմ,
 Փառք եմ շնչում, օրհնանք եմ տալիս ես քեզ ու նրան...

ՎԱՀԱԳՆ ԳԱԻԹԵԱՆ

(Համանուն շարքէն)

Յ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ



Առտուն, պէտք կա՞յ ճշդելու՝ այս վէպին սկսած առտուն, Օրիորդ Մոնա Գոհարեան խառօրէն նախատած էր երիտաւարզը:

Տեղի ունեցաւ ատիկա, Գահիրէի Քաղաքէջեայ, յիմար մէկ պարտէզին մէջ, տակաւին անխճող, վասնզի առտուն զովը չէր կոտորած ու կիները, տան ու զաւկի տէրերը, պաղէն չախորժելնուն շափ, աւարտած չեն ըլլար տունին սպասը այդ ժամուն:

Տխուր, ոսկեփողի առանձնութի՛նը այդ պարտէզներուն, որոնք միօրինակ, սպաննող ծածածութեանը մէջ նմանատիպ բնակարաններուն, անակնկալ կերպով կը բուսնին եւ ուր կը մոլորին՝ փախչելու համար տունէդ ու քեզմէ: Քիչ այցուած ու աղքատ այդ խորշներուն մէջ, հողին շունչ կ'առնէ, վտանգէ բռնուած երէին նման, որ թաւառներուն գիծը ձեռք առնէ: Վտանգ: Այո: Ե՛րբ չէ կեանքը:

Կասկածելի նստարաններ, վասնզի մահիճին ծառայած ով գիտէ ո՛ր անտունին կամ հիւանդին: Բախտ բացող պտուաներ, որոնք մեռնելու պատրաստուած կենդանիներու նման — այնքան քիչ է մընացած կեանքին փաստը այդ խոր ոսկորներուն վրայ — անմոռնչ կը քնանան, պանպուի մը շուքին, մինչ փակ՝ թարթիչներու գիծին, սկանակո՛ւտ, հանդոյցը կը շողայ բազմազգի ճանճերուն: Ու անխուսափելի մուրացիկները, ահաւոր իրենց տգեղութեամբ ու դարչաւոտ արդահատանքովը, որոնք մեր զգուանքն ու խղճին խայթը կը բերին մէկ գիծի ու, զուր տեղը, իբր թէ մեր տառապանքը չբաւէր մեզի, անպա՛մ մըն ալ կը վերաւորեն մեզ, մեր սիրտին վատութեամբը:

Անոնք իրարու հանդիպած էին այդ պարտէզի մուտքին: Ո՞վ, ո՞ր ձեռքը իրարմէ փախչելիք մարդերը երբեմն այսպէս կը նետէ զէ՛մ զէ՛մի:

Հակառակ իր սովորութեան, ու աճապարանքն ալ ունենալուն, անիկա պարտաւորուեցաւ ընդունիլ ճէ՛նդ վայրկեանի՞ ժամադրութիւնը ամայի պարտէզին ներս, շատ կարեւոր, զանյետաձգելի՞ խօսակցութեան մը համար: Կան պահեր, որոնց հակակիւճը կը խուսափի մեզմէ: Կ'ընդունինք մեր ներկայութեան՝ մեր ատել կարծած

Վարդը ու չենք կատարածքը, թէ շատոնց չըջուած ենք մեր զգացումներուն մէջ հանդէպ այդ մարդուն: Կը մերժենք՝ մեր սիրելի յաւակնած Վարդը, առանց դիտնալու, թէ դադարած է մեր ընկալչութիւնը հանդէպ նոյն մարդուն: Հողեկան անգործութիւնը կը գործէ մեր մէջ երկու պարագային ալ ու մենք, շատ մը պատճառներով, կը զգուշանաք պատուելի վարչամակը պատրանքին:

Անիկա պարտէզ մտաւ, փոխանակ Սփյանտիտ պանդուկը երթալու, ուր որոշ նպատակներ զինքը ճամբայ էին հաներ Հելուանէն, առաւօա կանուխ:

Անուշտ որ, թեթեւ կամ խոր, շահագրգռուած էր Իշխան Պօզոս Արծրունիով: Աղջիկ էր անիկա ու կ'ատէր Ռիթա ձիվանդադէն: Աղջիկ էր անիկա ու Հնդկաստանը կը զատէր աւելի յստակ, աւելի մօտ ըլլալով Կարմիր ծովուն: Ու ամէն աղջիկ կ'ընկ մը կին է, շատ մը բռնեք ըլլալէ առաջ: Յիսնամեայ փեսացո՞ւն: Ինչո՞ւ կը հարցընէք բան մը, որ շատ քիչ նկատի կ'անուրի կնոջ կեանքին մէջ: Տարիք հարցո՞ւց Սահակ Պարզեւեանը, երիտասարդ, ծոցը մտած ատենը յիսուննոց կրնե՞րուն:

Պիտի երթար պանդուկ, Արծրունի Իշխանին հաւանական շուքէն դուրս, իրական ծանօթացումը բնելու նոր ժամանած երաժիշտ տիկինի մը, անցողակի ներկայացուած բուրգերուն մօտ: Տիկինը, տաքորուած ուռա իշխանուհի մը, ծրագրած էր Արեւմտեան Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ՝ այնքան յաջողութեամբ բեմադրած մէկ դիւթախաղը կրկնել Գահիրէ: Անոր համար, սեղանական գոյնի մեծ հողածու, անիկա ունէր պէտք արեւելեան կնիքով արուեստազէտներու, — տարազ, մոյնք, ձայն ու դիմախաղ կարելի հարազատութեամբ ցայտեցնել կրնալու համար: Պոլիս, ուրկէ անցած էր, անիկա շփուեր էր մերիներուն ու զատեր ճիշդ կնիքը մեր կրնե՞րուն, երբ տարագն ու շպարը լեցնէին կաղտպարը արուեստին: Նուազածոներ, պարիկներ, մարմնեղէն արձաններ, ձայնի սրինգներ, բոլոս-թուներ, մարմնեղէն արձաններ, ձայնի սրինգներ, բոլոս-թուներ, պարիկներ, մարմնեղէն արձաններ, ձայնի սրինգներ, բոլոս-թուներ մէկ խմբուած, արտայայտելու համար երեք աշխարհները (Եւրոպան, Ասիան, Աֆրիկէն) խորհրդանշող իրացումներ, միսի, վանկի, աչքի, բառի մարդերէն, ցեղային գոյնի ճարտար բաշխումով: Փարաւոններու հնօրեայ երկրին վրայ, այդ յղացումները նպատակ ունէին յարուցանել արուեստին մեծ հրաշքը, ամոքող ու խանդավառող Հանրայնութիւնը, դեղնակութեան ու իմաստին, յուզումին ու արբեցումին համայնութեանը մէջ վերնաթիւ եղբայրացում մը աշխարհներու, որ չըլլար իր հայրենակիցներուն կողմէ սուբով ու Հուրով հեռապնդուած բռնատէր տափակութիւնը, ոչ ալ սրինոմի հարկադրուած ցեղային թթու հատուածականութիւնը: Տիկինը, ամէն սլափ պէս խոր ու զգայուն, մտածումները կերպագրել կը ձգտէր զեղեցուկութեան պարունակէն: Անտղիւս վայելչութեամբ մը ձեւի, մորթէն անհաւասարելի, նուաճած էր անիկա իշխանութեան մարդերը: Ինչպէս ուրիշ երկիրներ, Հոս ալ վարչապետը խոստացած էր հովանաւորել ձմեռնային եղանակը, զրօսալըջիկներուն վայելչօրէն փակող այս հանդիսանքը, ուր յոյս կար հրաւիրելու ամբողջ աւագանին: Հանդէսը, նոյնիսկ առանց պարի, կրնե՞րուն կարգ մը պահանջները կը բաւարարէ: Գուցէ Հոն անոնք կ'ապրին առհաւուրեան զարբեր, երբ այդպէս կը տեղուէին յաղթանակներու առջին ու կ'ընտարէին: Սահակ Պարզեւեան, իր կարգին, հաւանած էր Սոնան աը-

բամադրել իբր դաշնակաւար, ու հաւանած նոյն ատեն անոր պարիկաձեւ զգեստաւորութիւն: Ասկէ զտա, Սոնան պիտի տեսնէր Փարիզէն նոր ժամանած բանաստեղծը, Տիրան Տիրանեանը, զբազէտին թանկ բարեկամներէն, ուղիղ ու խորունկ մտաւորական, որ պատրանք չունէր Պարզեւեանին վրայ, բայց անոր անկումներուն հանդէպ կը պահէր մարդկային ներողամտութիւն, խորհելով օրուան, երբ անկումին տարրը, նիւթը ինչար պիտի հողին, ու կը ջանար անոր տազանդը բեղմնաւորելու դժնդակ վաստակը սիրցնել իրեն: Ու կար տակաին օրիչ կին մը, Անգա Միրովնա, ան ալ սլաւ հաւանօրէն, որ շարաթէ մը ի վեր հասած էր պանդոկ ու գտած իրենց հասցէն. ո՞վ դիտէ ինչ նպատակներով:

Մենք ճամբայ կ'ելլենք մեր հաշիւներով: Ե՛րբ տուն կը դառնանք, ո՞վ է մեր տէրը:

Սոնա Գուարեան, գոխանակ այս անձերուն, ըրաւ հանդիպում մը Արտակ Գասպարեանին:

Մտան ներս:
Շատ կարեւոր, անյետաձգելի տեսակցութիւնը:
Անոր առաջին բառը եղաւ.

— Դաւադրութիւն, Օրիորդ, դաւադրութիւն:
Շուրած, վախով, աճապարոտ, դեղնած: Անիկա կը հաւատար իր ըսածին, առանց նկատի ունենալու Սոնային բացարձակ այլուրութիւնը իր շուարումէն: Երբ մէկու մը հոգեկան արժէքը ցած է մեր ներքը, անկէ բխող ամէնէն ծանր բանն ալ կը կրէ ազդեցութիւնը այդ ըմբռնումին: Չենք հաւատար ոչ թէ ստախօսին, այլ՝ արժէքէն մեղի բաշտանօթ մարդու մը ամէնէն ծանրակշիռ ու իրաւ յայտանութեան:

- Դաւադրութիւն:
- Այսի՞նքն:
- Ի՛նչսն Պօղոս Արծրունին:
- Այսի՞նքն:

Անիկա չկրցաւ պատասխանել: Բերանը կը դժուարանար տալազել ինչ որ գծուած էր այնքան յստակ, մաքին մէջ:

Ի՛ր մաքրութեան ու միամտութեան մէջ այնքան ալ ծիծաղելի, սա՛ երիտասարդը, որ կը կ'մ'ար յանդիմանուող երեխայի մը նման: Քրտնաթոր, ընդունեց Սոնային գրեթէ զայրոյթը. նետած խիստ՝ երեսին.

- Ի՞նչը, կ'ըսեմ քեզի:
- Ո՞րքանէ խոցուած ու ամօթէն դողահար, ան արտասանեց (մեր բառերը չեն ըսուիր երբեմն, այլ կ'արտասանուին ճիշտով ու ըսնի) աչքերը փակ
- Մեյիսէ Մելինեանը...

Յիմա՞ր էր սա տղան: Հարցուց մտովի, բայց չըրաւ զայն բառ: Տղուն դէմքին կարդա՞ց նոյն ատեն անհնարին անձուկը, զոր շատ խորունկ կապ մը միայն կարող է ստեղծել մենէ դուրս, բուռն, «հոյակապ» տապալակներու տանն:

- Յետո՞յ:
- Ամբողջ անորն է մատը:
- Ի՞նչը, բարեկամս:

Քաղցր էր անոր ձայնը, յուսադրող ու պարզ, ա՛յնքան՝ որ տըզան չէր հաւատար գրեթէ իր ականջներուն:

- Նախանձ է :
- Գիտեմ :
- Ձեզ կ'ատէ :
- Գիտեմ :
- Բայց շատ գէշ կ'ատէ :
- Գիտեմ :
- Անգութ է :
- Գիտեմ : Յետո՞յ :
- Տղան չպատասխանեց :
- Յետո՞յ, — կրկնեց անիկա, — ինչո՞ւ չէք խօսիր :
- Իշխան Պօղոս Արծրունի՛ :
- Բայց ոչինչ կ'ըսէք :
- Իր յօրինումն է, միակտուր ու բացարձակ :
- Ի՞նչը :
- Ի՞նչը : Ըսել է կ'անդիտանար :
- Շեշտ նայուածք, գէժքի արձագանգ վեր էին շինծու կամ նենդ կամ շատախօս, խեղաթիւրեալ իրարանցումէն : Տղուն ամբողջ ասուածը ինկած էր իր բառերուն մէջ :
- Սոնան ծախուած է Իշխանին :
- Ըսաւ վերջապէս :
- Բայց կարծես ինք չըլլար ըսողը, այնքան մէկէն ի մէկ օտարացաւ ինքն իրեն :
- Աւելի տարօրինակը սակայն : Լսողն ալ չըլլար Սոնան :
- Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ ըսէք, Արտա՛կ :
- Առաջին անգամ էր ուղղակի կու տար անոր անունը, առանց վերադիրի : Պաշտօնականութեան այս բարձուժը հաճոյքով ու յուզումով ողողեց տղան, փրցնելով կապերը, վախերը, վարանքները անոր հարկին :
- Սոնա, եղէք բարի, զիս մտիկ ընելու : Մի վախճաք, պիտի չխօսիմ չին, ծանօթ բաներէ :
- Պորունկ, թախծագին յուզում մը կ'ընէր անոր անձը, արտասայուման ձեւը ճիծաղելի՛ ինչպէս սրատուէր : Կ'ըլլայ ասիկա, երբ մեր գէժինը մեզ կը սիրէ կամ կ'անարգէ :
- Անչուչտ, սուտի իշխանուհին :
- Ո՞վ՞ ատ իշխանուհիդ :
- Մելիկն է Մելիկեանը :
- Խնդաց աղջիկը, ակամայ ու տրտու՛մ :
- Յետո՞յ :
- Իր խելապատիկէն, միակտուր յօրինուած այդ ամէնը :
- Սոնան չէր անդրադառնար : Ու կը պատրաստուէր հարցումը կրկնելու, երբ տղան կանխեց զինքը .
- Պանդսկ կ'երթա՞ք, թէ ոչ :
- Այո՛ :
- Լաւ, շատ լաւ եղաւ այս հանդիպումը : Կարծես մէկը վերէն կը կարգադրէր :
- Ինչո՞ւ :
- Անչուչտ : Ոչ մէկ պատճառ կար, որ անցնէի այս կողմերէն : Աւ հրաշք, որ հանդիպէի ձեզի :
- Ոչինչ այնքան անսանելի է, երբ տրամաթիք վիճակը կ'առըն-

Թերազրուի անդէս վիճակին: Աղջիկը անտարբեր էր: Հինգ վայրկեանը աւարտած:

- Պիտի տեսնէ՞ք:
- Շատեր ունիմ:
- Ա՞ն ալ:
- Ո՞վ:
- Իշխան Արծրունին:
- Երէկ չէ՞ք տեսած զինքը:
- Ոչ:
- Չէ՞ք եղած իր սենեակը:
- Ո՞վ, ե՞ս: Ի՞նչ արկէ ոչ:

Մտածեց: Կը յիշէր երէկ պանդոկ ըլլալը, արուեստագէտներու խումբին հետ, բուրդերը այցելելու նախապատրաստութեամբ, բայց հետո էին Մարանը, Պարզեւեանը, Միհրան Սիւլեանը եւ ուրիշներ, ազգային շրջանակէ: Կը պակտէր Ճիվանդադէն: Ի՞նչն էր:

- Բայց ի՞նչ է իմ գործը այդ մարդուն սենեակը:
- Սակայն անիկա երդում կ'ընէ, որ թեպ տեսած է:
- Ո՞վ, անիկա:
- Մելինէն:
- Ո՞ւր է տեսած:
- Իշխանին սենեակը:
- Անշուշտ գիշերը կէսի՞ն:

Այնքան անակնկալ էր այս նախադասութիւնը, որ կորսնցուցած էր հեզնութեան իր վարչամակը:

Տղան, կարմրած մինչեւ ականջները, նայուածքը խոնարհեց գետին: Ու չէր գիտեր ինչուն:

Սոնան խնայ: Կրնար կատարել, լալ, պոռալ: Միայն խնայց: Նոյն ատեն անոր աչքը ինկաւ թիւի ժամացոյցին: Քանի մը ճաճանչ, ապակիէն, որոնք ցրուեցան դէմքին ու մազերուն, զուարթ ու պիտուն:

- Բարեկամս, արդէն անցած ենք սահմանուած վայրկեանները ու ես գործ ունիմ:
- Սոնա՞...

Եղեբական, սիրահար, յիմար:

- Խօսք տուիք, որ չխօսիք հին բաներէ: Ըսի ձեզի, թէ գործ ունիմ:

Անտարբե՛ր, թեթեւ: Ի՞նչ քիչ բան է երբեմն երկինքին շղարշը, փոթորիկէն պահել մը առաջ: Կրկին նայեցաւ ժամացոյցին: Տըխուր էր սակայն:

- Կը ցաւիմ, որ շատ կարծուր մեր խօսակցութիւնը զրեթէ աղայական կը դառնայ:

Անիկա ելաւ ոտքի:

- Գիտէ՞ք, թէ նստած էին զով զովի, փայտեայ քանափէի մը վրայ:

Արտակ Գասպարեանը, առանց շարժելու տեղէն, բռնեց անոր ձեռքը: Ուժգին: Կան բաներ, որոնք չենք չափեր: Երեք տարի է անիկա կը սիրէր այդ աղջիկը ու կը դողար զղեստին իսկ ջոռելու: Ուրկէ՞ առաւ ուժը, զայն վար, նստարանին քաշելու:

Ամէն կին, նման պահերու, կ'ընկճուի շատ մը բաներէ: Փախուստը որոշում մըն է ու վերջ մը: Անկէ առաջ: Այսինքն՝ երբ մեր

Թաքուն լարերը թրթռման կ'ելլեն՝ Ո՞վ նստեցուց Սոնան, ու նըստեցուց, տարբեր :

Մութացիկ մը քաղցեց իր ձայնը ու կեցաւ :

Ճաններու տակ կորաբաժակ աղտեղութիւնն էր անիկա : Կը հոտէր հող՝ ինչպէս աղ : Տղան նետեց անոր ոտքերուն քարիփան(*) : Պարտէզէն կը կտորէր քէշ-քէշ դո՛ւթուքէնը : Անպուհներ, վանդակորմէն ներս, խուպարիու ու աղեղ : Յանտա ամերիկուհիներ, իրենց մէջքը հասնող շուներ ետեւնուն : Ուրիշ մարացիկ մը, որ տեղը բըռնեց հետացողին : Թարիփա : Յետոյ՝ երրորդ մը : Թարիփա : Ու շատրան : Ու պզտիկներ, մէկ բերան՝

— Պախշիշ, պախշիշ, ես խավակա, պախշիշ(**) :

Աղտոտ ժպիտ մը կը ծամածռէր անոնց յանկերդը, յամառ ու յաղթական, ինչպէս եւ կը լուսաւորէ՛ր զոյգին պատկերը անդրադարձի մը պէս, զոյգին աչքերուն :

Անոնք ինչպէս իմացան, որ իրենց պատկերին սա զշահեկանութիւնն էր դրդապատճառ այս յարձակողականին : Փողոցը իմաստուն է կ'ըսեն : Իրաւունք ունին : Մարդոց խելքը թուփ տերեւ չէ, որ փոշի դառնայ : Հարկաւ քիչ մը բան կ'իջնայ դետին այն սիրտերէն, որոնք օր մը դողացին այս սալերուն վրայ : Ու փողոցին տղաքը իմաստուն են, կանխահաս իմաստութեամբ : Անոնք չափա՛ծ են այրերու սիրտը, էրբ այսպէս, քիչ մը պահեստի, պանպուխի թաւաւներուն մէջ, խարխուլ քանափէի մը վրայ անոնք կը յամենան կնոջ մը կուշտին : Թող չհասկնան բառերուն լեզուն : Անոնք անսխալ սերտած են մարմինին լեզուն : Անխօս նստիլը հոմանիշ է ծերութեան, ու ծերութիւնը, անգութ, այսինքն՝ շողորմող բլլալէ աւելի, անսարքեր են, նախ՝ իրենց հանդէպ, ո՛ւր մնաց ուրիշներուն : Այս է պատճառը, որ հանպիստ կը ձգենք առանձին նստողները : Ձո՞յգ նստողները : Մութացիկաները, մեծ հօգերաններ, տաղանդով կը շահագործեն հողիին սա զաղփազփուն պահերը : Սէրը, համակրութեանց ամէնէն հոտապատ ձեւը, ինքզինքը պահելու համար, կ'ողորմի առատ : Երիտասարդութիւնը հոմանիշ է հարստութեան, տուրքին ու վայելքին : Տը՛ղա՞քը : Մաղձնային մութացիկաներ, անոնք պիտի չհակասեն իրենց իմաստութեան :

Անոնց աղմուկը նկատուի :

Երիտասարդը, որտեղ, յանդիմանեց զանոնք : Լանճերը, խառնի խառն : Անցաւ պանպուխի ետին : Բարակ փոշի մը եւ մէզի կարծր հոտ մը կը համարէին տարօրէն կծու : Իր բարկութիւնն էր, որ ըրաւ զինքը յանդուգն .

— Որքան շատ եմ ատապպեր :

— Ինչո՞ւ :

— Ձեզի համար : «Ճերմակ դիշեր մը», ինչպէս կ'ըսեն վէպերը, ան՝ որ անցաւ :

Սուա չէր խօսեր :

Սոնան նկատեց, որ արին կտր անոր աչքերուն մէջ : Գէ՛մքը՝ ազօտ ու յողմած : Թրամվայի մը վայրագ, անսարքեր ճոխնչը,

(*) Թարիփա = Եգիպտական դրամ՝ ֆան փարանց :
(**) Նուէր, նուէր, պարոն, Նուէր : Եգիպտական ծանօթ ասուրիւն, որով կը ուրակոծուին օտարականները, ֆարափէն սկսեալ :

պարտէզէն դուրս, ըզկտուող անասունի մը նման: Աղջկան շրթները փոթուեցան: Այդ կարգի ձայնը զայն կը վրդովէին առանց պատճառի: Տարաւ թաշկինակը շրթներուն: Զանգակ մը: Եկեղեցի՞ մը:

— Ես քեզ չեմ հասկնար:

— Դուք զիս չէք հասկնար, որովհետեւ չէք սիրեր:

— Դո՞ւք:

— Ես ձեզ կը սիրեմ ու դուք էք, որ չէք հասկնար ատիկա:

— Նորէն...

— Հին բաներ չեն տտնք: Արդէն ես դիտած եմ ատիկա իմ մէջ: Ամէն բան մէկէն կ'ըլլայ նոր, երբ կը մտածեմ քեզի: Զեր լուսանկարն իսկ ամէն օր կը դառնայ նոր, երբ դործէն դարձիս, պահ մը կը նայիմ անոր: Ամէն օր նոր է իմ սէրը:

— Դուք զիսէ՞ք, թէ ի՞նչ է սէրը:

— Արդար բան չէ մէկը այսքան ծաղրելը, Սոնա:

— Բայց, բարեկամս, ճանչնալը հասկնալ ըսել է: Ու հասկնալը իմաստուն կ'ընէ մարդը: Ու կը զարմանամ, թէ ինչո՞ւ կը յամոհք հաւատալ բանի մը միայն մէկ երեսին:

— Զեռքս չէ:

— Վէպերու լեզու: Հազար անգամ ըսած եմ ձեզի. ես ձեզ չեմ կրնար սիրել: Այո՞: Կը հասկնա՞ք: Ես չեմ հաւատար այդ բանին:

Յուզուած էր անկա, ու շնչառութիւնը՝ արագ:

— Մի պատասխանէք ինծի: Զեր յամասութիւնը, միամտութիւնը, անարագութիւ ռոմանթիկը (Պարզեւեանին սիրական բառերէն) տառապանք են ինծի համար: Ո՞րն է աղբիւրը այս անհասկացողութեան: Ի՞նչ է ձեր գործը աղջկան մը հետ, որ

— Կ'ազաչեմ, Սոնա:

Բարձրացուցած կամ այլայլա՞ծ էր շէշտը, տղուն միջմտութիւնը հրախրելու աստիճան:

— Ես իսկական, պոխիւիչ, — ճշաց մուկ մը, պանպուին ետեւէն:

Երկուքն ալ ցնցուեցան: Կու գային իրերու աշխարհէն: Անոր բերանը թաշկինակին մէջ ըրու փոքր հեծք մը: Ամփոփուեցան թեւելած գիծերը դէմքին ու ինկու վրան զուսպ բան մը: Ըսես, պայծառ անոր մարմինը բոպէարար շղարուեցաւ կիսաստուեր այն տրամութեամբ, որ աղջիկները այնքան տարբեր, անիրական, անդիմադրելի կ'ըլէ: Վիշտը, երբ չի յաջողիր մեք դէմքը սպաննելու — նայեցէք ծերերուն ու համոզուիք պիտի այս տարազին ճշողութեան — զայն կ'ընծայէ տարօրէն խռովել, էպ ու քնքուչ: Պակա՞ս՝ արցունքը միայն:

— Ո՞չ մէկ զգացում, ինծի հանդէպ:

— Տղա՛յ, ինչո՞ւ կը նեղես զիս: Գիտես, թէ քեզ կը յարգեմ, ինծի ծանօթ բոլոր երիտասարդներէն աւելի: Եթէ կը գնահատեմ — էթէ երբեք բան մը կ'արժէ ատիկա — պարկեւտութիւնը, լըլութիւնը, կորովը (անպալարար կը կրկնէր Պարզեւեանին մտածումները, զրեթէ ձեն ու կտրուածքը իսկ անոնց, տղուն մէջ առաջացնելով աւախորժ բան մը), որոնք հաստատ բան մը կը շնորհեն քու անձիդ: Թէ կրնամ՝ նեղութեան, մտանգի պահու մը, անվարան դիմել խելքիդ ու բազուկիդ: Թէ կարելի է քեզի հետ անցընել հաճելի մամեր խօսքէ ու միտքէ:

— Ուրի՞չ բան է սէրը:

Անակնկալ՝ հարցումը: Վասնզի աղջիկը դողաց ոտքէն դուրսը: Դառն ծիծաղ մը: Ու սուղուեցաւ անոր նայուածքը աղայէն ներս: Հոնդարտ, ան պատասխանեց.

— Անկէ զէղի սէրը անգունդ կայ, գաւազն, կը հասկնամ:

Անդունդ:

Նոյն բովելին անոր այցելեց տխրութեան աւելի թանձր մշուշ մը: Քոսմենի անոր ճակտին կնճիտ մը ուրուացաւ, թրթռաց, մեռաւ, նման վերերէն անցնող թռի մը շուքին, ձիւներուն վրայէն: Յաջորդեց անկայող հանդարտութիւնը: Ծոսողը ըլլաւ ծեր, ըլլաւ տալայ, բայց ոչ երիտասարդ աղջիկ մը, որ կուշտիդ կը նստի ու կրակ կը բանայ վրայ: Տարիքէն շատ վեր այս մտայնումը կը հոծնար մա՛նաւանդ պայծառ տրամութեան խորը անոր աչքերուն, ուրկէ մտածումը, հեռացումը, կոծումը գուրբ արագ ու հեռուն, կ'անցնէին ու կու գային: Բուս, անոր միտքը ինար վարանումի մեծ ասեղին: Յայտ է, որ խօսիլ կ'ուզէր, բայց կ'ընկրկէր ըսելիքէն:

— Խորհա՞ծ ես երբեք ահաւոր այն դժբախտութեան, որ օր մը կրնայ հասնիլ քեզի:

— Դժբախտութիւնը միակ հաստատ բանն է այս աշխարհին: Անիկա կու գայ ուղեւոր ու շուքէն: Ու շա՛տ՝ անոր ճամբաները:

— Ոչ, ոչ: Ան՝ որ կրնայ գալ, պիտի գայ մինակ իմ ճամբովս:

— Քու ճամբո՞վդ: Բայց թող գայ բարի: Մա՛հն ինք, հերիք է, որ գայ քու ճամբովդ:

— Վէպերու տղայ: Կը կարծէ, թէ խոչոր բաներ կ'ըսէ ինծի: Չի գիտեր, թէ ամէնէն պարագայ բանը կ'ըսէ այս աշխարհին:

— Մա՞հը:

— Ուրի՞չ ի՛նչ:

— Քոսն տարեկան էք, Սոնա:

— Քոսն: Ես ըսեմ հարիւր, դուն ըսէ՛ հազար: Գիտցիր, որ թեփ է տարիքը, խոտ, հող: Ատիկա գիտցածն է ամէնուն: Ինչ որ չեն գիտեր՝ մոռնա՛ն է, որ կը գոյանայ ամէնէն անապակ խմորին ծոցը: Մոռնա՛րը՝ դեռ տասնը՛նգիին: Ով գիտէ ո՞վ կը չինէ: Բայց կայ անիկա: Ինչ կը կարգաս իմ գլխուս, քու անարդի բարբառովդ: Գնա՛, մեծցիր, հարստացիր, գործարաններ շինէ, վարէ ու քալէ քու ճամբովդ: Բայց մա՛նաւանդ ամուսնացիր: Ամուսնացիր, չեմ ըսեր Մե՛լինէներուն հետ, այլ՝ մէկու մը հետ, որ ըլլայ քեզ տխուր, քեզ ապրած, ու կարենայ քեզ սիրել: Մենք մոռցած ենք սէրը: Ու կը զորմանանք, երբ մեզի կը խօսին անոր անունով: Անգրէ՛հեղեղեան այդ յիմարութիւնը:

— Պատերազմի սերունդ:

— Օ՛, ոչ: Հոս մի փնտուր այդ սերունդը: Մեր աղջիկները ասակէ ասղի սերունդն ալ չեն տակաւին հոս: Եգիպտոսը չի նմանիր ուրիշ աշխարհներուն: Ու անոր աղջիկները կնիքին տակն են նեղուհան աստուածներուն:

Մեծերու չփութին մէջ փոքրերը կ'օրինակեն ամէնէն շատ անոնց ինքնատուութիւնը: Գրագէտին սովորութիւններէն ազդուած, Սոնան սրցուցած էր գիտելու իր դպրարանները: Ինչ որ դպրոցին չորս պատերը կու տան տղոց, անցնալին մէջ կենալ կրնայու ճարտարանք մըն է յաճախ: Վտանդ կայ, երբ այդ ճարտարանք նպատակ մը դառնայ ու մաս կազմէ խառնուածքին: Ինչ որ երիտասարդը կը

սորվի մորթին ու քիթին ճամբովը, հազար անգամ կ'արժէ աւելի, քան գիրքերուն իմաստուն, սակայն ցանցառ ցուցմունքները: Սոնան շատ մշակուած իր շիղերով թէ կեանքին լուծովը առած էր սա վի-
րաւոր իմաստութիւնը: Անիկա շարունակեց:

— Սա օտարութեան մէջ (ինչ տխուր յուզումով անիկա կը խորհէր իր հայրենիքին) քեզի պէտք եղածը գուարթ ու քաղցր հոգի մըն է, որ կեանքէն դիտուած յոգնութիւնը մեղմէ վրայէդ: Վազես ու վազես, բայց հեշտ սպահումութեամբը խորշին, որ թուկդ է, ու դառնաս անոր, պահես գլուխդ անոր մտերմութեանը մէջ: Հասցնէ քեզի զաւակներ ու դիտնայ զորովել անոնց՝ ինչպէս թու վրադ: Մոռացնէ քեզի դառնութիւնը ճամբուն, որ պիտի յանգի անխուսափելի վերապին: Գո՛ւն, դործի տղա՛յ, ընտրէ աղջիկ մը, որ կիսուի քեզ մով: Ի՛նչ է կապդ Սոնային հետ, որ չի գիտեր, թէ ինչո՞ւ կ'ապրի:

Անոր շէշորը, գալարուն ու թաց բան մը եղաւ: Երկրորդ ան-
գամ էր, որ խօսքին հետ անհամապատասխան այս տրամութիւնը իւքնաբերաբար կը բուռնէր այդպէս:

— Որո՞ւ համար, Տէր Ատուած, — չկրցաւ չըսել:

Գրեթէ լաց կար ձայնին մէջ:

Բայց բռնեց ինքզինքը ու շափազանց խիտ՝

— Հեռացի՛ր իմ ներկայութենէս:

Մատան իսկ չեն վտարեր այդ ձայնով:

Խիտ, դածան, բայց բռնի՛ր, ներսէն վերաւոր այդ ելո՛յթը:

Որ իր ուժգնութեամբը տեղական, այսինքն՝ եզիպտական արժկա-
յոյզ կռււնները կը յիշեցնէր, ա՛յնքան՝ որ պանպուխի ետեւէն ելան ծա-
փի, կրկնելով աննահանջ իրենց յանկերգը: Արտաքին աշխարհին այս խնդկատակ դրոյութի՛ւնը: Մեծ կիրքերու տենդին մէջ զայն չենք լը-
սեր: Բայց թափէն յետոյ, կրկնապէս կը վախնանք անկէ:

— Հեռացի՛ր, կ'ըսեմ քեզի:

Բայց խոնա՛ւ: Ի՛նչ ալ ըլլայ զարկը մեր կիրքին, ի՛նչ ալ ըլլայ խստութիւնը մեր հարուածին, քանի որ պիտի անցնին արցունքին դօտիէն, կը մեղմանան: Անոր աչքէն կաթած էր արցունքը: Յետոյ ինքնազստումի վայրուղ փորձը ըրաւ անոր պէ՛տքը անտանելի շարու-
թեամբ ճերմակ բան մը, սղոց ձեռքով շինուած թուղթի դիժակի նը-
ման: Անիկա գայրազին պոռաց:

— Դուն կը շահագործես իմ տկարութիւնս:

— Սոնա՛:

— Ո՛չ, չեմ ուզեր խօսիս: Հեռացի՛ր, կորսուէ: Հեռացէ՛ք բո-
ւորդ, բուրդ, որոնք գիտակի շուրջ կը զառնաք ագռաւին նման ու աղ-
ջիկներուն միտերը կը հետապնդէք, շսպառելով իսկ անոնց մեռնելուն:

— Ինչե՛ր կ'ըսես, Սոնա:

— Կ'ըսեմ անխարդախ իմ մտածումը: Կ'ըսեմ ողբերգութիւ-
նը բոլոր աղջիկներուն, որոնք հաւատացին ու մեռան:

— Մեռա՞ն:

— Ի՛ հարկէ: Մարդ մէկ անգամ չի մեռնիր:

— Ձեմ հասկնար...

— Պէտք ալ չունիս հասկնալու: Ձեր ըրա՛ծը: — Մեռելը կըր-
կին մեռցնել է անիկա:

Անիկա հզօր ճիգ մը կ'ընէր՝ քիչ մը արիւն, բանականութիւն
փոխադրելու յուզումէն ու գայրոյթէն ալլամուր իր արտայայտու-
թեան մէջ: Բայց զինքը զլեռնող մտապատկերը կ'արգիլէր իրեն այս

չունչը անգամ Ո՛վ զգողանքը երիտասարդ աղջիկի: Ձոր կը կարգանք վէպերու մէջ ու կը մոռնանք ատան հաճոյքին մէջ լուսարմ մեր վրայ թողած ժանդն ու ժողիբը: Ո՛վ զգողանքը երիտասարդ աղջիկին, որ կը կրէ ծերութիւն մը իր կուրծքին վրայ, կը կրէ լուին, մօրը աչքին տակ ու լախօրէն բա՛ց՝ դէպի կոյանոցը ապրած, բլլած, շարաւոտ հոգիներուն, սրտնք ի դուր զիրենք կը պատմուճանեն տաղանդին բոլոր ծալքերուն ու ծիւծիւծներուն մէջ: Կու գայ պաշտ, երբ մատաղ աղջիկը կը փետէ այդ ծիրանիները ու մերկը կ'ուզէ: Ո՛վ զըզուանքը գոթով, հաշիւով, խնրում յանձնուած կամ յանձնուելու վրայ աղջիկներուն:

Անոր զայրոյթը անցաւ մարմինին, որ կը զոզար:

— Գացէ՛ք, ամէ՛նքդ, ամէ՛նքդ:

— Թող շտեմենն իմ աչքերը, ինչ որ ձեր արտայայտութիւնը եղաւ:

— Հեռացէ՛ք, մղկցէ՛ք, որ հնդիկներուն ըրածին նման մեռելները շորնան իրենք իրենց:

Թուշ ու վիրաւորիչ շեշտ կար այս ամէնուն մէջ: Ինչո՞ւ չէր անդրադառնար, որ բունը էր պինդ տղուն ձեռքը, հաստատ, որեւէ ատենէ աւելի հաստատ, ըսես փաթթուած անոր մատաղ զօրութեան: Ու փոխանակ վանելու, կը դամէր զայն կրկին: Նոյնիսկ ոտքի չէր:

— Հաճո՞յճն ունիս դիտ լացնելու, երբ շատ լաւ գիտես, որ այս խօսակցութիւնը արցունքի կը տանի:

Արտակ Գասպարեան ծանօթ չէր այս տեսարաններուն, բայց ոչ այս յանդուժութեամբ: Պատերազմէն կրճուած շիղերը յաճախ ան կը նկատէր պատճառ այս հոգեկան կտրումներուն: Սոնային համար անիկա մուտք կու տար ուրիշ ալ զսպանակներու, որոնցմէ կարեւորը — զմօրը՝ պարագան — կսկծազին խորութեամբ կը վիրաւորէր անոր միամտութիւնը: Նրբացած շիղեր: Հարկաւ: Ի՞նչը չէ արու եւ էդ, որպէսզի շիղերն ալ շըլլան:

— Սոնա՛:

— Լռէ՛: Ու գնա՛ մէկդի: Ծամբա՛դ: Ու յետո՛յ...

Տղան կարգաց անոր դէմքին անօրինակ վարանք մը, որ աղօտեցաւ սակայն շուտ, տեղը տալու համար վնասկան տարազի, սկուաններու կծրտումով մը լուսաւորուած:

— Վերջնական: Այսօր իսկ կը տեսնեմ Իշխան Արծրունին: Ու կը վերջնայ ամէն բան: Ամէնէն առաջ՝ քու յիմարութիւնդ: Վասնզի ներքէ, որ շունենամ ուրիշ բան վիճակի մը համար, զոր հազեր ես երեք տարիէ ի վեր: Աղջիկները, գիտցի՛ր, սիրելու համար այսքան չեն սպասեր: Ու սէրը ծախու, ծախուած ապրանք է հիմա: Ձե՞ս լըսած Պարզեւեանը, որ մունծտիկի մը վայել լըլուծեամբ գին կը կտրէ: Այսօր կը տեսնեմ Իշխան Արծրունին:

— Ո՛չ, — ուժով ու հպարտ աւելցուց տղան: Ու անոր շեշտը կը յայտնէր հասունցած կշիռ:

— Ո՛չ, պիտի շըլլայ այդ մէկը:

— Ո՞ր մէկը:

Տղան լուռ, խոնարհեց աչքերը: Դող՝ անոր մատներուն մէջ ու ջուր, ա՛յնքան՝ որ անոնց ձեռքերը քակուեցան իրարմէ: Ի՞նչ՝ այս աստիճան տազնապող ճայդ մէկունց մէջը:

— Դուն կը ճանչնաս աստ Արծրունին:

— Ըսի՛ քեզի:

- Այն ատեն :
- Բայց դուն ի՞նչ իրաւունք ունիս միջամտելու իմ սրտում- ներուս : Ինչո՞վ կապուած ես ինծի : Աւելի ճիշդ՝ ինչո՞վ կապուած եմ ես քեզի : Ո՞վ ես դուն իմ կեանքիս մէջ :
- Շատ աւելի բան մը, քան Արծրունին :
- Համձէ՞ :
- Պարզ, Սոնա՛ : Շատ աւելի բան մը :
- Իբար կը հասկնայի՞ն, թէ իրարու գլխուն բառ կը նկատէին :
- Ներէ, որ իրաւունք ունենամ : Բաներ կան, որ գնուելու չեն նորիսկ Հնչկաստանի ամբողջ ազամանչներովը :
- Այո՛ :
- Այո՛ :
- Կա՞ն շծախուռղ բաներ :
- Անշուշտ, անուշտ : Կան առ շծախուռղ բաները ու լաւ է, որ կան : Այլապէս, աշխարհին իսկ զնոջ կը ներկայանար :
- Դուն կարդացա՞՞ք ես խոզին ու մարդարիտին առակը :
- Դուն կարդացա՞՞ք ես մանանուխի հատիկին զորութիւնը : Լըլուեթիւն, քաղցրութիւն, տրամութիւն ու բեկուած վճակա- նութիւն :
- Ատոնք ըլլալէ առաջ «վերացեալ գոյական», մեր դէմքին ու ձայնին վրայ «վերացեալ» փայլակներ են : Աղիւնքի՞ն առնք ճմլուած ու եղկելի պատկերին, որ երեսն էր աղջկան, որպէսզի հարցնէր ա- նիկա, նուազ իբրտ ու դատան :
- Այսի՞նքն :
- Այո՛ : Աւագի հատիկը երբեմն աւելի կ'արժէ, երբ բիւրե- դանայ, քան ապառաժ հաստամետ մը : Դրամը պէտք չէ, որ զնէ ա- մէն բան, ինչպէս ընել կը յաւակնի : Անդննի՞՜ սի՛րտը, ներէ, որ այդպէս հաւատամ :
- Դուն սիրտ ունի՞ս :
- Երեք տարի չեղաւ վայրկեան, որ անիկա զարնէր ուրիշին համար : Մեղք որ չես հասկնար :
- Շահեկան կը դառնաս : Բայց կրնա՞ս բացատրել, թէ ինչ կայ բառերուդ տակ : Ի՞նչ է ուրիշին համար «զարնող» սիրտը :
- Տրտում ժպի՛տ մը, որ ցաւի պէս զարկաւ երիտասարդին ար- տայայտութիւնը : Անիկա կ'ամբանար իր ենթադրութեան մէջ :
- Մինք պիտի չհասկնանք, ինչ որ չենք ուզեր հասկնալ :
- Այդպէ՞ս : Լաւ էր այդ մէկը :
- Բայց ի՞նչ է արդէն արժէքը սիրտին, որ չ'երեւար :
- Միս մըն է ան ալ սակայն :
- Որ չի կրնար շրթունք ըլլալ :
- Արժէ՞քը միտին, որ կ'երեւայ :
- Ի՞նչ կ'ուզես ըսել :
- Պարզ է սակայն : Արժէ՛քը՝ անոր, որ կ'երեւայ, մեր մագե- րէն ու մեր դէմքէն : Մարդիկ քիչ անդամ կը տեսնեն ուրիշ բան : Աղջիկ մը միս է, ուրիշ բաներ ըլլալէ առաջ : Այդ է պատճառը, որ այնքան ըլլան քիչ այրեր, որ ուրիշ բան տեսնեն :
- Կի՛ն՞քը :
- Անոնք կը տարբերին : Անոնց տեսածը քիչ անգամ միս է :
- Անոնց տեսածը :
- Լաւ է, որ լուես :

Ձգած, հրած էր մէկդի անոր ձեռքը, վասնզի իր յուզումին մէջ խորատու՞ ինքզինքը ուզիւր էր մինակ: Այն մտայլ համապատկերին մէջ, որ անոր մտքին ճամբաներէն կը թաւալէր այդ պահուն, անիկա ինքզինքը տեսա՞ւ այնպէս՝ ինչպէս շիներ էին զինքը, իր մատաղ փայլին ու դեղեցկութեան առաջին տարիները: Ու տեսաւ, թէ ինչ վատ հեշտանքով կը խմէին զինքը աշխարհին ամէնէն մեղրածորան շրթունքները: Ու այն ատեն իր եղկելի մերկութի՛ւնը, երբ անցնէր հրայրքին վերջալոյսը ու ձգուէր մինակ մոխրին ու աղին կսկումին մէջը: Ինչպէս տաճար մը, որ կը կործանի ու կը կործանի ապիրատ ձեռքերէ, ճիշին ու համբոյրին մէջտեղը, պաշտումով ու սողոսկու-մով:

Անիկա անցուց արագ մատերուն վարագոյրը աչքին առջեւէն: Ծածկել ուզա՞ծը: Յետոյ հեռացուց իր մարմինը իրմէն: Այսինքն՝ երբ նետեց ապականութեան մեծակներս նկարը, ես՝ ճոռացումին փոշին: Ջբացուց ինքզինքը իրմէն, բլլալու համար պահին աղջկէ: Որ դժուար սովորական միութիւն մը, ամէնուն նման, աղջիկ, սիրահար-րով, բայց պարտաւոր՝ էրիկ մը ձարելու կամ գնելու կամ ինքզինքը գինի գնելու: Այս մտածումն իսկ զայն ըրաւ նուազ անհանդիստ: Ի՞ր ճակտէն մագի թել մը ոլորելով, ատանց կիրքի ու առանց ջերմութեան, նման արձագանգի մը, որ հնչէր մօտէն, շատ մօտէն, ժեռած կամարներէ նետուած վար՝ անիկա հանեց իր բերնէն անսպասելի նախազատութիւնը:

— Երբ աղջիկներ ծախու կը հանուի՞ն:

.....

— Ինչո՞ւ կը մոռնաս Օրիորդ կային:

Օրուան նորութիւնն էր այդ կային: Գեղանի աղջիկ՝ երեք տարիէ ի վեր նշանուած երիտասարդ հաշուակալի մը, մեծ վաճառատան մը մէջ: Կոտրեր էր նշանը, մտնելու համար իբր հեւնդապատ-հուհի մեծահարուստ բժիշկի մը քլինիքին մէջ: Եօթանասունէն վեր էր այդ բժիշկը, որ երեք տարին հեղ մը պարտ կը զգար քարմամու-լու, գիտական հարգատուութեամբ, իր ժանգեքը թօթուելով այդ մատաղութեանց հարսի մէջ: Հաշուակալը, պատուական երիտասարդ, զարգացած, ազգային գործերու մէջ ծայրի հետամուտ ու անդամ քանի մը յանձնաժողովներու, կը սիրէր Օրիորդ կային՝ իր խնամուած մատենադարանին փոշիէն, բացառաբար քննադատական հատորներէ ձեւացած: Ու կը սիրէր իր նշանակը, զայն ստիպելով մտիկ ընելու իմիլ Թակէի կամ Թ. Պրիւնթիոի հաստփոք վերլուծումները: Ու կ'անտեսէր օրիորդին ժառանգները, կօշիկին ու զգեստին շահարանները: Օրիորդ կային, Գալինիէին արդիացած ձեւը, թափանցիկ ծըրազրով մը դիմած էր բժիշկին: Կ'ըսէին, թէ պայմանագրութիւնը ունէր երեք տարուան տեսողութիւն, զրամի շուրջ շատ սրու յօդ-ւածներով: Ետքաթ մը ամբողջ այս «գործառնութիւնը» ուսումնասիրուեցաւ:

— Ինչո՞ւ կը լռես:

— Չեմ հասկնար քեզ, Սոնա:

Ըսաւ, բայց շունէր համարձակութիւն աչքերուն նայելու, վասնզի իր ներքը պայծառ դժուած էր, ֆիլմի մը նման, «հասկնալէն ալ անգին»ը, ու այդ գիտակցութիւնը վեր էր մէջ ամօթէն ու ցաւէն: Մարդ մահուան ստութեան մէջ միայն այդ ջերմադին, հաստատուր յուսահատութիւնը ճիշդ դատել կը մղուէ:

— Մտիկ ըրէ, Սոնա, եկած է վայրկեանը, որպէսզի պարզ ըլլայ ամէն բան, չեմ ըսեր իմ ու զու մէջ — ով ե՞մ ես արդէն — այլ զու ձեռիդ ու զու իրականութեանդ մէջ:

— Շարունակէ:

— Ա՛յ: Դուն գիտե՞ս, թէ ով է Մինաս Մարանը:

— Ինչո՞ւ չես պարզիք Իլիան Արծրունիով:

— Իչխանը յիմար մըն է ու դործիք մը: Անոր տէ՞րը: Դուն գիտես, թէ ո՞վ է Մինաս Մարանը:

— Քու գործարանիդ գրիթէ տէրը, որով եւ զու տէրդ:

— Ո՛չ, մի նայիք դործի կողմէն:

— Այն ատեն՝ «պատուական ու պատուարեր ազգային», Պէյնի Սուրէյնի եկեղեցիին մեծ ջահին ու զանգակին նուիրատուն...:

— Այդ տարազները, անոնց տաղաւարած հեքիաթները մէկդի, որոնք լոյսի պէտք չունին, թափանցիկ ըլլալու համար:

— Այն ատեն՝ Սփիւնտիա օթիլին տէրն ու վարիչը, զբոսաշրջիկներու մագնիսը ու եզիպտական մեծատաղանդ խնճոքներու կազմակերպիչը...:

— Ատոնց ալ չեմ ակնարկեր:

Կեցաւ: Յետոյ, ճիզով մը.

— Պիտի ներե՞ս, որ կարենամ գործածել բառեր, որոնք շատ դիւր զալու չեն ձեր ականջներուն:

— Միտքը քիչ կ'արժէ երբեմն ականջէն:

Կարմրեցաւ: Ինչուն շէր գիտեր: Բայց տաքցած էր: Պարտկելու համար աւելորդ այդ յուզումը, անիկա փութաց ըսելու.

— Կը կանխեմ քեզ, յայտնելու համար, թէ այդ մարդէն դիւր տեմ շատ բան, նոյնիսկ ամէն բան:

— Կրնաս գիտնալ շատ բան, բայց ոչ ամէնը:

— Այսպէ՞ս: Հետաքրքրական պիտի ըլլար: Օրինա՞կ մը:

— Գիտե՞ս իր վերջին հերոսութիւնը:

Ակամայ ծիծաղ մը, որով դառնացաւ Սոնային արտայայտութիւնը:

— Ձիս ծախել Արծրունի Իշխանին:

— Ատիկա հինն է:

— Նո՞ր:

— Ու աւելի վատը:

— ???

— Այո՛: Աւելի վատը, ա՛յնքան՝ որ ըլլաս զանվանառելի:

— Ձեմ հասկնար այդ գրաբար ածականը:

— Պարզ է սակայն: Անիկա մարդն է, որ չ'ընկրկիր ոչ մէկ բանի առջեւ ու կը զոհէ ամէն բան: Իր տունի ազլկան բերանովը աւնիկա արատուորած է քեզ արդէն:

Աղջիկը մնաց անզգած:

— Ձե՞ս զարմանար:

— Ո՛չ:

— Բայց ինչպէ՞ս ոչ:

— Այդպէս:

Պատասխանի այս հանդարտութիւնը մասնաւոր դիտումի արդիւնք չէր: Օրիորդ Սոնա Գաւարեան, գայթակղութիւնները դիմաւորելու իր վերապահ կերպովը կը զատուէր սեռին ընդհանուր փութկոտութենէն: Կիները պիտի ընդունին իրենց ամէն ըմբռնութիւնը չէր: Օրիորդ Սոնա Գաւարեան, գայթակղութիւնները դիմաւորելու իր վերապահ կերպովը կը զատուէր սեռին ընդհանուր փութկոտութենէն: Կիները պիտի ընդունին իրենց ամէն ըմբռնութիւնը չէր:

սածնեբը, ինքնայարգութիւնը ընկալլութեամբ: Չարմանալի է այս տրամադրութիւնը անոնց, երբ երբեք չեն հաւատար իրենց ըսածին: Իր մե՛ղքը, տեսածներուն բազմութի՛ւնը, Պարզեւեանին սոկեղօժ դամբարան՝ը զինքը կ'ընէին այդպէս հանդարտ. յաճախ սուտէ՛ ճարտարագետութեամբ մեր բարոյական կրթութեան հանդէպ, այսինքն՝ մեր ամէնէն փառաւոր տիտղոսած Հպարտութեան հանդէպ, ուր մարդիկ կ'ըսեն ու կը գործեն ճիշդ ներհակովը իրենց ներքին իրականութեան: Բայց ասիկա տուջին յարկն է սուտին կայրութեան: Հապա միւսն՝ը: Այսինքն անոնք՝ որոնք սուտը արժեւորելու, սոկեղօժելու իրենց լրբութեան մէջ կը վատենն այնքան տաղանդ ու գեղեցկութիւն: Ինքզինքը ծախած ու սպառած կի՛նը, երբ կը հասնի ճշմարտութեան նաւահանգիստը, ի՛նչ մեծ վայելուչ եռանդով ինքզինքը ի սպաս կը դնէ պատիւին ու բարբերուն պաշտպանութիւն: Լրբութեան վերջան է ասիկա, մօրուքի իջած կի՛նեբու մարդէն: Բամբասանքը, զրբպարտութիւնը Սոնայի աչքին փոքր դժբախտութիւններն էին մեր ժողովուրդին, որ չունենալով մեծ իտւայ, կը զբաղէր իր մեղքերով: Անիկա լրած էր Պարզեւեան խորունկ տարագր, որով կը յանձնարարէր մեծատաղանդ արձակագիրը ճեղգը ապրիլ ու անոր կնիվը — այսինքն՝ քամրասանքը — ձգել զիմացէն Յայնգեհրու վայելումիմ, որոնք մարդ ըլլալով իրաւ ունէին տնջուշտ... ուտելով: Թող ուտելիմ կնիվը մեղքիմ»: Այնպէս որ, անիկա կը մոռնար ամէն յօրէնում, այսինքն՝ չէր տառապեր անոր հաշուին: Ոչ ոք կը պաշտպանէր, ամէնէն քիչ՝ ինքզինքը:

— Չե՛ս գարմանար ուրեմն, որ այդ անորէն աղջիկը քեզ բամբասէ Մարանին հետ:

— Ի՞նչ...
Յցուած էր ոտքի, ինչպէս մէկը՝ օձէ խայթուած:
Նեղուած, բայց կորովի, տղան շարունակեց.

— Որ այդ աղջիկը պատմէ պարտէզով տեսարաններ, վիլլաներ, ու քեզ դտնէ իր, ի՛ր աչքերով ճօրեղբօ՛րը սենեակին մէջ, գիշերը կէսին...

Արիւն չէր մնացած Սոնայի գէմքին:

— Յետո՛յ, — հաղիւ շնջաց անիկա:
— Յետո՛յ: Որպէ՛տքի Իշխան Պօղոս Արծրունին կամ աւելի համեօտ՝ Արտակ Գասպարեանը լսեն ասիկա:

— Բայց ինչո՞ւ այդքան մեծ:
— Ի՞նչը:

— Սուտը, սո՛ւտը, Արտակ:
Գոցեց մատներովը գէմքը ու կը շնջար.

— Ինչո՞ւ այդքան մեծ: Ի՞նչ են իր հաշիւները:
— Բայց պարզ, շատ պարզ, Սոնա, պուտիկ մը մտածումն իսկ բաւ է ասիկա մեկնելու:

Եղաւ անիմաստ լռութիւն: Հարուածը կը խորանար աղջկան մէջ ու կը քայքայէր անցած ճամբաները: Մտածումը նմանցուցած են թեյի: Նմանցուցէք զայն անձրեւի թեյին, այսինքն՝ վրթուկ, կաթիկթող թեյին: Մէկ կաթիլէն միւսը՝ պարապ: Մէկ մտածումէն միւսը՝ պարապ: Մեղու մը դողաց աղջկան այտերուն, համարձակ ու ազմկոտ, ու սնցաւ տղուն: Յետոյ, կրկին՝ այդ ճանիմաստ լրբութիւնը: Կայծակէն առաջ ճնշումի՛ մթնոլորտին, զոր կը կրեօ, բայց չեն փնտեր:

— Աւելին, Սոնա, աւելին :

Ո՞րքան, գէղ՝ աղջկան նայուածքը մխուեցաւ անոր սիրտը մինչեւ : Կարծրութի՛ւնը այդ սլաքին : Ա՛յնքան՝ որ աղան ընկրկեցաւ :

Որքան ատեն, որ իր երազը կ'ապրէր իրեն հետ, անիկա դատած էր հաշտութեան ձեւ մը անոր հետ : Անիկա կ'ապրէր զայն ու միամիտ էր այդ ատելութի՛ւնը տեսակ մը վաճան ալ ընդունելու իր ու աշխարհին միջեւ : Բայց Մարանին բերանէ՞ն : Անոր կատաղութիւնը զայն բրաւ միակտուր ու բացարձակ : Ինչո՞ւ չէր ուզեր լսել այդ «աւելին» : Աւ ինչո՞ւ չխորհեցաւ ուրիշ բաներու :

— Լռէ՛, կ'աղաչեմ, — ըսեր էր անիկա, ձեռքը երկարելով տըղուն շրթներուն :

Հակադրութի՛ւնը ընդմէջ նայուածքին պողպատին ու սա բաներուն թուլութեան : Արդիւնք խօսիլը, ինքզինքը արգիլելու համար լսելէ ինչ որ զայրապին կ'տակէր տարիէ մը առաջին :

Որքան ատեն, որ սեռը տիրապետող շունչն է, խաւն է ճնշելու ոլորտի մը — ո՛ր բաները մարդոց չեն ատիկա — արտաքին յորձանքները քիչ կ'իտուվ կը կտրեն—կ'անցնին զայն : Միտահար զոյգը ապակն շունի այդ աշխարհին դէմ : Բայց այն օրէն, երբ սեւին շունը կը դառնայ խորշակ — ու ծերութիւնը հովերուն, դուք իմացէ՛ք՝ մարմնի հովերուն խորշակն է յանախ — այն օրէն մեր պատնէշները կը թափին դեռն ու մենք կը տնտնենք : Սոնա Գոհարեանը կը սպասէր օրուա՛ն, երբ իր երազին արձագանգը շատ մեղի, յտակ, պիտի դար վրան : Անիկա մօքը սարսափը ունէր նկարուած խորն իր զգալարանքներուն, ա՛յն մօքը՝ որ պոռացեր էր անոր երեսին :

— Չտեսա՞ր դուն դիս, Սոնա :

Տեսած էր, փարթամ պտտկերին ճեղքատած, ծեծքուած, յատակ մը, ինչպէս որմանկարէ մը, զոր կրծքը է ժամանակը : Անոր մա՛յրը, աւերակը իր աւերումին :

— Լռէ՛ :

Անշուշտ :

Ի՛նչ մեղաւոր արտմութիւն էր ատիկա : Նախամտածուած ի՛նչ ընկալչութիւն : Անիկա կը հաւատար խոստովանութիւն մը կատարած ըլլալ, զինքը մշտական անդոճի մէջ պահող խաւարին վրայ փոքր պատուհան : Ուրիշ ի՛նչէր քիչ մը զով բան եռացող զարշանքին : Անիկա իր մարմինը ժամերով այդպէս կը զգար, իրականութեան մէջ իրբեւ պլզկումէն ետքը, չկրնալով խաղաղիլ, ազատիլ աղի ու հոտած այն հովէն, որ ծերութիւնն է : Սէ՞րը : Ո՞ր բանը չի փտիր : Ինչ լրիւկած դիակ է ան, որ կը յամառի վարդէն ետքը :

Անիկա կ'անգիտանար երիտասարդին պազած զարմանքը, պիչ իրեն յոտած, սպասելով խօսքի արտօնութեան :

Գահիրէն արթնցած էր բոլորովին : Մուխ ու աղմուկ օդին մէջ կը ծփային «չղարչ առ շղարչ», ու պարտէզը յանախուելու վրայ գաւկով մայրերէ : Մէկը անցաւ անոնց առջեւէն, թեւին՝ պուպրիկի պէս աղուոր աղջիկ մը, չորս տարու, որ իր մօքը կոկոնութիւնը կը պտղացնէր ու կը նայէր իրենց, դառնալով ետին քանի մը անգամ : Սոնային ստիքներուն մէջ բան մը խաղայց :

... :

Վայրկեանի մը շափ տեւող հեծեծապին ու մղձուկ լացէ մը հաք, անիկա իրր թէ լսած ըլլար անոր բերանէն այդ «աւելին» ալ : ամչկոտ ու թշուառ, մնաց կործանած : Անոր կերովը, շոգիէ շէնքի մը

պէս հալեցաւ ինքնին ու թուլ ըրաւ անոր մարմինը: Գրեթէ առանց հոգիի, վերցուց աչքերը դէպի տղան ու շնայելով, բայց լիալիբ ա-
րեւելուած անոր՝ վանկ-վանկ քաշքշելով ձայնը — անիկա իր մեղքին
վիշապը կը քաշէր ետեւէն — կտրողացաւ արտասանել:

— Ընդհեմ այդ ամէնը, Արտակ:

Կենցաւ, վասնզի կոկորդը գիտէր շորցած, պրկուած: Մեծ յող-
նութիւնները աւելի ուժով կ'արտայայտուին կարգ մը կէտերէ մեր
մարմնին վրայ: Անիկա դատեց իր ճիգը՝ անբաւական, կոկորդը պա-
րուրող այդ խուլ ու խոնաւ ցանցումէն անցք մը ճարելու զտալիք բա-
ռերուն: Բայց որքա՞ն կ'ուզէր ա'լ խօսել, բացուիլ ու պարպուիլ ամ-
բողջ: Ու չես գիտեր, թէ ինչն էր դիմաբար կեցնողը այդ արարքէն:
Կտրուած վարանուժով մը անիկա շնջաց:

— Հիմա կրնաս մեկնել:

— Ո՞ւր:

— Ուրկէ՛ որ եկար:

Չգաց, որ մարմնական տկարութիւն մը, տաքուկ բանի մը պէս
կը ծաւալէր իր սրունքները մինչեւ: Պարտաւորուեցաւ նստիլ, չիյ-
նալու համար: Ու դիտեց, որ սիրտը խոշոր էր, տարածուած՝ կուրծ-
քին մեծ մասին, ու ճնշուած՝ հսկայ քարէ մը: Աչքերուն առջեւէն
աստղի կաթիլներ թոսն ու թուսն: Ապակիի պունտի նման նշմարեց
իւր գլուխը, որ կը շրջուէր: Նուազո՞ւմ: Փակեց աչքերը, որպէսզի
գլխու այդ պտոյտը մեկուսացուի: Ոտքերը կտրեր էին գետնէն ու
նստարանը ըսես մէջք կու տար: Խառնակ այս զգայութիւններուն մէ-
ջէն, իրականին ու ցնորքին սահմաններուն, անիկա տեսաւ Սահակ
Պարզեւեանը, որ կորաքումակ, լեռ մը կը բարձրանար: Ու կը բարձ-
րանար առանձին, մեղսաթաթաւ ուխտաւորի մը նման: Տղեկութիւն,
աղտ, ազբ, մեղք, իրարմէ փայլուն, իրարմէ աղուսը՝ կը հիւսուէին
անոր հետ: Ու գլուխը ետին, կանչելով զինքը, բայց անզգալար փախ-
չելով, զբազէտը առաջին զաւթափնրուն նստաւ: ... Երբ բացաւ
աչքերը, գտաւ առջին ծունկի երիտասարդը, դեմ-դեղին, շուտրած,
արցունքի մէջ:

— Ուրկէ՛ որ եկար:

Մեռելը խօսէր, ունենալու չէր տարբեր եղանակ:

ՅԱԿՈՒ ԾՇԱԿԱՆ

(Շար. 15)

ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա Ղ Ե Ր Ս Ա Գ Ի Ր

Տա՛ւր ինձի շրթներ, որ ես շնչեմ
Ապրող-չմեռնող բու մրմունջներով...
Բա՛ց ստուերներուդ փակակնք մթին
Ամայի հոգւոյս,
Ո՛ր ես զիս մանչնամ
Քու աշխարհուած դիմակկարով...
Թո՛ղ որ ես լուծուիմ
Քուրաներում մէջ ներհում հայեացքիդ,
Զրկւոյ զիտ փոկենն օտար աչքերով...

❖

Քարերու մոայլ ընթերցանութիւն.
Ափի մէջ բացուած
Քարեղէն տամար.
— Լռութիւնն այստեղ այն խօսքն է չըսուած՝
Որ դեռ չծնած պիտի ըսէիր...

❖

Հին օրերու
Համագգեստս հնամաշ՝
Պուհարանիս փեղկերում սակ կ'երագէ.

Համագգեստիս
Գրպանիմ մէջ՝
Պատկեր մ'ունի մանկութիւնս անշշուկ...

Ափերուս մէջ
Դրած ափերն անհամդարտ՝
Ան կը սանի զիս հիմա
Ժամանակէն դուրս, հեռո՛ւ,

Մարդոց մաշած դէմքերում
Լոյս ժպիտներ բերելու...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ



Իմացական Շարժում



ՀԱՅՐԵՆԻ

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ

Գ. ԽԱՆՁԵԱՆԻ ՀԵՏ

- ՄԻ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻ ԿԵԱՆՔԸ ՀԱՏ ՔԻՉ Է՛ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ
ՀՈԳԻՆ, ԳԵՂԵՑԻԿԸ ԱՏԵՂԾԵԼՈՒ ԵՒ ԵՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ
- ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ ԶԻՆՈՒՈՐ Է, ՈՐ ՊԷՏՔ Է ՊԱՇՏՊԱՆ
ԿԱՆԳՆԻ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ՆՐԱ ՄՇԱԿՈՑԹԻՆ ԵՒ ՈԳԻՆ

Հայրենի ժամանակակից գեղանկարչության հումանիչ դարձած վաերա-
կան անուններէն մէկն է Գրիգոր Խանջեան, որ իր արժանաւոր հասակակից-
ներուն՝ Մինաս Անախտեանի, Յարութիւն Կալենցի, Յակոբ Յակոբեանի, Ար-
տաշէս Յունանեանի, Սարգիս Մուրադեանի եւ իրենց կոչումին նախանձախն-
դիր այլ գեղանկարիչներու հետ ո՛չ միայն դարձաւ արժանաւոր մէկ ժառան-
գորդը Սուրենեանց-Բաշինջաղեան-Թադէտեան-Սարեան-Քոչար սերունդի

վաստակով բիրեղացած ասանդներուն, այլեւ, իր ինքնուրոյն փնտռութենէրուն եւ նուաճումներուն ճամբով, կտակուած երփնապակը հարստացուց նորանոր գոյներով, նորաբոյր ապրումներով եւ նորաձայն աշխարհներով՝ հայրենի գեղանկարչութեան դիմաց լայն բանալով ստեղծագործական անկողն ճանապարհներ եւ խիզախումի կոյս հորիզոններ:

Արդարօրէն, Գ. Խանջեան եւ իր սերնդակիցները եղան այն ստեղծագործ արուեստագէտները, որոնք, իրենց գեղանկարչական նուաճումներուն զուգահեռ՝ նոր աւիւնով եւ շունչով օծուեցին հայրենի գեղանկարչութեան վերանորոգ անդամները, ուր բնականոն պայմաններու մէջ հասակ եւ գոյն նետեցին իրենց յաջորդած երիտասարդ գեղանկարիչներ, ինչպէս՝ Էլիբեկեան եղբայրներ, Ռուբէն Ազապեան, Մարտին Պետրոսեան, Ռուտով Ֆաչատրեան, Վարուժան Վարդանեան, Վիգէն Թաղէտսեան, Արկաղի Բաղդասարեան եւ շնորհալի այլ ընծիւղներ:

Տակաւին. վերոյիշեալ բարենիշներու կողքին, զօրաւոր անհատականութեան տէր Գրիգոր Խանջեանի ստեղծագործական երեսնամեայ կեանքը նաեւ յատկանշուեցաւ յանուան աշխտօժութեամբ, իրաւ արուեստագէտներուն ի վերուստ տրուած սրտասովոր կենսունակութեամբ, որուն շնորհիւ, առաջին իսկ օրէն, ան ձեռք նետեց գեղանկարչական բանապան սեռերու՝ խորհրդանայ գեղանկարչութեանը հարստացնելով իր բացօտիկ դրոշմով լիացած ջրաներկ եւ իւղաներկ պատկերներով, մատիտանկարներով, վիմափորագրութիւններով, նկարապարզումներով եւ այլ ոճի ստեղծումներով:

Փաստօրէն. արտաշայտչական պանապան միջոցները իրեն ենթարկած այն արուեստագէտը եղաւ Գ. Խանջեան, որ օրերու հուրվոյթին հետ բացուեցաւ նոր աշխարհներու՝ դառնալով մէկ խորհրդանիշը անսպառ եւ մշտանորոգ կեանքէն բխած յարաճուն սրունասին: Բայց Խանջեանի վրձինը մասնալատուկ սէրով մը եղբարացաւ հայ գրականութեան կենարար ոյրտներուն հետ, եւ այդ ոյրտներէն ներշնչուած ու շողու քելադրանքով երկնուած իր այդ ստեղծումները կազմեցին մէկ հիմնական երեսը անոր վաստակին:

1979ի աշնան, խորհրդանայ գեղանկարչութեան կարգ մը ելակի դէմքերուն տուած մեր այցելութիւններու շարքին, Գ. Խանջեանի արուեստանոց-բանապարանը երկու անգամ այցելել եւ անոր պատերը պարզարած ստեղծումներուն հետ աւելի մտերմանալէ ետք, մեր երրորդ հանդիպումին, այս տաղանդաւոր արուեստագէտին հետ ունեցանք յանպատրաստից, բայց խիստ շահեկան պրոյց մը, զոր կը ներկայացնենք ստորեւ, վայն ձայներիւն արտագրելէ ետք:

● Ձեր գործերուն մանրամասնօրէն ծանօթանալու պէտք չկայ. կը բաւէ արագ ակնարկ մը նետել ձեր արուեստագի պատերը զարդարած պատկերներուն կամ իրարու վրայ կուտակուած հարիւրաւոր քրտներկ գործերուն եւ վիմափորագրութիւններուն վրայ, հաստատելու համար, որ Գրիգոր Խանջեան գեղանկարիչը կարելի չէ բանտարկել սահմանափակ մարզի մը մէջ: Այլ խօսքով՝ դուք որչա՞ր շահագնացիտութեամբ բնորոշուող արուեստագէտ մը չէք, մէկէ աւելի մասնագի-

տաւքիւններ ունենալով հանդերձ, որովհետեւ ե՛ւ գիմանկարներ կը գծէք, ե՛ւ բնանկարներ, ե՛ւ նախիւր-մորթիք, ե՛ւ մուշտեմտալ պատկերներ, ինչպէս կ'ըսէք, բայց մա՛նաւանդ՝ հեղինակն էք շարք մը նկարագրողումներու, որոնք, մեր կարծիքով, ձեր անունը սփիւռահայ լայն զանգուածներուն ծանօթացուցած հիմնական ստեղծումներն են:


Բայց այս ամբողջ բազմազանութեամբ համդերձ, իրենց մշակած զանազան սեռերէն մէկուն նկատմամբ արուես-

տազէտները առհասարակ որոշ տկարութիւն մը կ'ունենան: Նման տկարութիւն մը ունի՞ք: Եթէ այո՛, ձեր ո՞ր սեռի գործերը աւելի կը նախընտրէք:

— Նման հարցը առաջին անգամ չէ, որ ինձ տրուած է եւ, կարծում եմ, որ նաեւ վերջին անգամ չէ, որ լինելու է. սկզբունքորէն ես սիրում եմ այն արուեստագէտներին, որոնք իրենց գործունէութիւնը չեն սահմանափակում մի որիցէ ժամրի մէջ, որովհետեւ կեանքը տարբեր երանգներ ունի եւ ամէն անգամ, ըստ երեւոյթին, արուեստագէտին պէտք է դանել այն տունը, այն գոյնը, որը այդ պահին ամէնից աւելի եւ ամէնից լաւ կարող է արտայայտել նրա սրտի, հոգու, մտքի թելադրանքը: Կարճ, ինչպէս ասում են՝ խօսքը:

Ինձ համար, իմ արուեստում, ամէն մի գործ իւրատիպ արժէք ունի կամ հոգու աւելի մօտ է: Ասենք, օրինակ, գրաֆիկան ինձ լայն հնարաւորութիւն է ընձեռում արձագանգելու այս կամ այն երեւոյթներին՝ արագ կերպով: Ասենք, պէտք է արուեստագէտը իր ձայնը բարձրացնի խաղաղութեան հարցերով. գրաֆիկան դա տալիս է մեծ հնարաւորութիւններով: Օրինակ, ես ստեղծել եմ մի նկարաւար, որը կոչւում է՝ «Եւ դա մեր օրերում»: Սա աշխարհում տեղի ունեցող երեւոյթների ճնշողատական մօտեցումով հարցերի ցուցադրումն է, որի մէջ մտնում են բանտ, բողոք, սով, պատերազմ եւ նման-նման երեւոյթներ, որոնք ինձ մօտ առաջացնում են զայրոյթ, բողոք եւ տխրութիւն: Նման թեմաներին անդրադառնալ գեղանկարչութեամբ՝ նըշանակում է շատ ժամանակ տրամադրել, իսկ գեղանկարչութիւնը սիրում է շատ աւելի ընդհանրացում, շատ աւելի մեծ, շատ աւելի խոր մտքեր արտայայտել:

Այդ գէպում, ես արդէն նման գործերին մօտենում եմ ուրիշ կերպ: Իմ ըստեղծագործութիւնների մէջ, երբեք դուք տեսել էք «Հացը լիններում», «Մ'ընչազ», «Ե՛ւ հաց, ե՛ւ սէր, ե՛ւ երազանք», եւ մի շարք ուրիշ կտաւներ, որոնք մեծ



Հայկական փայտաքանդակ մտերմութեամբ

ինդիւիդուալ են շօշափում. ինդիւիդուալ որոնք այսօրուայ հետ չէ, որ կապում են, ինդիւիդուալ որոնք կարող են նաեւ հնչել մեր օրնրից շատ աւելի յետոյ, ուրիշ ժամանակներում:

Այստեղ, ուրեմն, գեղանկարչութիւնը ինձ օգնում է մեայուն մտքեր արտայայտելու՝ ժամանակի մեծ տեւողութեան համար: Գրաֆիկան ինձ հնարաւորութիւն է տալիս անմիջապէս արձագանգելու այս կամ այն երեւոյթին, իսկ նկարագործումները, օրինակ, ինձ ընձեռում են հնարաւորութիւն՝ շատ մեծ թրուով մարդկանց հետ խօսելու: Երբեք ոչ մի գեղանկարչական գործ, թանգարանում թէկուզ եւ շատ երկար տարիներ կախուի եւ ցուցադրուի, չի կարող այդքան տեսնող եւ արձագանգող ունենալ, ո՛րքան, տսենք, «Անրեւի զանգակաւան» նկարագործումները, որը որ 25 հազար գրքի մէջ, պատկերացրէք դա ամէն ընտանիքում. բարեկամներին՝ ձեռքից ձեռք, բազմապատկեցէք դա՝ միլիոնների է հասնում: Սա էլ ունի, ուրեմն, ուրիշ առաւելութիւն:



Յ. Թումանյանի «Լեւոնի Սարոն» պոեմի եւ «Վէրք Հայաստանի» Ոկրագործումներն

• Ճիշդ է: «Լեւոնի զանգակատուն» պոեմը պարագայիմ, նայնիսկ կարելի է ըսել, որ Սփիւռք մէջ ձեր անուր առհասարակ կապուած է Պորոյր Սեւակի այս շքեղ գործին, այսինքն՝ նա՛նք գրաֆիկ արուեստիմ, եւ իսնցեան գեղանկարիչին հիմնական վառտակին, այլ խօսքով՝ իւրաներկ սրտտոմոնտրուն մասին մարդ գրեթէ բուն չի գիտեր: Հաւանաբար պատճառներէն մէկը այն է, որ «Լեւոնի զանգակատուն» ձեր հոյակապ մեկնարանութիւնը խոր արմատներ երկարած է ընթերցողներու ներքին աշխարհին եւ շիշողութեան մէջ: Բայց մենք կը կարծենք, որ նայնքան հետաքրքրական էին ձեր գրաֆիկ միւս գործերը՝ «Վէրք Հայաստանի» պատկերագրումը, մեքսիկական շարքը, ուր խաչելութիւն կար, իտալական գոգոտրիկ կացութիւններ կային եւ այլ հոգեվիճակներ:

Նրեկ, երբ միասնաբար ձեր գործերը կը դիտէինք, ի միջի այլոց, ըսեք, որ Մեքսիքա այցելած էք շատ կարճ ժամանակով մը, բայց հակառակ ստոր՝ յաջողած էիք ստեղծել այդքան խօսուն, խո-

րաբաժանց եւ հանդիսատեսը ներգրաւող գործեր: Հետաքրքրական պիտի ըլլար լսել ձեզ, թէ ինչպէ՛ս կ'աշխատիք...

— Շրջագայութիւնները ինձ սորվեցրին սուր աչքով եւ մեծ հետաքրքրութեամբ դիտելու ամէն մի երկրում այն իւրայատուկը, այն հարազատը տուեալ երկրի համար, որը կարող է իրենից արժէք ներկայացնել: Ի սոյց դնելու դայն ձեր ժողովուրդին, ձեր արուեստասէր հասարակութեան:

Ճիշդ է, երբեմն ջանք օր է լինում դա, երբեմն՝ մէկ ամիս, երբեմն՝ նոյնիսկ աւելի պակաս: Իսպանիայում եւ երկրի եմ ընդամէնը տասնըհինգ օր, բայց տասնըհինգ օրը քիչ չէր, որպէսզի այնքան ուժեղ տպաւորուեմ, այնքան իւրայատուկ եւ ընդդժուած կողմեր տեսնեմ իսպանիայում, որ ինձ հնարաւորութիւն տուեց հետագայում ստեղծելու մի նկարաշար, որը տասը թերթից էր բաղկացած, ի՞նչ է նման դէպքերում իմ աշխատանքը. մի փոքրիկ ալպում եւ ժամադր, որով եւ ամէն վայրկեան, անմիջապէս,

չատ սուր եւ սեղմ դժեւրով — մենք այդ անուանում ենք ճեպանկար — իմ տպաւորութիւնն հմ թողնում ալպոմիս էջերի վրայ: Դա տակաւին ինձ հնարաւորութիւն է տալիս տանը, թարմ տպաւորութիւն մշակելու եւ ստեղծելու այդ գործերը. եւ այդ փոքրիկ ճեպանկարները բաւական են, որպէսզի ընդհանուր իմ յիշողութեան ու տպաւորութեան հետ մէկտեղ՝ ես կարողանամ ստեղծել այն պատրանքը կամ այն տրամադրութիւնը, որ ես զգացել եմ տեղում: Մեքսիկայում, որտեղ ես քիչ թէ շատ աւելի երկար ժամանակ ունեցայ, այնտեղ արդէն ես կատարեցի նաեւ գեղանկարչական կամ ջրաներկով որոշ աշխատանքներ, որոնք իրենց հետ բերում են նաեւ գունային տպաւորութիւն, որը նոյնքան անհրաժեշտ է այս կամ այն գործի համար: Եւ եթէ ուշադրութեամբ դիտէք՝ կը տեսնէք, որ Իսպանիան միայն սեւ ու սպիտակի վրայ էր արուած, իսկ մեքսիկական եւ իտալական տպաւորութիւնները՝ գունաւոր, գեղանկարչական միջոցներով:

● Կը կարծեմք, որ մտնեցանք շատ հետաքրքրական հարցի մը — աշխատելու եղանակին: Կան արուեստագետներ, որոնք կը հաւատան ճշգրտապէս եւ հետևողական աշխատանքին, ունին իրենց ըստնողծագործական ամբօրեայ ժամանակացոյցը, օրական չորս կամ այսքան ժամ կը յատկացնեն իրենց արուեստին. օրինակ, Ուիլիերմ Մարտիանը: Աստի՛ք փրոֆեսորնալ գրողներ են: Բայց միաժամանակ կան գրողներ եւ գեղանկարիչներ, որոնք կը հաւատան դադարին կարեւորութեան. կը գրեն պատմութիւն մը կամ կը գծեն պատատա մը, երկուեքնք ամիս բամ մը չեն ստեղծագործեր, կ'ապրին իրենց կեանքը, կ'արճան նարմիւթեր եւ հրք իրենց ներաշխարհը այնպէսզոք ետք կը հասնի իր գագաթնակետին, կը թափն եւ գայն կը յամձմեն քուղիքին: Աստի՛ք միայն իրենց ներքին քննադրանքին հաւատացող արուեստագետներ են եւ կը ստեղծագործեն համա-

ձայն իրենց ներքին քննադրանքներում: Դուք ինչպե՞ս կ'աշխատիք...

— Անշուշտ, անկեղծօրէն պիտի ասեմ, ես նախանձում եմ այն արուեստագէտներին, որոնք իրրեւ կարգ կամ օրէնք՝ ամէն օր ունեն ժամանակի մի թիւ, որը սրբօրէն օգտագործում են միայն եւ միայն ստեղծագործելու համար, որ, ինչպէս դուք ասացիք, պրոֆեսորնալ են կոչում:

Դժբախտաբար, ես այդ հնարաւորութիւնը չունեմ, թէեւ ո՛չ միայն սիրում եմ աշխատել, այլեւ շա՛տ եմ սիրում, եւ երբոր այս կամ այն գործի վրայ սկսում եմ գործել, կարող եմ ամբողջօրեայ փակուել, զուրս չգալ եւ ոչ թէ վեց ժամ, ութ ժամ, այլ նոյնիսկ քսանընթաց ժամ ի վիճակի եմ աշխատելու: Բայց խառնուածքով, տարօրինակ է մի քիչ գուցէ, որ ես ինքս եմ ասում այդ մասին, սիրում եմ նաեւ հասարակական գործունէութիւն, սիրում եմ խառնուել մեր ժողովրդի եւ նրա մշակոյթի շատ ուղորտներին գործունէութեանը եւ, ըստ հրեւոյթին, դա ինչ-որ մի տեղ նաեւ պատժում է ինձ իբրեւ արուեստագէտի. ուրովհետեւ լինելով բազում-բազմաթիւ գեղարուեստական կամ դիտական խորհրդներին, միտիններին անգամ, ստիպուած եմ, որեմն, մասնակցելու այդ խորհրդներին լուծման, զանազան ձեւով լուծուող եղանակներին եւ բաւականին մեծ ժամանակ եմ տրամադրում:

Բայց պիտի այստեղ մի այսպիսի վերապահում անեմ, որ դա էլ, ինձ թուում է, չիցքաւորում է ինձ երբեմն, ո՛չ երբեմն՝ դուցէ շատ յաճախ, անդրադատուալու մեր ազգին, մեր մշակոյթին նըւերուած շատ կարեւոր հարցերին՝ շա՛տ աւելի կըբոտ, շա՛տ աւելի ակտիւ, քան եթէ ես պարփակուէի միայն իմ արուեստանոցի չորս պատերի եւ իմ ստեղծած աշխարհի մէջ: Այդ է, որ ինձ հնարաւորութիւն է տալիս արձագանգելու բոլոր այն երեւոյթներին, որոնք ես գտնում եմ խիստ անհրաժեշտ մեր ժողովրդի եւ նրա անաջրնթացի համար:


Իսկ երբ անցնում եմ բուն ստեղծագործութեան, անուշտ, ես այլ այն արևեստողչուններից եմ, որ երբեմն անուանում են արամադրութեամբ. եւ ես այն կարծիքին եմ, որ ստեղծում է արուեստի մի դարձ, որը ազդում է մարդկանց վրայ միայն այն դէպքում, երբ ինքը՝ արուեստագէտը շա՛տ է ոգևորւած, շա՛տ է յուզուած, շա՛տ է լցուած, այդ թեմայով կամ այդ ինքիբնորով: Այլապէս, երբեմն լինում է, որ արհեստով կարողանում ես հասնել ինչ-որ մի բանի, բայց նա իր մէջ չի ունենում այն խորութիւնը, այն յուզական լիցքը, որը դիտողին կարողանայ քաշել իրեն, յուզել ի-

րենով, խօսել իրեն եւ ասրեցնել ու մըտածել տալ:

Այս իմաստով՝ «Անունի զանգակաւտուն»ը այնպիսի՝ մի յուզական աշխարհ էր, այնպիսի՝ մի ոգևորւածութեամբ եւ նուիրումով եւ գործեցի, որ դրա արդիւնքը եղաւ այն, որ շատ դիտողներ զարմանում էին, թէ մի՞թէ սա նկարիչ է մի մարդ, որը շատ հեռու է եղել այդ տխուր օրերից, այդ դէպքերից եւ ակահատես չի եղել այդ դառն ճակատագրին: Այդպէս էլ մտածում էին նաեւ Պարոյր Սեւակի պոեմի մասին, որովհետեւ շատ էին զարմանում, որ մարդ կարող է ծընել Սովետական Հայաստանի տարածքի



Հայրենի քնուրբան խորհուրդով լիացած պատուա մը՝ «Հացը լիտներում»



Սրկու նաթիւր ժողովը



և ստեղծագործական երկու ոճեր

վրայ եւ զբեկ այդպիսի մի գործ, որը կարծես թէ ակահատեօի աչքերով է դիտւած, եւ այդ նակատազրի բաժանողներէց մէկն է եղել նաեւ բանաստեղծը: Սա շատ կարեւոր պարագայ է, առանց որի արւեստի ուժեղ, խոր եւ լաւ գործ ստեղծելը շատ դժուար է:

● Այսինքն՝ արունստագէտի սուր աչքին կողքին, նոյնքան անհրաժեշտ եւ կարեւոր կը դաւէ անոր ներքին աչքը, երբեք աչքը, իր ողջ էութեան տաղանայնութեն զազանակուած խորաբառիանց եւ յայտնագործող արեւմ աչքը...

— Անպայման, անպայման: Եթէ պարզ ասենք՝ դա ո՛ր թէ պատուէր, այլ՝ հոգո՛ւ թելադրանք պիտի լինի, սըրտի՛ թելադրանք. իր ողջ էութեամբ արւեստագէտը պիտի ցանկանայ այդ ամէնին նուիրուել եւ միաձուլուել նրա ամէն մի մասնիկի հետ:

● Քանի կը խօսինք «Անլուելի զանգակատուն» պոեմի մասին, կը կարծենք, մեր ընթերցողներուն համար շատ հետաքրքրական պիտի ըլլար իմանալ կեմսագրութիւնը «Անլուելի զանգակատուն» պոեմի գծամեկնութիւններուն, որովհե-

տեւ անոնք, մեր կարծիքով, ընթացիկ նկարագրումներ չեն, այլ՝ բանաստեղծութեան էութիւնն ու թրթիւնները երբորդ լեզուի մը, գիծերու այրութեամբ վերստեղծող մեկնութիւններ, ինքն իր մէջ ամբողջական եւ անկաս խտեղծագործութեանց շարք մը:

Բայց, այս պարագային, մեզ հետաքրքրողը իմացեանի «Անլուելի զանգակատուն» պոեմի ծննդոցն է: Ինչպէ՞ս ծնաւ այս ծաւալուն գործին գաղափարը, որքա՞ն տևեց աշխատանքը, Սեւակը ի՞նչ առաջարկեց, հետեւեցա՞ւ ձեր ստեղծագործական հայլուային, թէ դուք մտածեցիք եւ գործի վերածեցիք «Անլուելի զանգակատուն»ը գեղանկարական լեզուով վերստեղծելու ձեր ներքին մղումը:

— Ես պիտի ասեմ, որ աշխատանքը տեւեց երեք տարի, փոքրիկ ընդմիջումներով. ինը կրկնաչօյլ ես, եթէ դուք յիշում էք: Պարտքը ինձ չղիմեց նկարագրողելու համար, բնա՛ւ: Բայց երբ ես կարդացի, երկար ատեն այդ տրամադրութեան տակ էի եւ, ինչպէս ասում են, տեղս չէի գտնում. բայց նաեւ շատ վախենում էի ինքս ինձ թարգմանախոսելու, որ ես պէտք է նկարագրողեմ այդ գործը, որովհետեւ ամէն մի տողը պոե-

մի մէջ՝ մի պատկեր է, իսկ այնտեղ հազարաւոր տողեր են: Ինչպէ՛ս Համարձակուել նկարադարդելու մի գործ, որի ամէն մի տողը պատկեր է, Համադրութիւն եւ տակիք:

Երկար եւ ներքին պայքարից յետոյ, եկայ այն եղրակացութեան, որ ես պիտի նկարագորդեմ զիրքը, բայց այդ նկարագորդումները ո՛չ թէ լինելու են տողային, այս կամ այն փոքրիկ հատուածի նկարագորդում, այլ դա պիտի լինէր այդ պոեմի էութեան նկարագորդում: Եւ, բարբախտաբար, այդպէս էլ ստացուեց իմ նկարագորդումները ե՛ւ կապուած են զրքի հետ, ե՛ւ կարելի է զրքից գուրս դիտել ի նորհիւ, ի հարկէ, անշուշտ Պարոյրի, որովհետեւ Պարոյրի գործը այնքան մեծ, խորը, յուզական, ամբողջական էր, որ հեշտութեամբ կարելի էր խառնուել այդ տրամադրութեանը, օգնել այդ տրամադրութեանը եւ ինչոր տեղ էլ մի փոքր անկախ լինել:

Ես ուրախ եմ, որ Պարոյրի կենդանութեան օրօք էր, որ դա տեղի ունեցաւ, եւ ինքն էլ շատ հաւանում էր նկարագորդումները: Եւ երբոր զիրքը լոյս տեսաւ, կարծում եմ, մենք Համատեղ երջանիկ էինք, որովհետեւ խօսքով եւ պատկերով, մեր ժողովուրդի համար, մի շատ դառն ժամանակահատուածի էութիւնն էր, որ ներկայացնում էինք նրանց՝ տեսնելու, կարդալու, խորհելու եւ եղրակացութիւններ հանելու համար:

Անցել են տարիներ, ես երբեմն թերթում եմ զիրքը, եւ պիտի ասեմ, որ յաճախ իմ մօտ ցանկութիւն է յառաջանում իմ ստեղծած շատ գործերը վերանայելու, վերանկարելու, եթէ կարելի է այդպէս ասել, բայց «Անլուիլի գանգակառանք» եւ այլևս չեմ ուզում ձեռք տալ: Ինչո՞ւ: Որովհետեւ ես կարծում եմ, որ այդ օրերի մեր համատեղ աշխատանքը, այդ օրերի մեր հոգու այն ոգեւորումը վիճակը եւ այն տրամադրութիւնը, որը ստեղծուեց նաեւ այդ օրերին, զրքի լոյս ընծայմամբ եւ ժողովրդի ընթերցմամբ՝ արբօրէն պիտի պահպանուի այդ հոգեվիճ-

ակը՝ իբրեւ յիշատակ մեր մեծ պոետի, Պարոյր Սեւակի:

Չնայած՝ ես մտածում եմ, որ ինձ նից յետոյ պիտի գան եւ կը լինեն շատ ու շատ արուեստագէտներ, որոնք նորից կը նկարագորդեն այդ գործը, անհնարին է, որ նկարագորդեն, պիտի որ անպա՛ման նկարագորդեն եւ ես վստահ եմ, որ պիտի աւելի լաւ նկարագորդեն, քան ես եմ նկարագորդել: Բայց միեւնոյն է, իմ գործը կը մնայ միակը եւ առանձնաշատուկը այդ բոլորի մէջ, որովհետեւ Պարոյրի հետ Համատեղ ենք շնչել այդ օրերին:

● Ձեր իւրաներկերում մէջ յատկապէս զգալի է բնութեան ու կերպարներում էրանարաշունչ աշխարհահայեացքով մօտեցող տպատրայայտ գեղանկարիչ մը, որ նոյնքան հաւատարիմ կը մնայ իրապօպոս դպրոցի օրէնքներում. գեղանկարիչ մը, որ գոյներով կ'երգէ բնութեան ու կերպարներում շարաբերութիւնները, մ'անամնդ երբ ամենայն վարպետութեամբ կը դիմէք խորհրդանշաններում, ինչպէս՝ կեանքը ներկայացնող ճաճ, հայկական ժողովրդային արուեստը բնորոշող իրերու — աղամաններու, դգալներու, կարպետի հատուածներու, փայտափոր զարդեղներու, խոհանոցային եւ այլ առարկաներու, եւ այլն:

Արդ, եթէ օր մը ձեզմէ պահանջուի բնութագրել Պրիգոր հանցեան արուեստագէտը, ո՞ր դպրոցին մէջ պիտի գտնուէիք ձեր արուեստը:

— Առանց քաշուելու կարող եմ ասել՝ ուէալիստական եւ միայն ուէալիստական: Իմ ընկերներից շատ շատերը երբեմն նոյնիսկ վարմանում են, թէ ինչպէ՞ս եողաւ, որ այս թոհուրոհի մէջ, երբ քսաներորդ դարը ամէն օր մի նոր իզմ էր օգտագործում, մի նոր «գիւտ»՝ արուեստի բոլոր ասպարէզներում, եւ այսպէս յամաօրէն կառչեցի իմ ուսուցիչական նախադրութեանը եւ երբեք չդաւաճանեցի: Ամէնից առաջ եւ պիտի ասեմ ինչո՞ւ. անշուշտ հետաքրքիր էր, եւ էլ կարող էի



Եւ միտքայ տագնապներէն ծնած գարծ մը՝ «Բնութիւն»

ինչ-որ փորձեր անել այս կամ այն սպարէզում եւ, չգիտեմ, կարող էր պատահել ինձ ինչ-որ մի բան յաջողուել կամ չյաջողուել. դա կարելոր չէ, բայց որ փորձել՝ դա իմ իրաւունքն էր, ոչ ոք այդ բանում ինձ թերթել կամ չթողատրել չէր կարող:

Բայց ա՛յն՝ որ մեր պատմութիւնը, իր դառն ճակատագրի պատճառով, շատ ու շատ 100ամեակներ հնարաւորութիւն չի ունեցել ասելու շատ կարելոր բաներ՝ ազգ ու ժողովուրդ դառնալու համար, եւ հիմա, այսօր, երբ մենք այդ հնարաւորութիւնը ստացել ենք՝ խօսելու մեր ժողովրդի հետ պատմելու, կիսելու մեր ժողովրդի հետ ամէ՛ն բան, ինչ-որ թանկ է մեզ համար, եւ թողնել այդ ամէնը ու նետուել, ասենք թէ, մի այնպիսի արւեստի գիրկը, որ հանելուկային բնոյթ ունի եւ պէտք է կռահել, կա՛մ պէտք է զգալ, կա՛մ պէտք է շա՛տ, ինչպէս ա-

ռում են, ինտելիկտով հարուստ լինել, որպէսզի հանոյք ստանալ՝ ես դա չեմ ընդունում:

Նայեցէ՛ք, տեսէ՛ք, մեր պատմութեան բազմաթիւ կարելոր եւ վճռական էջեր նկարներ չունեն, նոյնիսկ այնպիսի մի պատկեր, որ դրուի մեր դասագրքերում: Ապա, մի հատ յիշեցէք աշխարհի բոլոր ժողովրդներին. կա՞յ մի ժողովուրդ, որ իր պատմութեան այս կամ այն կարելոր անցքի համար ստեղծած շիկի տասնեակից ասելի պատկերներ: Ձկա՛յ այդպիսին: Եւ այս պարագայում, ես դատում եմ, որ ամէն մի հայ արուեստագէտ պարտաւոր է խօսելու լուրջ, խօսելու մարդկային լեզուով, հասկանալի՝ բոլորի համար, ո՛չ թէ ընտրեալների, մտաւորականների ինչ-որ մի խմբի, այլ բոլորի՛ համար, եւ դրանով իսկ՝ ո՛չ միայն մեր ազգի ներկայացուցիչներին հասկա-

նալի զարմնելու համար, այլեւ՝ գուրս տանելու, միւս երկրների, նրանց ժողովրդներին մեր ողբերգութիւնը ծանօթացնելու համար: Ի՞նչը, օրինակ, կարող էր այնքան խօստուն լինել, վերացական արուեստի լինչ ձեւ կարող էր լինել այդքան տեսանելի, որքան, օրինակ, «Անտիլի զանգակատան» նկարադարձումները:

Այս առումով՝ ես նաեւ իմ նատիւրալիստների մէջ, իմ կոմպոզիցիոնների մէջ, իմ պորտրետների մէջ միշտ եւ միշտ շօշափում եմ այն խնդիրները, որոնք իմ ժողովրդի համար ունեն կենսական նշանակութիւն: Եւ դրանք համամարդկային խնդիրներ են: Եւ վստահ եմ, որ այդ խնդիրներից շատ շատերը — ու ես դրա ապացոյցները ունեմ, երբ իմ գործերը ցուցադրում են Մոսկուայում կամ մի այլ քաղաքում — ճանաչում են վայելում, որովհետեւ հասկանալի են:

Իմ նատիւր մորտերում եւ մեծ մասամբ օդառործում եմ ազգային մեր արուեստի, ժողովրդական արուեստի նրմոյշները: Ինչո՞ւ: Որովհետեւ ամէնից առաջ մենք շատ, շատ կորցրել ենք, կրակի եւ հրի ենք տուել այդ գանձերը, իսկ այն մասունքները, որ մնացել են, եւ ուզում եմ այդ մասունքները պրոպականդել նո՛յնպէս, եւ ուզում եմ, որ տեսնեն այդ մասունքները, որովհետեւ դրա մէջ է պարփակուած մեր ժողովրդի հոգին, գեղեցիկը ստեղծելու եւ գեղեցիկը երգելու նրա բարի ցանկութիւնները:

Ես կարծում եմ, որ սա արդէն այնքան բարդ, այնքան զժուարին եւ այնքան խորը խնդիրներ են, որ մի արուեստագէտի կեանք շատ քիչ է՝ շատ բան ստեղծելու համար:

(Մնացեալը յաջորդիւ)

● Այսինքն՝ դուք այսպէսով արուեստը կը պայմանաւորէ՞ք ազգային յանձնառութեամբ, ոչ բառին ճաղափական հասկացութեամբ, այլ, ինչպէս կ'ըսէիք, ազգութեամբ: Եւ ինչպէս կ'ըսէիք, որովհետեւ իրենց ազգային պատկանելիութեամբ նկատմամբ անտարբեր եմ եւ տարուած գուտ գեղանկարչական փորձառկումներով, փորձառական փաստաթուղթիմներով:

Այլ խօսեալ՝ կը մերժէ՞ք այն բոլոր արուեստագէտները, որոնք կ'ապրին «փոստկրեայ» արուեստամեջներու մէջ, տէր չեն կամզնիր իրենց ազգային պարտաւորութիւններուն, որոնք կը բխին իրենց ժողովրդի պատմութենէն, ճերմկայի տագնապներէն եւ «անկատար տեմպեր»էն...

— Միանգամայն ճիշդ հասկացաք ինձ: Այո՛, ես այդպէս եմ պատկերացնում արուեստագէտին եւ միայն այդպէս եմ պատկերացնում: Ինձ համար, արուեստագէտը զինուոր է, որ պէտք է պաշտպան կանգնի իր ժողովրդին, նրա մշակութիւն, զարուար ուղիին եւ աշխատի իր էութեամբ, իր նուիրումով, իր գործունէութեամբ թեթեւացնելու նրա հոգսերը, նրա խնդիրները, բաժանելու նրա հետ նրա ուրախութիւնն ու տխրութիւնը: Գուցէ սա շատ խիստ է ասուած, գուցէ սա նաեւ ընդունելի չէ՝ շատ ու շատ արուեստագէտների եւ, յատկապէս՝ քսաներորդ դարի արուեստագէտների կողմից: Իսկ ես չեմ ամաչում եւ նորի՛ց եմ կըրկնում՝ այո՛, ինձ համար իսկական արուեստագէտը նա՛ է, ով ապրում է, շինչում է իր ժողովրդի եւ նրա ապագայի համար:

Հարցազրոյցը վարեց՝
ՍԱՐԳՅԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Շ. Տ Ա Ս Ն Ա Պ Ե Տ Ե Ա Ն

ՖԱՆԹԱՍԹԻՔ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՅԼԱԾԻԱՐԿԸ

*«Pardieu! vive le fantastique!»
Gérard de Nerval (1831)*

«Կը պարսպէի պատմութիւն մը երագելով...: Պատմութիւն մը, որ խօսէր գազանի վախերէն, որոնք կը յանախեմ մեր բնութիւնը, որ յարուցանէր խոր սարսափ մը, — պատմութիւն մը, որուն ընթերցողը չհամարձակէր դիտել իր շուրջ, պատմութիւն մը, որ սարսափ ազդէր ու բարախել տար սիրտը կրկնակիօրէն ուժեղ հարուածներով: Եթէ չյաջողէի, ուրուականային պատմութիւնս անարժան պիտի համարէի անուանս»:

Mary Shelley, *Frankenstein*,
(Ներածութիւն՝ 1831ի հրատարակութեան)

Փանթասթիքը մագնիսացումն է անվերժանելիին, զոր պէտք է գէթ չափով մը կարդալ: Առեղծուածային հանելուկն է ու յանկարծ, կը խուժէ ամէնէն սովորական առօրեային մէջ. կասկածելիմ է ու կը զարգացնէ վարանասութիւնը, բայց եւ ինձմէ պարտադրաբար կը պահանջէ բացատրութիւն, պայծառութիւն: Երեւակայածին տիեզերք մը ամբողջ, վաւերական իր այլուրութեամբ իսկ: Սոսկալին, դաշխակզութիւնը՝ անտանելի՛ դրեթէ: Ճնորքն է, բայց երբե՛ք կախարդականը, սքանչելին կամ՝ ողբերգականը: Համայնական ու զբնական» յարակցութեան խախտում մը հո՛ս կը տեսնեմ:

Արտատնօրը կը թափանցէ բնականէն ներս՝ այլազան ձեւերու ներքեւ: Կա՛մ անբացատրելիի դէմ յանդիման: 18րդ դարուն վերջուորութեան եւ 19րդ դարուն ընթացքին, եւրոպական վիպապաշտութեան ծիրէն ներս, բայց լուսանցքային, կը ստեղծուի Փանթասթիք վէպի կամ պատմածքի սեռը (ալյոթը, գիտա-երեւակայական սեռն ու շարժապատկերը կը ստանձնեն երբեմնի Փանթասթիք գրողական արարքին դերը): Կը ծնի «կոթական» վէ-

պը, ուր կը պատկերուի սարսափը՝ ուրուականներու, արիւնարազմ հրէշնե-
րու, խելագարներու կամ ոգիներէ յանտուած, միջնադարեան ապարանքնե-
րու երկղիմի միջնորդութեամբ:

«Ահա» Հելլոսանք մը կայ, որ կը բխի իրականութեան եւ այլ կարե-
լիութեան մը տարերային պայթարէն, ուր կ'ըլլայ իրականութեան ալակեր-
պումը, գողը: Բայց ասիկա պէտք է շփոթել զգայական այն վիճակներուն
եւ տրամադրութիւններուն հետ, որոնք մեզի կը փոխանցուին ուստիականակն
վէպի կամ «անկումային» գրականութեան ճամբով: Հո՛ս, զգայնութիւնը
վայրագութեան մը խլրտումն է՝ մարդկային հոգիէն ներս, ուր անկարելի
է նաեւ գտնել հետքը բազմակողմանի ու նրբիւնագ երզիծանքի: Գերմանա-
ցի Հոֆման (1776-1822), որ իրաւացիօրէն կը մեայ Փանթասթիք գրական-
նութեան ռահիլրան եւ որուն գլուխ-գործոցներու Ֆրանսերէն թարգմանու-
թեամբ(1) կը սկսի պաշտօնականանալ այս նոր սեռը՝ իբրեւ զբական ինք-
նուրոյն ձեւ, լոյս-աշխարհ կը բերէ «մագնիսականութիւնը բանաստեղծու-
թեան մէջ»(2), պարզագոյն տրամաբանութեան մը իւրայատուկ մերժումով:
Փամանակի ու միջոցի յղացքները աստիճանաբար կ'ենթարկուին հսկայ փո-
փոխութեանց: Անհեթեթն ու հակասականը մերժելի չեն ալ երբե՛ք: Անկարե-
լին կը վերածուի այն «չորրորդ եզրին», որուն հաւատարմօրէն կ'ակնարկեն
Փանթասթիքի ջուրմերը:

Ո՛վ չէ կարգացած այսօր Փոյի կամ Արնիմի մարգաղայլերու պատ-
մութիւնները: Ո՛վ չէ դիտած, դէթ անպատ մը, Յրանսիսքօ Կոյայի, Կիւս-
թաւ Մորոյի կամ Օտիլոն Ռըտոնի պատառները(3): Ո՛վ է, որ չէ ունկնդրած
փիպապաշտ Պերլիոցի «Փանթասթիք համաճուագը» (1830) կամ Շուժանի
Փանթիլիները (ներշնչուած Հոֆմանէն):



Զուտ գրական մարդէն ներս, պայման է յիշել անգլիացի Ուալփուի
(1678-1797) «Օթրանթոյի դպեակը» (1764), ուր կը պատմուի Մանֆրէտի
խորհրդաւոր արկածանկարութիւնները: Անոր հաւատարիմ շարունակողները
եղան Ան Ռատքլիֆ (1764-1823) եւ Լուիս (1773-1818), որուն «Վարդապետը»
խորագրեալ վէպը (1796) իր գապաթնակէտին կը բերէ «կոթական վէպը»:
Հարկ է յիշել նաեւ Մաթիւրէնի (1782-1824) «Մելմոք»ը (1820), ուր կը բա-
ցայայտուի կելտական միսթիսիզմի տենդոտ վարհուրանքն ու փիլիսոփական-
կան թրթուումը: Պեքֆորտ իր «Վաքիէ»ը կը տպագրէ 1787ին եւ, վերջապէս,
Մէյրի Շիլլի համբաւահոյակ ու դասականացած տիպարը «Ֆրամէքըշթայն
կամ ժամանակակից Պրոմէթէոսը» (1818): Յրանքընշթայն վիպապաշտ հե-
րոսի մէկ տարբերակն է, նո՛ր Ֆաուսթ մը, յուսախար միջոց՝ քանի կը կրէ
«զեղուն սիրտ մը՝ պարպուած աշխարհի մը մէջ»: Այս վէպը կարելի է այսօր
կարգալ իբր սիրոյ «այլակերպուած» մէկ արտայայտութիւնը, քանի Յրան-
քընշթայն զոհ մըն է մա՛նուանդ(4): Աւելի ուշ՝ հրապարակ կ'ընեն Մըր
Ուոլթըր Սքոթ, Սթիվընսըն, Պրոնթէ, եւայլն...: Անկլո-սաքսոններէն յի-
շենք՝ Փոն, Օ'Պրայլըն, Հաութօրն, Բրաուֆըրտ, Լովըքրաֆթ, Պիքս, Իսկ
ոռւս գրողներէն՝ Թոլսթոյ եւ Կոկու:

«Ասեղծագործութիւնը կարողականութիւնն է՝ դրաւելու նիւթի մը



Ֆամբաստիճ պատառ մը՝ ժերմիմուս Պոշի ևլուրք Ատոնիստի փորձութիւնք

քորութեան կարելութիւնները, ինչպէս նաեւ կազապարելու եւ կերպարանաւորելու այն գաղափարները, որոնք անկէ կը թելագորուին, կը գրէր Մէլլի Շիլի: Արդարեւ, կարելի չէ անջատել Փանթասթիքը բանաստեղծականէն, վախի ու ցանկութեան բանաստեղծութենէն: Դիւահալած աղօթք մ'իբր, ան կը փորձէ զանցել մեր ներքին դեւերը, ստեղծելու կերպարը homo-fantasticusին, որ կը առաւելի ու կը շարշարուի իր ներքին հակասութիւններուն մէջ՝ ճեղքելով «բնական» օրէնքները համայն, խառցեալ յուզականութեան մը այլօրինակ ու անորոշ յայտնութեան բանաստեղծականութեամբ: Ներվալի համար, «երազը երկրորդ կեանք մըն է», ու երազը բեղուն է երկրիմի անակնկալներով, ցանկութիւններով, դատնութիւններով, պալտ-

կերճերով: Բայց Հոսի կը բնակի ճշմարտութիւն մը՝ լուծելի, թէեւ յարա-
կարծիք: Ունի՛ իր բանականութիւնը: Ֆանթասթիքը բանաստեղծական սուք
մըն է, որ յարատեւ կ'ապրի օրինականութեան մը մտասեւեռման ներքեւ(5):
Սեռին երկզիմի նկարագրերը կը հաւատայ ուրեմն «գիտութեան» մը կարե-
լիութեան:

Արդի քննադատ մը՝ Թոտորով, կ'ընէ. «Գերբնականի դերն է նաեւ ա-
զատագրել թեքութիւն օրէնքի ազդեցութենէն եւ ուրեմն զանցել զայն (օրէն-
քը)»: Այս պէտք չէ ճեղի մոցնել տայ այն հաճոյքի, հրճուանքի բաժինը,
որ Ֆանթասթիքինն է՛, անսակարկ (թեքութի պատճառած, հաճոյքը, որուն
կ'ակնարկէր Ռուան Պարթ — 1915-1980): Անսովորին հմայքը: Ինչպէ՞ս չյի-
շել Քրանսայի նոսրէի (1790-1844) գեղեցիկ սա խօսքերը՝

«Վաւերական Ֆանթասթիք պատմուածքը կը մտահոգէ, կը հմայէ ու
կը խռովէ, ստեղծելով անսովոր ներկայութեան մը գրայնութիւնը, գերբնա-
կան գաղտնիք մը, վախազու կարողութիւն մը, որ կ'արտայայտուի նման
անդենականի ազդարարութեան մը, մեր մէջ, մեր շուրջ, եւ որ, ազդելով
մեր երեւակայութեան, մեր սրտին մէջ կ'արթնցնէ անմիջական արձագանգ
մը»:

Վախէն հմայք՝ ահա՛ երթը: Հոգեվերլուծական գիտութիւնը «անդե-
նականը» կը թարգմանէ այլ ձեւով («autre scène»): Արդարեւ, Ֆանթասթի-
քը յարակցութեան մէջ է հոգե-ախտաբանականին հետ, եւ մարդ-էակի գո-
յութեան կապուած խորախորհուրդ գաղտնիքին: Ֆանթասթիքը է՛ նաեւ վայ-
րը յոյսի ու կարելի փրկութեան մը գրականութեան, որովհետեւ կ'ընէ հո-
գեմտութեան անդեմութեան, անձկութիւններէն ու վախերէն անդին: Ար-
ձագանգ(6):



Ահա այսպէս Ֆանթասթիքը կը նուաճէ անորոշութեան ժամանակը: Ու
վարանումը իր գննիքին է հոս: Բայց ո՛ւր կը կայանայ ընթերցողին դերը
ընդհանուր այս պարունակին ներս, ուր «Ֆանթասթիքը խախտումն է ընդուն-
ւած կանոնին, անընդունելիի ժայթքը անայլայլ առօրեայ օրինականութեան
մէջ...»(7): Ընթերցողը, ինք եւս, գերզգայուն ձեւով կ'ապրի ահաւոր տա-
տամոռի մը: Պէտք է ընդունի գրողին «խաղը»: Մեկնաբանական փորձը
կրկնակիօրէն մահացու է Ֆանթասթիքի պարագային: Հարկ է վերադառնալ
հաճոյքի անմիջական ընկալման, վայելել կոսիկածն ու սարսափը, վայելել
անտանելին: Ահա՛ ձեւը, որ կ'առաջարկուի գրողին կողմէն իսկ: Ընթերցո-
ղը ինք կ'ըլլայ պատմուածքի «պատմիչ»ը, կ'ապրի՛ միասին: Պարզապէս պա-
րագային, կը նայանայ հերոսին հետ ու կը շրջապայի:

Ամէն «գերբնական» գրուածք Ֆանթասթիք չէ՛ անպայման (ապա թէ
ոչ՝ Հոմերոսէն մինչեւ Կէօթէ, համաշխարհային գրականութեան մեծագոյն
փառքերը հո՛ս պէտք էր համարուել): Այսպէս, Լովլըքրաֆթի համար՝ կեն-
սական է պատմուածքի «մթնոլորտային ոլորտը», անոր «ստեղծած յուզա-
կան ուժգնութիւնը»: Խօսքը իրեն կը ձգեմ. «Պատմուածք մը Ֆանթասթիք է
պարզապէս, եթէ ընթերցողը խոր կերպով մը գրայ երկիրչի ու սարսափի
զգացում մը, ուրիշ աշխարհներու եւ անսովոր ուժերու ներկայութիւնը»(8):

Նման մտածողութիւն մըն է, որ կ'արտայայտէր Փօ, երբ կ'ըսէր. «Ներեւա- կայութիւնը ինծի կը բերէր անհասնում վայելքներ»(9) :

Հետաքրքրական է մօտէն ուսումնասիրել պատմիչի դերը Փանթա- ֆիք պատմութեան մէջ: «Հերոս»ը հոս կը ստանձնէ երկու տարբերուած ան- նականութիւններ. առջինը «խրական» ներկայութիւնն է անոր՝ իբր խօսող ու ապրող «ես», երկրորդը «գրական» իւրաձեւ ներկայութիւն-հակադրու- րութիւն է: Ծանթաֆիք գրականութիւնը իմաստալի շփոթ մը կը ստեղծէ այս երկուքին միջեւ: Երկուքի միջեւ շատ քննադատ կը թուի միգր (ընթերցողին՝ ընդ- հանրապէս): Հերոս-պատմիչը ինք կը ստեղծէ այն կացութիւնը, որմէ միայն կը ծնի ապշութիւնը: Երկուքի միջեւ նշան կ'ընէ ուրեմն վաղափարա- կան բազմաթէքութեան մը: Այդիւ առօրեային դուրս կարելիութիւն մը ու պատմելի զայն, անպայման ըսել՝ «մէկնէն զեկն» գրաբանութեան մը՝ մը- նալով հանդերձ «առարկայական»: Գրութիւնը՝ մտացածին՝ կը մերժէ քա- նազանէլ ճշգրիտը սխալէն, բայց չի տեսնի ինքզինք պատրանքի թակարդին մէջ բռնուած: Այլ՝ պատկերներու զգլխի գինովութեան մը տարափին տակ, ուր կը ձեւափոխուի դիմակներու բազմազանութիւն մը: Տեսարաններու յա- րատեւ շարժ է, այլօրինակ դիպաշարներու ընթացք: Պատկեր է՝ կենդանի, թատերական, տեսլային: Հսկայ փոխաբերութիւն մը՝ անդադար փոխաբեր- ւած, Հերքուած, կասկածոտ: Այլարանութիւն մը՝ ներքին շողկալում Փան- ֆաութիք:



Քաղթ (1719-1792) կը մնայ Փրանսական Փանթաֆիքին հայրը: Իր գլուխ-գործոցն է կենդանի ու բացառիկ վիպակ մը՝ «Արախար ստառման», որուն հերոսը՝ Ալվար, այսպէս կը խօսի. «Հետաքրքրութիւնը ամենազօրեղ կիրքս է»: Վիպակը կը յիշեցնէ նոյն շրջանին դրուած «Մանն Լեօֆ» (1731): Պիտեռ Թիլլի և Մանոնի կնոջական կերպարները ունին բազմաթիւ նմա- նութիւններ, գէթ մօտէն ուսումնասիրած են արցունքին ու պաղատանքին ազդեցիկ սպաւորութիւնը տղամարդուն վրայ: «Մ'հ, արցունքներու ազդե- ցութիւնը... Անկասկած որ ամէնէն ազդուն է սիրոյ բոլոր նետերէն», յու- սահատօրէն կ'ըսէ Ալվար: Պիտեռ Թիլլի սքանչելիքը իր երկրի մէջ նկարա- գիրն իսկ է (կին թէ դեւ): Ալվար կը զիջի խաբկանքին ու կը գոտայ. «Մ'ըք է կարեւրն, եւ ո՛ւր՝ անկարելին»:

Քաղթի ազդեցութեան ներքեւ, Կոմս Ժան Փոթոքի (1761-1815) կը գրէ «Տ'Ալիլայի դիպակներ» վէպը, որ առաջին անգամ կը տպագրուի Սէն-Փե- ֆերգուսի մէջ 1804-1805 թուականներուն: Փոթոքի կ'աւետէր Հոֆմանի «ուրուականային» գրականութիւնը: Վէպը գրուած է արաբական «Հազար ու մէկ գիշերներ»ու հետեւողութեամբ:

1830ական թուականներէն սկսեալ, Փարիզի մէջ, կը սկսին հրատա- րակուիլ Նոտիէի, Կոթիէի և Ներվալի Փանթաֆիք պատմութեան գործերը: Նո- տիէի «Մմար կամ գիշերային դիպար» պատմութեան գրուած է 1821ին, ու- րուն կը հետեւի «Քրիստի» (1822, բեմադրային է մթաստուեր ու չնաչխարհիկ Սկոպիան) և «Մանուտուած պարիկը» (1832), ուր հեղինակը կ'ուզէ փաս- տել լուսնոտութեան իմաստութիւնը: Յիշեց նաեւ 1837ին լուս տեսած «Իմնս

տէ Լաու Սիէրաս» պատմուածքը, որուն գործողութիւնը կ'ընթանայ Սպանիոյ մէջ:

1830ին, Պալպաք (1799-1850) կը հրատարակէ երկու կարեւոր վիպակներ՝ «L'Elisir de longue vie» եւ «La Sarrasine»: Տարի մը ետք, կու տայ գլուխ-գործոց մը՝ «La Peau de Chagrins»:

Քէոֆիլ Կոթիէի (1811-1872) Փանթասթիք պատմուածքները կը հաշուեն բազմաթիւ գոհարներ: 1981ին, Ֆլամարիոն վերահրատարակեց զանոնք՝ «Փանթասթիք պատմութիւններ» անուան տակ: Կոթիէ գրած է նաեւ վիպակ մը, «Սփիըրիք», որ անձնագէտ կը համարեմ գլուխ-գործոց մը Փանթասթիք դրականութեան վայրէն ներս: Կոթիէի ամէնէն տեղեկ գործն է անկիս՝ վերատեսչու տկուտ սիրոյ, դաղտնի միթոսը անդրշիրիմեան սէրերուն: Բոցոյտ ու կիզիչ էջերու հրաշառութիւն մըն է այս գործը, ուր Կի եւ Լաւինիա գիրար կը ճանչնան միմիայն ազնկան մահէն ետք ու կը ստեղծեն հրեշտակային գոյութիւն մը, այլ եզր մը, նուրբ ու գիտակից, որ կը բանայ մարդկային հոգիի քննարկական խորամաս խորհուրդները:

Պալոյֆ Պլուպերի (1821-1880), 1871ին միայն կը հրատարակէ «Սուրբ Անտոնիոսի փորձութիւնը», որ կը ներշնչուի Պրէօկելի համոնուն պատասուէն ու կը գոհացնէ Հեղինակի վիպապաշտ-քնարերգական յաճախ ներմրդւած ցտեղութիւնը(10): Թատերակի մը սահմաններէն ներս, ընթերցողին կը ներկայացուի 250ական թուականներուն ծնած Անտոնիոս միայնակացի կեանքն ու ճգնութիւնները, եզրպատկան անսպասին մէջ: Անտոնիոս անդու կը պայքարի Սատանայի բազմաճնար փորձութեանց դէմ, ու կը մաքտի՝ պահելու իր մարտութիւնը ազօթքով, մարմնական տանջանքներով: Շատեր այս երկը նմանեցուցած են Կէօթիէի «Նրկարդ Փաուսթին»: Կը վերջանայ հետեւեալ սուղերով՝

«Առաւօրը վերջապէս կը ծագի, եւ նման խորանի մը վարագոյրներուն, որոնք կը վերցուին, ոսկեայ ամպեր դալարուող կը կազմեն լայն ուլորտներ, որ երկինքը կը բանան:

«Ճիշդ մէջտեղը, եւ արեւի սկաւառակին մէջ իսկ կը ճաճանչէ դէմքը Յիսուս-Քրիստոսի:

«Անտոնիոս կը խաշակնքէ ու կը վերսկսի ազօթելու»:

Փանթասթիքը կը սիրէ կինը: Փորձենք փնտռել կնոջական տիպարին դերը այս տարածքէն ներս: Կինը կը ներկայանայ ինծի այլազան եւ ընդգրծւած ձեւով, անորոշ դիմակներով: Երբեմն լուր արձան է (յիշել Մէրիմէի «Ղի Վեմիւսը», 1827), երբեմն՝ մեքենայացած սուպրիկ-մանրէն (Հոֆմանի Քոփիլիան), կախարդն է՝ այլուր, կին-ուրուականը (Պիոնտէթթա, Պրամպիլլա), որ կու գայ մեզի՝ մոգական, ահաւոյ: Կինայ վերածուիլ սարդի մը, պահելով իր քաղցրութիւնը համայն, իր ճօճութիւնը առաջին: Բայց կը հանդիպինք նաեւ կնոջական միւս երեսին, հրեշտակային եւ աննութեական: Զուլուլ, Մահէն անդին յայտնուած ու սիրուած (տե՛ս «Վերա», Վիլիէ տը Լիլ-Ատամ կամ «Սրիա-Մարչիլլա», Կոթիէ): Իտէալական այս սէրը կ'երազանայ երբեմն մեր աշխարհին մէջ («Թէթաթաթա», Կոթիէ), բայց այն-

քան դժուար: Կոթիէի մէկ այլ պատմուածքի մը մէջ («Օւֆալ»), նըրբօրէն սեռայնական, զորգեղէնի մը վրայ դիւթականօրէն ուրուադժուած մարքիզ մը կը վերադառնայ աշխարհ, սիրելու երիտասարդ ու գեղեցիկ «պատմիչ»ը: Կուսակեղծ սիրողներու յարաբերութիւնը, երիտասարդին մօրեղբայրը զորգեղէնի փոխադրել կու տայ դղեակի ձեղնայարկը: Աւելի ուշ՝ «պատմիչ»ը հնավաճառի մը մօտ կը գտնէ ԴՕՇՕՇ զորքը ու կը ցանկայ անոր տիրանալ: Բայց ծախուած է արգէն: Կոթիէ իր պատմուածքը կը փակէ հեղեականօրէն.

«Et puis je ne suis plus assez jeune ni assez joli garçon pour que les tapisseries descendent du mur en mon honneur».

Պանք Ներվալի (1808-1855): Հոս, միջերկրականեան-արեւելեան միութիւնի մը ծիրէն ներս, կենը պաշտուածի առարկայ է, հրելտակ քէ սառունայ: Երգչուհի եւ դերասանուհի ձէնի Քուլոնի դերը մեծ է Ներվալի դործին մէջ: Ձէնիի մտնունութենէն ետք եւ իր զարմուհի Սոֆիի անկարելի սիրոյ պատմութեան վերջաւորութեան, Ներվալի արգէն անհանգիստ ուղեղը կը սկսի յղանալ իր «Յաւիտեանական իգական»ի այլադիմակ իղձ-պատկերները (Փօլիս, Պալքիս, Իզիս, Միլվի, Արթէմիս, Ատրիէն, Օրէլիս, Էւայլն...): Միտուհին, միակը, միշտ փնտրուած, կորուած: Ահա թէ ինչպիսի բանաստեղծականութեամբ ան կը նկարագրէ անոնցմէ մէկը (ուր կը գտնէ իր պատանեկան անուրջներու անդարձ կորուած կախարդականութիւնը միպապալտ):

«Adrienne, fleur de la nuit éclose à la pâle clarté de la lune, fantôme rose et blond glissant sur l'herbe verte à demi baignée de blanches vapeurs».

Ռիչար, գրական քննադատ(11), Ներվալի մօտ կ'ուսումնասիրէ «կորսուած կրակ»ի թեման: «Ներվալ կ'երագէ մարդը՝ իրրեւ կրակ մը կորսուած, թաղուած — ուրեմն միտմամանակ կը փնտռէ արեւածագերու տեսարանը եւ վարդազօյն կղմիտրներու փայլքը արեւամուտին, երիտասարդ կիներու բոցավառ վարսերու հագորդակցութիւնը կամ չէ՞ գաղութիւնը անոնց մարմինն bionda e grassotta» (միշտ առեւ, վարս): Ներվալ չի կրնար վերջնականօրէն կապուիլ իր «գծած» դիմապնդէն մէկուն, միշտ կու գայ ու կ'անցնի: Ներվալ ինքզինք չի՛ կրնար բյաւ վերջնական ու անբնական չէ յանպուժը անմասսպանութեան: Իր Էրազն է՝

«Միրել կրօնաւորուհի մը՝ դերասանուհիի մը ձեւին ներքեւ — հապա եթէ նոյնն էր — իննթենալիք բան է...: Ճակատագրական յափշտակութիւն մըն է, ուր անծանօթը ձեռք կը քաշէ նման շրջմոլիկ հուրին, որ կը փախչի մեռած ջուրի մը զլիկներուն վրայ...»:

«Երջմոլիկ հուրը» (feu follet) կ'ըսէ ներվալեան անհաւասարակչուութիւնը, անձկութիւնը. կը նմանի խաղի մը, որ հանդիստը չի՛ ճանչնար: Ահա թէ ինչու «եւ»ը տարտամ կը մնայ: Եղիայի նման, իր մէջ կը գոյակցին երկու ձեւեր, մէկը՝ դրական, միւսը՝ չարախինդ: Պատուածքն է, մահուան ցանկութիւն(12): Օրէլիս կ'ըսէ(13)՝ «Էս նոյնն էմ, Մարին, նոյնը մայրդ, նոյնը նաեւ, զոր միշտ սիրեցիր, իր բոլոր կերպարանքներով: Քու ամէն մէկ փորձութեանդ, ձգեցի մէկը դիմակներէս, որոնցմով իմ գիծերս կը ծածկեմ, եւ շուտով պիտի տեսնես զիս ինչպէս որ եմ...»: Ներվալ այլեւս ի՛ր մարմինն վրայ կ'ապրի մարդկային ձայնը, նիւթեղ, երգ ու արձագանդ, կեանք եւ լիշտասի: Կը հասնի պարը, ուժականութեամբ արոփուն, միսթիք, թափան-

ցի'կ : Երաց ու դադանիք, Ձայնը կը թրթռայ, կ'ըլլայ լեզու, բառ, կամ՝ բառերու ձայար», ցնորք : Իրականն եւ ձայնայի'ն : Մօրենական, Իգական :



Փանթասթիքը Հայելիի մը մէջ ինքնապատկերման ձեւ է : Հոֆմանի «Պրամպլիլլայի իշխանաւիւն» պատմուածքին մէջ , Գորնէլիօ եւ Պրամպլիլլա զիրար կը ճանչնան միմիայն Հայելիի մը ցոլացմամբ (զպայծառ ու կախարդական Հայելի) : Հոֆմանի համար կնոջ աչքերը Հայելիներ են , «ուր կը ցույց տրոյ ամէն խնթութիւն , ինքզինք կը ճանչնայ ու կը դժուարի երջանիկ» : Հայելիի դերը ներկայ է նաեւ «L'Homme au Sable»-ին մէջ : Փանթասթիքի այլաշխարհը տեսողական թեման կը կապէ , բնական է , սեռայինին : Անզիտացի Լուիսի «Վարդապետը վէպին մէջ , Հերոսը փորձութեան կ'ենթարկուի Մաթիլդէն . . . Աստուած իմ , ի'նչ կուրծք . . . : Լուսնի ճառագայթները , որ զայն լիովին կը լուսաւորէին , թոյլ կու տային վարդապետին , որ պէտքի դիտէ անոր ճառագայթոց ճերմակութիւնը : Իր աչքը պտըտեցաւ անկուշտ անշարժութեամբ մը հմայիչ գնդաձեւին վրայ : Մինչեւ այդ իրեն անձանթ զգայնութիւն մը իր սիրտը լեցուց անձկութեան ու Հեշտանքի խառնուրդով մը : Եռացող կրակ մը շրջեցաւ իր անդամներուն մէջ եւ սանձարձակ , անզուսպ , հազար ցանկութիւններ յափշտակեցին իր երեւակայութիւնը — կնքուցէ՛ք , — պտայ խելակորոյս ձայնով մը , — այլեւս չեմ գիտնար» : Ապա՝ կարգը կու զայն Անթոնիայի . «Իր սիրտը կը տրոփէր իր բերնին մէջ , մինչ իր աչքը կը լսփէր այդ կերպարանքները , որոնք շուտով իր որսը պիտի ըլլային» : Մաթիլդ տրոփէն Լիւսիֆէրի ծառայ է , կին-սասանայ , ցանկութեան մը առարկայ : Քաղթի Հերոսը , Ալվար , վէպի աւարտին , կ'ուզէ վանք մտնել եւ ապաշխարել : «Ենորհալի սեռ , պէտք է որ Հրատարիմ ձեզմէ . . . : «Մի' նայիք երբեք կնկան մը , եւ քաշեցէ՛ք՝ միշտ աչքերնիդ դեպին յառած , քանի որ , որքան ալ զգաստ ըլլաք ու խաղաղ , մէկ վայրկեան բաւական է տրոփէն կորոնցնելու յաւիտենականութիւնը» (Կոթիէ , «Մեռեալ տարփուիւն») : Սեռայինը յարակցուած է աչքին(15) :

Գրական մակարդակին վրայ , Փանթասթիքի սեռը պիտի ստանձնէ՝ ակադամականը , շատ մը պատմուածքներու մէջ արձանագրուած «սասանայական գաշինքով : Սկսեալ Քաղթիէն , կարգ մը Հեղինակներու ձօն Հերոսը ստիպուած է ընդունիլ Զարին տիրապետութիւնը : Ճառասթի գիցարանական կերպարի շարունակութիւնն է , որ տեղի կ'ունենայ : 16րդ դարուն ապրած Փառլսթ , ալքիմիագէտ , յաւիտենականացած գերմանացի Կէօթէի «Ճառարք»ով (1808-1832) , միպապաշտ Հերոսի տիպարն է , որ դանակեցելով Մեֆիսթոֆելիսի , չի կրնար բերրազատուիլ նաեւ զինք Ստեղծողի մտասեւեռումէն : Փառլսթ , միշտ պատակտուած , ի'ր մահուամբ միայն կ'ազատագրէ իր Հոգին , զոր Հրեշտակներ կը փոխադրեն դէպի երկինք ու ողբերգութիւնը կը զոցուի «աստուածային կատակերգութեամբ» :

Վտանգաւոր է «գողնալ երկնքի դադանիքները» ու Փանթասթիքը վերջապէս կը միտի վերահաստատել Տրամարանութիւն մը , Բարոյական մը , իրեն յատուկ : Զարն ու Բարին պէտք է գոյակցին ու ծափայնեն լոյս-այլաբարՀ աննելու գերբնականը , կատաղի'ն : Գոյամիճակ մը կը ստեղծուի , որ չ'ենթադրեր երբե՛ք լաւատեսութեան մերժում մը , Բարեքը ինքնին :

Փակելու համար այս վորձը հոս, խօսքը կը ձգեմ մեծն Կլօթէին.

«Զույգ հողիներ, աւա՛ղ, հռեթիւնս կը բաժնեն, եւ անոնցմէ ամէն մէկը կ'ուզէ միւսէն բաժնուիլ. մէկը, սիրա՛վառ, կը կառչի աշխարհին մարմնի անզամենորու միջնորդութեամբ. զերբնական շարժում մը կը քշէ միւսը Յեռու խոււարէն, զէպի բարձր բնակարանները մեր նախնիներուն» (Յատութ):

ՇՈՒՇԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ա) Նօթեր

(1) Հոփմանի երգի գրայնութեան ծնունդ «Աւազով մարդը» առաջին անգամ ֆրանսերէնի կը բարգմանուի 1830ին:

(2) Մեթ-Պեով, Premiers Lundis, ուր կարելի է կարգալ յօդուած մը հատրուած Հոփմանի (1830):

(3) Ինչպէ՛ս շիշել հետեւեալ գեղանկարիչները հայտնաւ ու գերագնացօրէ՛ք Փառքաթիֆ Պօշը (1450-1516), Պրեօկելը (1528-1569) եւ, մա՛հաւանդ՝ մեզի շա՛տ աւելի մօտիկ գերիբապազու Շիրիֆն, Մաֆօ էրնօքը, Մակայն ու հաճախեալ՝ Տալիլ:

(4) Ֆրանգըշքայնի միջոսի ծնունդ է տիրաւորակ Տրաֆիլամ: Յիշե՛ճէ, ի միջի այլոց, թէ Մարի Շիլիի վեպը շարժապատկերի պատասխանում վրայ կ'երեսայ առաջին անգամ 1910ին (Ետիսն): Այսօր, կարելի է արդե՛մ հաշուել Տրաֆիլամի տարբեր Ֆրանգըշքայնիներ:

(5) «Ամէնէն ինճ» մտածանոյթին մէջ իսկ հարկուոր է արտաբանակամ կառայց մը», կար՛իէ, La Chronique de Paris, 1836, (գրուած՝ Հոփմանի մէկ երկի թարգմանութեան առթիւ):

(6) Կրկին կը յիշեմ Պարթի գերագոյն ցանկութիւնը, «Բարձրագոյն գրութիւն մը», տե՛ս «Le Plaisir du texte», Ed. du Seuil, Փարիզ, 1973:

(7) Իո՛ժէ Գայուտ, Au cœur du fantastique, Կալիֆօրնիա, Փարիզ, 1965:

(8) Լովէրաֆֆ, Supernatural horror in literature, Նիւ Եորք, 1945:

(9) Փօ, Histoires grotesques et sérieuses, Կարմիէ-Յիլամարիան, Փարիզ, 1969:

(10) Խօսելով այս գործին մասին, Ֆլայեր կ'ըսէր «Կեանքիս երկն է»:

(11) Ժան-Փիեռ Ռիշար, «Poésie et Profondeur», Ed. du Seuil, Փարիզ, 1955:

(12) Ֆեմցօ կ'ըսէ «Ես-ը սարիչ մըն է», Ներվալ՝ «Ես սարիչն եմ»:

(13) Ներվալ «Les Filles du feu, la Pandora, Aurélie», Կալիֆօրնիա, Փարիզ, 1972:

(14) Ներվալ, «Les Chimères», Փարիզ, 1854:

(5) Յիշե՛լ որոշ «մանկական» պատմութիւններ, որոնց պարագայիլ շեռայինք ընթերցում մը անկարելի չի՛ թափը երբեք («Կարմիր գլխարկիկ»): Տե՛ղ մը, այստարանակամ կացութիւն մը կայ եւ Փանքասթիֆը առիթ է խօսելու ներմուտած տեսիլներ, ստե՛սապո՛ղծութիւնը, չափազանցուած զգայասիրութիւնը, եւ այլն...: Բժշկագէտ Շարֆօ կ'ըսէր «Զգայականութիւն, եթէ գլխտուները կը ներկայանան ստանալական ծածկի մը ներքեւ»:

բ) Պատգործուած աղբիւրներ

Lovecraft, Supernatural horror in literature, New York, 1945
Tzvetan Todorov, Introduction à la littérature fantastique, le Seuil, Paris, 1970
Irène Bessière, le récit fantastique, la poétique de l'incertain, Larousse, Paris, 1974

Louis Vax, *L'Art et la littérature fantastiques*, PUF, Paris, 1960
 P. G. Castex, *Le Conte fantastique en France*, Ed. José Corti, Paris, 1982

†) *U-...-r44r r4P4rgr4d4r*

Cazotte, *Le Diable amoureux*, Garnier-Flammarion, Paris, 1979
 Potocki, *La Duchesse d'Avila*, Gallimard, Paris, 1958
 Beckford, *Vathek* (conte arabe), Garnier-Flammarion, Paris, 1981
 Gogol, *Récits de Pétersbourg*, Garnier-Flammarion, Paris, 1968
 Mary Shelley, *Frankenstein*, Garnier-Flammarion, Paris, 1979
 E. T. A. Hoffmann, *Contes Fantastiques* (3 volumes), Garnier-Flammarion, Paris, 1980
 E. A. Poe, *Histoires extraordinaires*, Garnier-Flammarion, Paris, 1961
 E. A. Poe, *Nouvelles Histoires extraordinaires*, Garnier-Flammarion, Paris, 1961
 E. A. Poe, *Histoires grotesques et sérieuses*, Garnier-Flammarion, Paris, 1968
 Balzac, *La Peau de Chagrin*, Garnier-Flammarion, Paris, 1971
 Lautréamont, *Les Chants de Maldoror*, Garnier-Flammarion, Paris, 1969
 Mérimée, *Carmen et autres nouvelles*, Ed. Rencontre, Lausanne, 1967
 Flaubert, *La Tentation de Saint Antoine*, Garnier-Flammarion, Paris, 1967
 Nerval, *Le Voyage en Orient* (2 volumes), Garnier-Flammarion, Paris, 1980
 Nerval, *Les Filles du Feu, La Pandora, Aurélia*, Gallimard, Paris, 1972
 Nodier, *Smarra, Trilby et autres contes*, Garnier-Flammarion, Paris, 1980
 Villiers de l'Isle-Adam, *Contes Cruels*, Garnier-Flammarion, Paris, 1980
 Barbey d'Aurevilly, *L'Ensorcelée*, Garnier-Flammarion, Paris, 1966
 Maupassant, *Le Horla*, Albin Michel, 1982
 Gautier, *Récits Fantastiques*, Garnier-Flammarion, Paris, 1981
 Gautier, *Spirite* (nouvelle fantastique), Ed. Nizet, Paris, 1970

Ա Ի. Ի Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն

Գ.- ՆԱՄԱԿՆԵՐ՝

ՍԻՄՈՆ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

29

2 մարտի 1922, Վենետիկ.

Սիրելի Սիմոն,

Այսօր ստացայ «Արեգը», հոս քաշեցի, քաղցր էր հոտը. սիրուն էր Ա-
ճեմեանի ոտանատրը. տիկ. Եսայեանինը դեռ չեմ կարդացել. մանր բաները
միայն կարդացի:

Վերջին նամակիդ մէջ միտք էիր յայտնել Հայաստան տեղափոխելու
մասին. խորհուրդ չեմ տալիս, դեռ վաղահաս է. շա՛տ բան կարող է դեռ տեղի
ունենալ, սովն էլ իր կարգին. մնացել ենք, դեռ մնանք մի առ ժամանակ էլ,
տեսնենք ի՞նչ կը լինի:

Գրածդ թուրը տպագրութեան ծախսերի մասին՝ անմարտեղի է. մշտ-
քովս չեմ անցկացնում բան տպել. ես կարծում էի թէ իտալական մի քանի
հարիւր լիրայով գլուխ կը գայ:

Յով. Խան-Մասեհեանից ստացայ շնորհակալութեամբ «Համլեթը» — ի-
րան կը գրեմ. լան է, թարգմանութիւնն էլ լաւ է:

Տղաս շա՛տ բարեւելով քեզ, խնդրում է որ իր համար նամակի նիշեր,
մարկաներ(1), հաւաքես. իր ասելով «Չինական, Հնդկական, Պարսկական,
բօլշեւիկների եւ Ամերիկայի երկիրների...»:

Մոռանում եմ հարցնել, ի՞նչ եղաւ «Persischer Divan» գիրքը:

Դառնանք «Մեերին»...

Մեերը կը տպես, ինչքան կուզես, ինձի կուղարկես մի քանի օրինակ,
մնացածը կը ծախես «Արեգի» օգտին: Օգուտն էլ, վնասն էլ քեզ:

Տպագրուած կարդալով աչքիս ընկան հետեւեալ տողերը որ լրիւ չեն.
առանձին գրքոյկի մէջ անպատճառ դնես:

1) — «Էս... վիշապ... անկտում
Բան... մառանն ու տաշտում» —
Իրար կատէին
Ճընճղափորիկ ու իրեն կնիկ(2):

(Ընթերցողը առաջ ստիպուած էր գուշակել կարդալով «Էրիկ ու կնիկ»,
 թէ դրանք ովքեր կարող են լինել), միաները «Էրիկ-կնիկ» թողնենք նոյնը:
 Սա էլ մուգն է. ուղղել այսպէս:

2) ... Ու միտք կանէին (3)
 Էրիկ-կնիկ,
 Թէ ինչպէս անեն,
 Մի բանի արով, արով = նպատակով.
 Մի ուրիշ ճամբով
 Հեռացնեն Միեր
 Տընէն ուտելէն,
 Անճարակ հանեն կամ խելքէ տուկատ...

Մի քանի օր առաջ յաւելում էի ուղարկել. գուսանի երգը կը դնես հե-
 տենալ տողերի մէջ — Դրկեց կօտի
 Թագաւորի,
 և
 Օրէն մի օր,
 Էն գեղի ռես (4).

Ինձ համար պօէմիս մէջ թոչունների հետ խօսած տեղը ամէնէն թոյլն է.
 չեմ ուզում, որ թոչունը լեզու առնի, այլ ուղղակի թայ Միերին. դրա համար
 էլ այդ վարիացիան (5) էի դրկել:
 Եւ այս կտորը.

— Թէ որ տէր դառնաք (6)
 Ձեր իրաւունքին —
 Ձեր աշխատանքին,
 Ձեր արդար հացին,
 Մէկէն կը չքին
 Հարուստ ու իշխան
 Աշխարհիս վըրան. —
 Երթամ շինեմ բերդ ու պատար... (շարունակել)

Ու ծեք գուսան
 Իք բաժն առաւ —
 Կուց մի ցորեն... (Իոյլը մեծ է, դրանով աշուղին չեն տալիս
 երբէք, այլ մի բուռ, մի կուց:)

Այլեւս չկրկնել Միերի ասած տների վերջը.

«Ռամկութիւն բերեմ,
 Ռամկի իրաւունք». սրանք թողնել անաղարտ:

Որովհետեւ արդէն վերելում ասում է թէ ինքը «Ռամկի իրաւունք» ասե-
 լով հասկանում է տէր դառնալ աշխատանքին եւ արդար հացին:

Վախենում եմ շահ տ կրկնելով «աշխատանք, արդար հաց» գրուածքս միտումնաւոր, քարուշական դատնայ, որ ասել է, թէ մեռաւ:

Բարեհաճէիր, սիրելի Սիմօն, մի քարտ գրել այս առիթով: Գրքոյկի մէջ պետեղես անպատճառ «Գուսանը»:

Համբոյրներով Քո ԱԻԵՏԻՔ

- (1) Նաժահի շրջմանիչ:
- (2) Աւանմեհաբոյ, 1922, էջ 8:
- (3) Անշ, էջ 9:
- (4) Անշ, էջ 24:
- (5) Տարբերակը, փոփոխութիւնը:
- (6) Անշ, էջ 25:

30

14 մարտի. [1922, Վենետիկ]

Սիրելի Սիմօն,

Ուղղակի ձանձրացրի քեզ, անվերջ ուղղումներով ու յանելումներով. բայց, սիրելիս, մեղաւոր չեմ. մի քանի օրայ մէջ գրել էի Միերը, եւ մօտս չմնաց որ դիտէի: Բայց անշուշտ այս անգամ վերջինն է:

Ք. Պատկանեանի ուսումնասիրութեան մէջ տեսայ Միերի ծնունդի պատմութիւնը, շատ հաւանեցի, եւ իսկոյն մշակեցի. ու սիմվօլ (1) շինեցի. ինդրում եմ առանձին գրքոյկը շինելուս պօժմը սկսի՛ր այդպէս. (Ելաւ Դաւիթ...), ուղղումները դիւրին են, կանես. շահ ուրախ կը լինէի, եթէ մի սըրբագրութիւնը ինձ ուղարկէիր:

Մի քանի օրիւր յայտնելով, թէ այս ուղղումներս ու յանելումներս կարող են տեխնիկապէս (2) յաջողուել — մտնել (3) շարւածքի մէջ. կարծում եմ, որ դեռ չես սկսել գրքոյկը տպել:

Համբոյրներով Քո ԱԻԵՏԻՔ:

Ա. գլուխ:

Ելաւ Դաւիթ՝ իշխան Սասմայ՝ (4)
 Կըռի գնաց Մըսրայ վըրայ.
 Նրա յետնուց Խանդութ-տիկին
 Լըրումն առաւ,
 Աշխարհ բերաւ
 Մի մանչ պաւակ — տէր ժառանգին
 Սասմայ գահին:
 Ջոջենց Տան պետեր, —
 Բերի Բորոս ու Ճոռ-Վիրապ,
 Չինով-Օհան ու Ջոջ-Վերգոն,

Ժողովեցան եկան.

Մանկան բալուպի քինդերու փոխան

Գութանի շղթան փաթեցին վրան

Ու ասին իրար Ջոզենց երեցներ.

— «Թէ կտարեց տղան կապանքն երկաթին,

էն ապառ կուզէ ու կըրնայ ձեռնել.

էն մեր ցեղէն է. — աօրւծ հօր որդին»:

Համբաւը տարան կրոնի դաշտ Դաւթին,

Ու պատգամ դըրկեց Դաւիթ Խանդութին

Սիրու բարեւով.

— «Իմ ական-արեգակ հորըս անունով

Կանչեցէ՛ք Մըհեր

Անդրանիկ որդուս.

էն պիտի դառնայ ողջ աշխարհի տէր.

Ով երկաթն իջիւէ — իջիւանն է մարդուս»:

Ու եղաւ որ

Չար օրն հասաւ.—

Մեռաւ Դաւիթ՝ Սասմայ առիւծ (5)

Մեռաւ Խանդութ...

շարունակել

Ուղղումներ:

— Սասմայ սեպ սարերն ռոտներն անդունդին (6)

Գլուխն երկնքին երկնուց ամպերին.

(աւելնորդ է կրկնել ռոտներն անդունդին, դիւրին չի կար-
դացում, մէկը բաւական է).

— Մհեր նորէն լախտը փարտեց (7)

Ծայրը լախտին դիպաւ պատին,

Ժէոռաւ քարէն մի փերթ փրթաւ,

Փրթաւ զնա՛ց,

Կերթա՛յ, կերթա՛յ հուր-յախտեան.

— Ուժով-զօրով զնաց Մհեր (8)

եկաւ հասաւ Վանայ ծովին,

Տոսպան-Բլուր.

Ազուաւ-Քար բացեց մէկէն...

(1) Լայր. ճիւղերը անհիշ:

(2) Նիւթապէս, շարունակել տեսակէտից:

(3) Գուշէ ճօտցնէք:

(4) Այս տողից սկսած մինչև «Ջարմ օրն հասաւ» չկայ 1922 թ. առանձնատիպում:

(5) 1922 թ. առանձնատիպն սխալում է այս տողով, ուստի՝ յանելման սկզբից մինչև
այստեղ չի մտել ուղղորդի մէջ:

(6) Առանձնատիպ, էջ 8, տող 8-ձ, ուղղումը կատարուել է:

(7) Անդ, էջ 28-29. ուղղումը կատարուել է:

(8) Անդ, էջ 40, «Ուժով, զօրով», «ծովուն», «Ազուա ու Քար»:

31

4 ապրիլի 1922, Վենետիկ (1)

Սիրելի Սիմօն, երէկ ստացայ նամակդ, այսօր «Արեգը» —, շա՛տ եմ
ցաւում, որ Միերի մէջ մի կարեւոր բաց-թողում կայ, ինչպէս է եղել, չգիտեմ.
բոլորովին վերջում —

... Ռամկոսթին բերեմ (2)
Ռամկի իրատունը
նա նահատակիմ
Մէջ էդ սուրբ կըռփնս:
Պատգամ տաւ Ասամայ Միեր:

Եթէ հնար է, դնես գրքոյկի մէջ. չեղաւ, չեղա՛ւ, գլուխդ ողջ լինի:
Հնորիակալութիւն Դուրեանի իմամար (3)... Խեղճ եղբորդ նւիրած տո-
ղերը կինս եւ ես լացով կարդացինք: Կաշխատեմ մի բան ուղարկել. թէ եւ շա՛տ
եւ վբաղւած եմ, եւ ջղային, եւ հիւանդ՝ այս ջրոտ քաղաքը ոսկրացաւ տեց,
մի շաբաթ է՝ չէի կարող քայլել. յոյսս գարնան եւ ծովի վրայ է. մի հնար լինի
Վիեննա փոխկինք, գոնէ աշնանը, Սեպտեմբերին. — ամառը այստեղ ծովից
օգտուեմ: «Արեգը» սիրով ընդունւած է ամէնուրեք. ստացայ նամակներդ. աշ-
խատի՛ր գրողներ գտնել. Ըանթը կարծեմ Փարիզ է. թո՛ղ շանթէ եւ շանթարկէ:

Համբոյրներով Քո ԱԻԵՏԻՔ

(1) Տարեթիւը՝ փոստի կնիքն է:
(2) Առանձնատիպ, էջ 53, բայց նամակում առաջարկուող վերջին երեք տողերը չկան:
(3) «Պնտրոս Դուրեան» Ս. Յակոբեանի ուսումնասիրութիւնն է, 1922 թ.:

32

16 ապրիլի 1922, Վենետիկ

Սիրելի Սիմօն,

Հնորիակուր Ջատիկդ. այս Ջատիկը սիրտս լցրել է անսահման տխրու-
թեամբ... Հայ ժողովուրդը. խեղճ, մերկ, քաղցած, հիւանդ. եռանդ չի թող-
նում ո՛չ վբաղւելու, ո՛չ մի բանի սիրով ձեռք գարկելու. երբեմն մտածում ես,
ո՞ւմ համար գրել...

Երէկ ստացայ «Միերը». իսկապէս շա՛տ լաւ երկ է թէ ժամանակակից
եւ թէ յաւերժական, հանրամարդկային ոգով եւ ազգային կոյրփտով. նոյնիսկ
Ս. Ղապարի մամռոտած (1) վարդապետները ոգեւորեցան. տեսնենք մամուլը
ի՞նչ պիտի շաղակրատէ. յամէնայն դէպս ուղարկի՛ր թերթերին, չըմոռանաս
եւ «Երկրին» եւ «Առաւօտին», միւսները գիտես:

Ցաւում եմ, որ մի երկու սխալներ կան, եւ մանաւանդ շատ ուղղումներ

եմ արել, յանգերի, չափերի նկատմամբ, եւ տեղ-տեղ էլ ակելացրել եմ. — այս բոլորը մնում է ք. տպագրութեան համար. յոյս ունիմ, որ շուտով կ'սպառուի. Բալկանի երկրներում, Պօլիս, մանաւանդ Ամերիկա:

Հնորիակալութիւն ջերմ վերաբերմունքից համար «Աշնան ծաղիկներս» մասին: Կուպենայի գրէիր թէ ո՞ր երգերը չէիր հաւանել. հետաքրքիր է:

Կարծում էի թէ կարող էի նոր նիւթ ուզարկել, բայց չկարողացայ, որովհետեւ երբէք չեմ վրադել. մեկամաղձի շրջան եմ ապրում: Հատ բաներ ունիմ գրելու, մեծ եւ փոքր, բայց սիրտ չկայ. «Ուստայ Կարօս» թէեւ վերջացած է, բայց նորէն վերջացած չէ, մի քանի ամսայ դեռ կարօտ է: Չգիտեմ սրանից յետոյ ի՞նչ չափով պիտի աշխատակցեմ. մայիսի (2) ամիսի համար այս կտոր-բրդով բաներն են, յունիսի համար կողարկեմ «Վալարոսը» (յարութիւն առած, մահի պրօբլէմը), յետոյ չգիտեմ, պատրաստի բան չունիմ, ամէն ինչ սրբագրութեան կարօտ է, մշակման: Գրածներիցս բացարձակ գոն չեմ. բայց չեմ համեմատում ուրիշների հետ. նրանցն էլ կատարեալ չէ. վերջապէս:

Հ. Ներսէս Ակիսեանը դեռ այստեղ է, շա՛տ պատմեց քո մասին. լաւ մարդ է, լուրջ է, գիտուն է եւ համեստ. մտածում եմ Վիեննա տեղափոխել. չես գրում դրա առթիւ. չեմ խանգարի քեզ. իրար կը լրացնենք:

Հայաստան ուղարկի՛ր մի քանի հատ «Միեր»: Բերլին, Փարիզ էլ կը ծախի:

Կարոցի (Մուրատ-Ռաֆայէլեան) անունով «Արեգ» ղրկիր առաջին համարից. ինձ ասացին, փողը հէնց վաղը միւս օրը կը ղրկեն, (6 ամսայ համար): Ճենովայի Ժողովից (3) խելքդ ի՞նչ է կտրում. — ես յոյս չունիմ. ես առիասարակ միշտ յոյս չտածող մարդ եմ:

Բարեւներով համբոյրներով
Քո ԱԻԵՏԻՔ:

Ժամանակ ունենայիր՝ մէկ գրէիր «Միերի» պակասաւոր կողմերը կառուցածքի, տեխնիկի կողմից. ուրիշի աչքը ակելի առարկայօրէն կը դիտէ:

Գրում ես թէ «առաջին երեսի (4) վրայ դրելիք բան». պէտք չէ որ միշտ առաջին տեղը ինձ տաս. ուրիշները կը խոռվեն. իսկ ինձ համար — միեւնոյն է:

Անիի «աղջկայ ամրոցը» (մոռացել եմ անունը) (Ուստայ Կարօից) մի՞թէ միտք չունիս հրատարակելու:

ԱԻԵՏԻՔ:

(1) Այս բառից յստակ են մամ...-ւած: Յամենայնդէպս, վերաւորական է:

(2) Հաւանաբար վրիպակ, փոխանակ մայիս:

(3) Ճենովայի (Բուսլիա) խորհրդատուով տեղի ունեցաւ 1922 թ. Ապրիլի 10ից Մայիսի 18, Եւրոպայի տնտեսական վերակառուցման նպատակով. սպարդիւն:

(4) «Արեգ» հանգչաբ:

Սիրելի Սիմօն,

Նամակդ ստայ. շտապում եմ պատասխանել: «Միերը» իմ վրաս չեմ առնում, ո՞վ պիտի հոգայ դրա ծախելն ու հոգսերը. ուրեմն այսպէս վերջացնենք.

գրքերը կը ծախես, բոլոր ծախսերը տպագրական, փոստ, կորուստ, դուրս կը գաս, իմ հաշիւն դուրս կը գաս բոլոր նւէրները, եւ հայրենիք ուղարկելիք 100 օրինակը, մնացածը, երեւի, կը ստանամ, կամ մի բան կանենք. նայելով օրին, գուցէ կը ծախենք II տիպի համար:

«Արեգից» հոնօրար (1) չեմ ուզում ստանալ, կամ արդէն բաւական գիրք ստացել եմ, բացարձակ կերպով հրաժարում եմ հօնօրարից (1):

Իմ վիճենա գալն էլ բղխում է մէնակութիւնից, եւ այստեղ շա՛տ եւ շա՛տ մէնակ եմ, իկի ծանօթներ էլ չունիմ, ուր մնաց ընկեր. վարդապետները 1/2 մարդիկ են էլ չեն, խօսքը մեր մէջը. թէեւ երեխայի համար կարծեմ այստեղ լաւ է, մոլորած եմ այդ խնդրում: Շա՛տ պզեւ եմ եւրոպայից, կուպէի հայրենիք լինել. բայց ամէն բերան ինձ խորհուրդ է տալիս դեռ մնալ, նոյնիսկ Յ. Թումանեանը. ամէն Հայաստանցի նախանձում է մեզ եւ ճգնում է իրեն դուրս նետել. հաց չկայ, հագուստ չկայ, ջրային վիճակ. շուրջը — պատպերիկ (2)... յամէնայն դէպս երեխայ չի կարելի տանել, գնալ — մէնակ գնալ (3). ա՛խ, ծերացայ հայրենիքից դուրս... Տեսնենք մինչեւ աշուն. իսկ դու ո՞ր եւ ուզում գնալ — հայրենիք թէ, օրինակի համար, Ամերիկա (4):

Ես էլ կարծում եմ, որ «Արեգի» գործը դժուար է. մի՞թէ օգնողներ չեղան. սա ի՞նչ վիճակ է. հապա ի՞նչ պիտի լինի. գոնէ 6 թիւ հրատարակի՛ր, յետոյ — տեսնենք. եղաւ-եղաւ, չեղաւ-չեղաւ:

Շա՛տ կուպէի, որ իսկապէս միասին լինէինք, խօսէինք «Միերի» մասին. մի լինէիր տեսնէիր, թէ ի՞նչ յաջող սրբագրութիւններ ունիմ արած. հիմնական ոչինչ չեմ փոխել, բայց նոր տողեր, վանկերի, յանգերի կանոնադրութիւն, ուղղակի դարձել է անխոցելի գործ. մի քանի տեղ փոքրիկ յաւելումներ. որ նմուշի համար ուղարկում եմ (5):

«Միերի» ծնունդը կուզեմ ղնել, նախ եւ առաջ, որ բնագիրն էլ է այդպէս. եւ վերջապէս գեղեցիկ է. մի տող ամբողջ կասկածող կը փարատէ, դա էլ կը գրե՛մ, կը նայես:

Իսկ նահատակութիւնը. Գարեգին Սարկաւազի (6) «Սասմայ Ծռերի» մէջ կայ, որ Միեր պիտի մարտիրոսաի. սակայն սա չէ կարելորդ, այլ այս, որ Միերի յաղթանակով պէտք է որ սօցիալական կոհիւր վերանայ, դասակարգները ջընջընին, ու գայ ապաղաս մի հասարակութիւն. իսկ Միերը սօցիալական կռիւ սիմբօլն է, քանի նա ողջ է, ուրեմն կոհիւն էլ ողջ պիտի մնայ, ինչպէս որ նա մինչեւ հիմա ողջ է, բայց կաշկանդած, ո՛չ մեռած, սպասում է ժողովրդի գիտակցութեան պարթնումին, — նրանից յետոյ ի՞նչ — պիտի նա ողջ մնայ. էլ ի՞նչ կռիւ կայ. այդ մտքով եւ որոշեցի պահել. եթէ մերժեմ էլ, բան չի կորչի. թէ եւ լաւ է, որ ժողովրդի փորձած իմաստութիւնը չխաթարի, չեղծի: Այսքան:

— Խեղճ Տէրեանի (7) մասին շա՛տ բան չգիտեմ, բայց գիտցածս կը գրեմ այս օրերս:

— Ղապարոսի յարութիւնը (8) հիմիկ-հիմակ վիժեց. գրեցի, բայց տեսայ, որ շա՛տ նիւթեր պիտի նայեմ ու կարդամ. հրէական պատմութիւն եւ այլն, եւ այլն. թողեցի առայժմ. ձեռքիս տակ բաներ չունիմ, ինչ որ գրելու եմ, ուսումնասիրութեան կարօտ բաներ են. բացի այդ ուզում եմ «Ուստայ Կարօն» վերջնականապէս կաղապարել, որ այս տարի վերջակէտ ղնեմ:

Ի դէպ Ա. Ղուկասեանին (9) որ նիւրեւ էի «Աշնան ծաղիկները» ինձ գրեց թէ, եթէ պատրաստի նիւթեր ունիմ՝ տրամադիր է հրատարակելու. դրանով ոգեւորած ուզում եմ մի-երկու բան հրատարակել... այդ էլ շա՛տ ժամանակ է խլում. եթէ արձակներս տպեմ, պիտի նորից սրբագրեմ. իմ հին գրածներիս ոճին, լեզվին չեմ հաւանում, տեղ-տեղ ճապաղ են. եթէ «Երգ[եր ու]

վերքերը» տպեմ, նորից պիտի սրբագրեմ, շա՛տ գործ ունիմ. դրա վրայ անելացաւ մի ծանր ու յիմար աշխատանք. Ա. Ղազարի պաշտպանութիւնը ընդդէմ իր ներքին եւ արտաքին թշնամիների. չկարողացայ անտարբեր մնալ, սիրտս ցաւում էր այդ ամէնը տեսնելով. արիկայ մարդ է Սիւմ. Երեմեանը, մեծամիտ, եւ կործանարար... որքան էլ որ վանքը թերութիւններ ունենայ, սակայն պիտի չվարկաբեկել, եւ վերջապէս ահագին ազգային հարստութիւն կայ, ձեռագիրներ, գիրքեր... պէտք չէ լքել. պահել մինչեւ հայ ժողովուրդը կը կապուրտի եւ մի բան կանէ...

Մրանջ գրում եմ ցոյց տալու համար, որ «Վրեգին» այսուհետ շա՛տ բան չեմ կարող տալ. բայց կը տամ, երկրորդական տեղ եմ գրաւելու սրանից յետոյ. մտածում եմ մօտ օրերս «Ուստկարօյից» մի համով գլուխ ուղարկեմ քեզ. սիրային, իր առաջին տեսակցութիւնը իր սիրած կնոջ հետ. լաւն է:

Ստացայ պ. Հաբեղեանի տետրակը. շնորհակայութիւններս արա, նրան «Աշնան ծաղիկները» կը դրկեմ. ինչպէս եւ Չաւղարեանին:

Սիրով եւ բարեւներով
Քո ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ամերիկ. «Հայրենիքը» հին հաշուով, բայց առանց հիմա իմ կամքը առնելու տպել է «Մահարիս» (10). վնաս չունի, բայց գոնէ մի օրինակ դեռ ինձ չեն դրկել. սա է խոստութիւնը:

[Յատկումներ «Սասմայ Միեր»ի մէջ, ընդգծումները մերն են:]

Ծնունդի այս տողը.

— Ու հնուց յարգի սուրբ սովորութով
Ժողովեցան եկան Ջոզենց տան մեծեր,
Մանկան բալուրի բինդերու փոխան,
Գութանի...

առաջին տողը կը փրկէ դրութիւնը. ցոյց կուտայ որ սովորութիւն էր, ուրիշ ոչինչ:

- (1) Հեղինակի դրամական վարձատրութիւն:
- (2) Մայր աստիճան ազգաստեփան:
- (3) Նա այսպէս էլ արեց, բայց 1926ին:
- (4) Միման Յակոբեանը ձեկնեց Սով. Հայաստան 1924 թ.:
- (5) Այս նմոյշը սեռ այս նամակի վերջում:
- (6) Գաբեղին Յովսէփեան, տե՛ս 23րդ նամակի 2րդ եռն-ը:
- (7) Բանաստեղծ Վահան Տէրեան:
- (8) Իր մէկ բանաստեղծութիւնը, տե՛ս նամակ 32:
- (9) Արքանամ Ղուկասեան, մեծահարուստ, երեքսպէս օդնել է Աւ. Իսահակեանին, ինչպէս երևում է «Նամակներսից» (Երևան):
- (10) 1922 թ. Մայիսի 23ի նամակում վարդգէս Աւարտեանին դաեղատուել է, որ եթէ խմբագրութիւնը չեմաց տար իՅԱ, սրբագրութիւններ ունէի, աղղումներ:

Գուսանի երգը:

Բարեւ տաւ նստաւ խորձին
 Զարկեց դաշըն պիրկ լարերուն,
 Գովքը երգեց աուր (*) հացին. (*) օրւայ, հանապազորդեայ հացին:

- 1) «Փառք տւէք հացին

 Ի՛սկն ազատութիւն: [1-ին բառից առաջ գծով ջնջել է «Հացն է»:]
- 2) «Գո՛վքն արէք Ռամկին,
 Ռամկի սուրբ գործին,
 Քրտինքով գնած
 Իր արդար հացին:
- 3) «Երգէ՛ք յախտեան
 Ներքողը ցնծին
 Չեր ազատութեան —
 Չեր հըզօր հացին»:

Տեսնում ես ի՞նչ երեք լաւ տուներ են:
 24 էջի վրայ այս սխալը կայ, վերջին տողը.
 Քաշած մի վար, ա՛խտը է՝ Քաշած ի վար:

Միերի կռիւը.

Սասմայ Ծոեր, Ջոշենց պետեր.

.
 Քաղքի մարդիկ, կոտ կտրիճներ
 Գեղջուկ ոամիկ, ու դրկիցներ.
 Հազած կապած պրստ-ճօշան
 Պողպատ կորզակ
 Վերտ ու վահան
 Տէգ ու նիպակ
 Թուր ու աղեղ
 Ագուներուն վիրդ ու վիմակ
 Դուռք տսին եկան մէկտեղ.
 Գէմ Միերին
 Ու ձէ՛նեցին.
 — է՛յ դուն Միեր, դուն արունքտեր,
 Վա՛ր էջ ձիէն, ժամտուն գնա՛,
 Թուր-Հալունին դիր սուրբ շէմին
 Ու քառսուն օր, գիշեր ու ցօր
 Ջոշում արա, լաց որտտա՛,
 Որ ինչ Աստուծ քեզի դարձ տայ
 Խորիուրդներէն չար սատանին.
 Թէ որ կուպես մահ ու սպան,
 Աուրն ահեղ դայտաստանին

Պարտիք մնաս ու պարտապան.
 Կրտի՛ւ կուպես, մեղքը քեզնե՛ղ,
 Էսօր եւ եք
 Կը խառնենք քեզ հապար տարայ
 Մեռելներուն.
 Լոյս-պապերոդ ճամբով գնա՛
 Խելքի արի, ափսո՛ս եւ դուն:
 Մինք կեցաւ անպատասխան,
 Անպատասխան — լեռ անասան.
 Բոլոր մէկէն դառան յետ-յետ
 Բոլոր մէկէն նորէն-նորէն
 Թինդ ու թափով, գոգոռալով
 Ջիւ խոյացան, ու իրենց հետ
 Ամպ ու փոշի, մուշտ ու մղեղ,
 Գոռք տփն, դոռք տփն,
 Կուռ կռուփնին ցըցած անեղ,
 Թռան եկան, եկան հասան
 Մինք պարնեն, Մինք զլեն
 Լմեն, ճմլեն, —
 Մինք քաշեց Թուր-Հապունին,
 Հանց որ կայծակ մէջ մոռք ամպին,
 Կտրեց, թափեց...

Այսպէս շա՛տ տեղեր. մանաւանդ ռիտմի(1) հարցում. շա՛տ գոհ եմ
 մի խօսքով: Գոռք եւ դոռք. միասին ահագին աղմուկ է հանում:

Դիտմամբ զրաբար բառեր եմ դրել, որ ստիլը(2) հինի գոյն ստանայ,
 այդպէս է զրել օրինակ Ռ. Վազնեբը իր Նիբելունգները, եւ ուրիշ լաւ գրող-
 ները, ինչպէս Լօւզֆելլօ, Տենիսօն, Գեօթէ, Ռիքերտ: Լերմօնտովը իր Պեսնիա
 Կոլոշնիկով: եւ այլն. երկար եղաւ:

ԱՌ. ԽԱՍՀԱԿԵԱՆ

(Շար. 7)

(1) Ճրանք. *rythme*, *հշտոյթ*:

(2) Ճրանք. *style*, *ոճ*:

ՀՈՅՍ ՏԵՍԱՆ

ՀՈՅՍ ՏԵՍԱՆ

ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՑ

ԱԴԱՄԻ ԳԻՐՔԸ

(Վ է պ)

- «Ռսկեռառ» հրատարակչատուն, Նիւ Եորք, 1983, 255 էջ:

ՄՈՎՍԷՍ ԳԶԱՔՃԵԱՆ

ԿԵՌԱՍԻ ԺԱՄԱՆԱԿԵՆ ՎԵՐՋ ԵՒ ԱՌՍՋ

(Պատմուածքներ)

- Փարիզ, 1983, 174 էջ:

ԳԷՈՐԳ ԱՃԵՄԵԱՆ

ՅԱՐԴԳՈՂԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ

(Վ է պ)

- Տպարան «Ալթափրես», Պէյրոսք, 1983, 528 էջ:

ԼԻԲԱՆԱՆ

Հատավանա 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավանա 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 المدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزنجيان
 PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN
 Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒՆԵՍԻ
 Խմբագիր
 ԳՕԴՈՍ ՍՆԱԳԵԱՆ
 Խմբագրության անդամներ
 ՅԱՐՈՒԹԻՆ ԳԷՐԳԷՐԵԱՆ
 ՍԱՐԳԻՍ ԿՐԱՎՈՍԵԱՆ
 Վարչական պատասխանատու
 ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ
 B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
 Tel. 296898